



21-րդ դար

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

6 (64)

ԵՐԵՎԱՆ

2015

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից

6 (64), 2015

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ալեքսանդր Գասպարիշվիլի

Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական լայնախառն լրատվական կենտրոնի լաբորատորիայի վարիչ, փ.գ.թ.
(Մոսկվա, ՌԴ)

Ալեքսանդր Կորնիլով

Նիժնի Նովգորոդի Ն.Ք. Լոբաչևսկու անվան պետական համալսարանի արտասահմանյան տարածաշրջանագիտության և տեղային պատմության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր
(Նիժնի Նովգորոդ, ՌԴ)

Աշոտ Թավադյան

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Արամ Սաֆարյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

Արթուր Աթանեսյան

ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, ք.գ.դ.

Բաբկեն Վարդանյան

«Հայք հաստատություն» հ/կ տնօրեն, ՀՀ պաշտպանության նախարարի ավագ խորհրդական
Գագիկ Հարությունյան (համակարգող)

«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Զավեն Եկավյան

Դոկտոր, պրոֆեսոր (Լիսաբոն, Պորտուգալիա)

Էդուարդ Լ. Դանիելյան

«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ. Կարապետյան

Տնտեսագիտության դոկտոր (Մոսկվա, ՌԴ)

Հրանուշ Հակոբյան

ՀՀ Սփյուռքի նախարար, ի.գ.դ.

Միհրան Դաբաղ

Դոկտոր, պրոֆեսոր, Ռուրի համալսարանի պատմության ֆակուլտետի նախնական Սփյուռքի և Ցեղասպանության ինստիտուտի տնօրեն (Բոխում, Գերմանիա)

Մուշեղ Լալայան

ՀՀ Կ փոխնախագահ

Մամվել Մանուկյան

IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.

Մելրան Օհանյան

ՀՀ Պաշտպանության նախարար, գեներալ-գնդապետ

Մերգել Գրինյան

Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, տ.գ.դ. (Մոսկվա, ՌԴ)

Վահագն Ազյան

«Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ-խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Աթոյան

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային անվտանգության հետազոտություններ» ծրագրի տնօրեն, տ.գ.թ.

Վարդան Հարությունյան

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ վարչության նախագահ-գլխավոր տնօրեն, տ.գ.թ.

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Թիվ 6 (64), 2015թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

Գլխավոր խմբագիր

Գագիկ Հարությունյան

Պատասխանատու

խմբագիր

Խոնարհիկ

Քարատուղլանյան

Պատասխանատու

քարտուղար

Լուսինե Բաղրամյան

Աննա Ժամակոչյան

Արեստակես Սիմավորյան

Էդուարդ Դանիելյան

Վահագն Ազյան

Վահրամ Հովյան

Վարդան Աթոյան

Անուշավան Բարսեղյան

Ադրբեջանական քաղաքականությունը

փորձագիտական տիրույթում 5

Աննա Կարասյետյան

Տարածքային խնդիրների ընկալման

փոխակերպումները Ղարաբաղյան հակամարտության

բանակցային գործընթացում 26

Ստեփան Հասան-Ջալալյան

Քաղաքական գիտակցության և վարքագծի

մշակույթի առանձնահատկություններն

Արցախի Հանրապետությունում 47

Մերոբ Սուջյան

Սեցեսիոնիզմը ժամանակակից աշխարհում 59

Ջարուհի Բարուխանյան

Հայաստանի Հանրապետության իմիջը և

հանրային դիվանագիտությունը 71

Ադասի Թավադյան

Դրամավարկային քաղաքականությունը

տնտեսական անվտանգության տեսանկյունից 80

Գայանե Հարությունյան

ԵՏՄ շրջանակներում դրամավարկային ոլորտի

հնարավոր զարգացումների ուրվագիծ 89

Ստալ Սարգսյան

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը

Հայաստան-Սփյուռք գործակցության հոլովությունում 106

Հուշագիր հեղինակին 123

ԱՂԻՔԵԶԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ

Անուշավան Բարսեղյան՝

Բանալի բառեր՝ Ադրբեջանի ուղեղային կենտրոններ, Ադրբեջանի նախագահին կից ոչ կառավարական կազմակերպությունների աջակցման պետական խորհուրդ, ԱՀ նախագահին առընթեր Ռազմավարական հետազոտությունների կենտրոն, Տնտեսական բարեփոխումների գիտահետազոտական ինստիտուտ:

Վերլուծական կենտրոնների կամ, ինչպես ընդունված է անվանել՝ «ուղեղային կենտրոնների» (ՈւԿ) առաջացման և զարգացման միտումներն անմիջականորեն կապված են երկրի ներքին քաղաքական և տնտեսական կառուցվածքի, ներքաղաքական կայունության և հասարակական պահանջի հետ: Նախկին խորհրդային հանրապետություններում այդպիսի կենտրոնների ձևավորման գործում մեծ է արևմտյան կազմակերպությունների ֆինանսական դերակատարումը, ինչն էլ, հիմնականում, որոշիչ է դառնում այդ կառույցների ստեղծման և գործունեության առաջնային ուղղությունների ընտրության հարցերում:

Ադրբեջանում, էլնելով ներքին օրենսդրության պահանջներից, ոչ պետական վերլուծական կենտրոնները հիմնականում գրանցվում են որպես ոչ կառավարական հասարակական կազմակերպություններ: 1994-1996թթ. գրանցվել են առաջին նմանատիպ կենտրոնները, 2001-ից նկատվում են գործընթացի ակտիվացման միտումներ, ինչի արդյունքում գրանցված ՀԿ-ների (այդ թվում՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական, ռազմական և բնապահպանական հետազոտություններով զբաղվող կենտրոնների) թիվն Ադրբեջանում 2006թ. հասնում է բարձրակետին՝ 548-ի¹:

Ոչ պետական վերլուծական կենտրոնների գործունեության նման ակտիվացումը և արտերկրյա դրամաշնորհների միջոցով ուղղորդվող հետազո-

¹ «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի փորձագետ-խորհրդական:

¹ AZƏRBAYCANDA ARAŞDIRMA VƏ BEYİN MƏRKƏZLƏRİ. FƏRHAD MƏMMƏDOV, TAHİRƏ AL-LAHYAROVA (Ադրբեջանի վերլուծական կենտրոնները), Bakı 2013, էջ 180:

տական ուղղությունները ստիպում են Ադրբեջանի ղեկավարությանը մշակել և իրականացնել փորձագիտական շրջանակների նկատմամբ նոր քաղաքականություն: Եվ եթե մինչ 2007թ. Ադրբեջանում գործող ՈւԿ-ները հիմնականում բախվում էին ընդհանուր դժվարությունների, որոնք պայմանավորված էին երկրի առանձնահատկություններով, ապա 2007թ. իրավիճակը սկսում է փոխվել:

2007թ. ԱՀ նախագահի կողմից հաստատվում է Ադրբեջանի Հանրապետության ոչ կառավարական կազմակերպությունների պետական աջակցման հայեցակարգը¹, այնուհետև ստեղծվում են Ադրբեջանի նախագահին կից ոչ կառավարական կազմակերպությունների աջակցման պետական խորհուրդը² և առաջին պետական ՈւԿ-ները՝ ԱՀ նախագահին առընթեր Ռազմավարական հետազոտությունների կենտրոնը (*SAM*) և ԱՀ էկոնոմիկայի և արդյունաբերության նախարարության Տնտեսական բարեփոխումների գիտահետազոտական ինստիտուտը (հիմնադրվել է 1964թ. և ներկա ձևով վերակազմավորվել 2007թ.):

ԱՀ իշխանությունները երկրի ներսում գործող հետազոտական-փորձագիտական կենտրոնները վերահսկելու, ինչպես նաև դրանք քարոզչական նպատակներով օգտագործելու համար, մի կողմից, օրենսդրական փոփոխությունների միջոցով խոչընդոտներ են հարուցում ՀԿ-ների կողմից արտերկրյա դրամաշնորհներ ստանալու ճանապարհին, մյուս կողմից՝ վերոնշյալ խորհրդի մրցույթների միջոցով առաջարկում են պետական ֆինանսավորում: Ամեն ինչ արվում է կենտրոնների ֆինանսական կախվածությունը պետությունից մեծացնելու համար:


Քաղաքացիական հասարակության զարգացումը խթանելու անվան տակ, «ՀԿ-ների մասին օրենքում» պարբերաբար իրականացվող փոփոխությունների համաձայն, արտերկրյա այն կազմակերպությունները, որոնք ցանկություն կհայտնեն Ադրբեջանի տարածքում դրամաշնորհային մրցույթներ անցկացնել, նախապես պետք է թույլտվություն ստանան ԱՀ պատկան մար-

¹ Распоряжение президента Азербайджанской Республики от 27 июля 2007 года №2288 Об утверждении Концепции государственной поддержки неправительственных организаций Азербайджанской Республики, http://base.spinform.ru/show_doc.fwx?rgn=20679

² Указ президента Азербайджанской Республики О создании Совета государственной поддержки неправительственных организаций при президенте Азербайджанской Республики, http://www.icnl.org/research/library/files/Azerbaijan/Decree_on_CSSN_updated_RUS.pdf

միններից, որոնք կորոշեն կոնկրետ մրցույթի հայտարարման նպատակահարմարությունը: Սա հաճախ հիմք է հանդիսանում արտերկրյա դրամաշնորհները չհաստատելու համար: Այն ՀԿ-ները, որոնք, այնուամենայնիվ, կստանան արտերկրյա ֆինանսավորում, պարտավոր են ապահովել առավելագույն թափանցիկություն և որոշակի պարբերականությամբ ֆինանսական հաշվետվություն ներկայացնել պետական մարմիններին:

2007 թվականից սկսած՝ ՈւԿ-ների արտերկրյա ֆինանսական հոսքերի կրճատմանն ուղղված հնգամյա քաղաքականությունից հետո նույնիսկ կենտրոնների 2012թ. ֆինանսավորման համամասնությունը խոսում է արտերկրյա դրամաշնորհների գերակայության մասին¹:



Ինչպես է պատկերը փոխակերպվել 2014թ. մի շարք իրավապաշտպանների ձերբակալությունից, միջազգային կազմակերպությունների աշխատանքներին ակնհայտորեն խոչընդոտելուց և որոշ տեղական ՀԿ-ների փակվելուց հետո՝ դեռ պարզ չէ:

2014 թվականից ՀԿ-ներն արհեստական դժվարությունների են հանդիպում նույնիսկ նոտարական գրասենյակներում, որտեղ պետք է հաստատվեն դրամաշնորհային պայմանագրերի թարգմանությունները: Որոշ բանկեր հրաժարվում են անգամ ՀԿ-ների համար հաշիվներ բացել:

¹Դիագրամը կազմվել է «AZƏRBAYCANDA ARAŞDIRMA VƏ BEYİN MƏRKƏZLƏRİ. FƏRHAD MƏMMƏDOV, TAHİRƏ ALLAHYAROVA» (Ադրբեջանի վերլուծական կենտրոնները), Bakı 2013, գրքում բերված տվյալների հիման վրա:

Հաշվի առնելով Ադրբեջանի վերոհիշյալ նպատակային քաղաքականության մեջ ԱՀ նախագահին կից Ոչ կառավարական կազմակերպությունների աջակցման պետական խորհրդի առանցքային դերակատարումը՝ առավել մանրամասն ներկայացնենք այն:

ԱՀ նախագահին կից Ոչ կառավարական կազմակերպությունների աջակցման պետական խորհուրդ

Խորհուրդը ստեղծվել է 2007թ. դեկտեմբերի 13-ին ԱՀ նախագահի հրամանագրով: Այն, որպես հատուկ մարմին, համակարգում է ոչ կառավարական կազմակերպությունների հետ պետության փոխգործակցությունը: Գտնվում է Բաքվում, պաշտոնական կայքը՝ www.cssn.gov.az: Կառույցի նախագահն է ԱՀ Միլի մեջլիսի պատգամավոր Ազալ Գուլիևը, կառավարման խորհրդի բոլոր 11 անդամներին (որոնց թվում 8-ը՝ ՀԿ-ների, 3-ը՝ պետական մարմինների ներկայացուցիչներ) նշանակում է ԱՀ նախագահը՝ 4 տարի ժամկետով:

Ֆորմալ առումով խորհուրդը կոչված է հասարակության մեջ ձևավորել փոխհարաբերությունների նոր մոդել, արդիականացնել քաղաքացիական հասարակության ինստիտուտները, նպաստել քաղաքացիական նախաձեռնությունների աճին, խրախուսել ՀԿ-ների գործունեությունն ազգային շահերի պաշտպանության ոլորտում, ֆինանսավորել պետության և հասարակության համար կարևոր ծրագրեր և նախագծեր:

Հիմնական նպատակներն են՝ արտերկրում և միջազգային կազմակերպություններում Լեռնային Ղարաբաղի հակամարտության առնչությամբ Ադրբեջանի «արդարացի» դիրքորոշման քարոզչության իրականացումը, «ադրբեջանիզմի» գաղափարախոսության տարածումը, միջազգային հանրությանն Ադրբեջանի ինտեգրման աջակցումը, արտերկրում և միջազգային կազմակերպություններում գործող ՀԿ-ների հետ համագործակցության խորացումը¹:

Խորհրդի նախագահ Ա.Գուլիևի ներկայացրած 2014թ. հաշվետվության համաձայն, հաշվետու տարում իրականացվել է 386 նախագիծ, այդ թվում՝ 640 թրեյնինգ, 287 սեմինար, տպագրվել է 23 գիրք, նկարահանվել 8 ֆիլմ,

¹ Указ президента Азербайджанской Республики О создании Совета государственной поддержки неправительственных организаций при президенте Азербайджанской Республики, http://www.icnl.org/research/library/files/Azerbaijan/Decree_on_CSSN_updated_RUS.pdf

ստեղծվել 5 կայք՝ ընդհանուր առմամբ ծախսելով մոտ \$3.75 մլն (ադրբեջանական չԿ-ների կախվածությունն արտերկրյա ֆինանսավորումից թուլացնելու նպատակով խորհրդի ղեկավարությունը 2014թ. դիմել է ԱՀ կառավարությանը՝ հատկացվող ֆինանսական միջոցները մի քանի անգամ ավելացնելու խնդրանքով): 2008-2014թթ. խորհուրդն իրականացրել է մոտ \$38,4 մլն-ի ծրագրեր¹:

Եվրոպական մի շարք քաղաքների համալսարաններում ստեղծվել են ԼՂ հակամարտությունը ներկայացնող անկյուններ, որոնք տարածում են միակողմանի ադրբեջանամետ տեղեկատվություն հիմնախնդրի պատմության, լուծման ուղիների և հայկական կողմի «ոչ կառուցողական» դիրքորոշման մասին: 2014թ. ընթացքում ադրբեջանական ոչ կառավարական կազմակերպությունների միջոցով 13 երկրներում իրականացվել է 27 նախագիծ, որոնց միջոցով փորձ է արվել ներկայացնել «Խոջալուի ցեղասպանության» մասին ադրբեջանական «ճշմարտությունը»:

2014թ. կառույցի անցկացրած դրամաշնորհային մրցույթի Միջազգային համագործակցություն բաժինը ներառում է հետևյալ կետերը.

1. Հյուսիսային Ամերիկայում և ԵՄ երկրներում Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ կապված հայ-ադրբեջանական միջոցառումների իրականացում:
2. Համագործակցություն ադրբեջանական լոբբինգ իրականացնող արտասահմանյան ոչ կառավարական կազմակերպությունների հետ:
3. Ադրբեջանի վերաբերյալ լրատվության տրամադրում արտերկրյա ԶԼՄ-ին:
4. Լեռնային Ղարաբաղի թեմայով ստեղծված կայքերի թարմացում և թարգմանություններ տարբեր լեզուներով:
5. «Ադրբեջանի դեմ ուղղված ցեղասպանությունների և հայկական ահաբեկչության» թեմայով արտերկրյա լսարանների համար տեսանյութերի և գրաֆիկական նյութերի պատրաստում: Արտասահմանյան ճանաչված մշակութային և արվեստի գործիչների, մարզիկների և այլ ազդեցիկ անձանց մասնակցությամբ այս թեմաներով կարճ հոլովակների և երաժշտական տեսագրությունների պատրաստում օտար լեզուներով:

¹ Обнародован отчет Совета господдержки НПО при президенте Азербайджана за 2014 год, <http://www.1news.az/society/20150122120116349.html>

6. ԼՂ հակամարտության պատմության վերաբերյալ օտար լեզուներով էլեկտրոնային աուդիոգրքերի շտեմարանների ստեղծում, դրանց հարմարեցում և թողարկում շարժական սարքերի (հեռախոս, պլանշետ) համար:
7. ԼՂ հակամարտության և «ադրբեջանցիների դեմ հայերի իրագործած ցեղասպանությունների» ուսումնասիրության նպատակով արտերկրյա հետազոտողների և ուսանողների կրթաթոշակային ծրագրերի իրագործում:
8. Ադրբեջանի միջազգային դիրքերի ուժեղացման նպատակով արտերկրյա ազդեցիկ ԶԼՄ ներկայացուցիչներից, ազատ լրագրողներից և ակտիվ բլոգերներից բաղկացած խմբերի Ադրբեջան այցերի կազմակերպումը ներառող ծրագրերի իրականացում¹:

Խորհուրդն ամեն տարի ֆինանսավորում է օտարերկրյա տասնյակ կազմակերպությունների (2014թ. մոտ 30), որոնց հետ համագործակցության հիմնական ուղղությունների թվում, բացի վերը նշված հարցերից, մտնում է նաև Ադրբեջանը որպես հանդուրժողականության երկիր և միջմշակութային երկխոսության հաջող օրինակ ներկայացնելը (այս համատեքստում հաճախ կազմակերպվում են հանդիպումներ օտարերկրացի ուսանողների և երիտասարդ փորձագետների հետ), ինչպես նաև իսլամաֆոբիայի, քսենոֆոբիայի և ռասիզմի դեմ պայքարը: Վերջին հարցի հրատապությունը բացատրվում է ՌԴ տարածքում ադրբեջանցիների նկատմամբ «ռասիզմի» հաճախակի դրսևորումներով, ինչի դեմ պայքարելու նպատակով խորհուրդը փորձում է համագործակցել ՌԴ քաղաքացիական հասարակության կառույցների հետ:

Միաժամանակ, խորհուրդը փորձում է հնարավորինս փակ պահել իրենց հետ համագործակցող օտարերկրյա կառույցների մասին տեղեկատվությունը՝ առաջին հերթին, հայկական հնարավոր հակազդեցությունից խուսափելու համար:

Խորհրդի միջազգային կապերի ուսումնասիրությունը վկայում է թուրքական կառույցների հետ սերտ համագործակցության մասին: Դրա հիմքում դրված են Հայոց ցեղասպանության ճանաչմանն ուղղված «հայկական քարոզչության» դեմ համատեղ պայքարը, և որպես հակակշիռ՝ «Խոջալուի ցեղա-

¹ www.e-qht.az

սպանությունը» միջազգային հանրությանը ներկայացնելը: Այս նպատակով խորհրդի և Ստամբուլի առևտրային պալատի աշխատանքային խմբին վերապահված է ՀԿ-ների ներգրավվածության ապահովումը:

Արտերկրյա ՀԿ-ների աջակցման ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող Թուրքիայի Եվրասիական տնտեսական համագործակցության ասոցիացան (ԵՏՀԱ, *EkoAvrasya*) նույնպես ակտիվորեն գործում է ադրբեջանական քարոզչական տիրույթում՝ Անկարայում միջազգային գիտաժողովներ կազմակերպելով ԼՂ հակամարտության և «Խոջալուի ցեղասպանության» վերաբերյալ: Նույն ծրագրով ֆինանսավորվում է նաև Թուրքիայի Եվրասիական քաղաքացիական հասարակության համագործակցության ասոցիացիան, որի ղեկավարն է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատգամավոր, ԱԶԿ հիմնադիր անդամ, քաղաքագետ, Թուրքիայի Ազգային անվտանգության ակադեմիայի շրջանավարտ Իսմայիլ Սաֆին:

Փորձագիտական շրջանակների հետ համագործակցության համատեքստում Թուրքիայի Միջազգային հարաբերությունների և ռազմավարական հետազոտությունների կենտրոնի (*TURKSAM*) հետ համատեղ 2014թ. նոյեմբերին Բրյուսելում անցկացվել է լուսանկարների ցուցահանդես «Լարաբադ. օկուպացիայից առաջ և հետո» թեմայով: *TURKSAM*-ը թուրքական խոշոր ուղեղային կենտրոն է՝ հայտնի Թուրքիայի ազգայնական շրջանակների և Թուրքիայի հատուկ ծառայությունների հետ իր կապերով, ինչպես նաև հակահայկական ակտիվ գործունեությամբ. նախագահն է Մինան Օզանը:

Եվրոպական կառույցների հետ համագործակցության շրջանակներում խորհրդի կողմից ֆինանսավորվում են.

1. Ֆրանսիական Միջազգային ռիսկերի վերլուծության և կանխատեսման կենտրոնը (*Centre d'analyse et de prvision des risques internationaux, CAPRI*)
2. Իտալական «*Classis-Project*» և «*Epoke*» ՀԿ-ները
3. Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնևյան կենտրոնը (*DCAF*)
4. Մեծ Բրիտանիայի Բիրմինգհեմի համալսարանի Ռուսաստանի, Եվրոպայի և Եվրասիական ուսումնասիրությունների կենտրոնը (*CRESS*) և Կովկասի ու Կենտրոնական Ասիայի հետազոտական խումբը

5. Բեռլինի ազատ համալսարանը (*Freie Universitet Berlin*)
6. Կանանց իրավունքների պաշտպանության միջազգային լիգան և այլն:

Ուհների դասակարգումը

Ադրբեջանում գործող վերլուծական կենտրոնները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝

1. պետական կենտրոններ,
2. ոչ կառավարական կազմակերպություններ:

Կան նաև կուսակցապատկան վերլուծական կենտրոններ, սակայն, հաշվի առնելով ԱՀ բազմակուսակցական քաղաքական դաշտի կայացածության ցածր մակարդակը, հարկ չենք համարում առանձին անդրադառնալ դրանց:

Ադրբեջանական բուհերից վերլուծական կենտրոններ ունեն ԱՀ նախագահին կից կառավարման ակադեմիան, Բաքվի պետական համալսարանը, Ադրբեջանի պետական տնտեսագիտական համալսարանը և «Կովկաս» համալսարանը, ընդհանուր թվով՝ 8:

Պետական կենտրոններ

Վերլուծական կենտրոններ (բաժիններ, վարչություններ, դեպարտամենտներ) գոյություն ունեն ԱՀ արտաքին գործերի, ֆինանսների, հարկային, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների, աշխատանքի և սոցիալական պաշտպանության, սպորտի և երիտասարդության հարցերով նախարարությունների և Կենտրոնական բանկի կազմում, սակայն դրանց գործառության պարտականությունները սահմանափակվում են նեղ մասնագիտական ոլորտներով և առավելապես ուղղված են նախարարությունների աշխատանքների կազմակերպմանն ու համակարգմանը:

Ներկայացնենք պետական պատկանելություն ունեցող այն կառույցները, որոնք աչքի են ընկնում ուղեղային կենտրոնների չափանիշներին համապատասխան գործունեությամբ:

1. Ադրբեջանի Հանրապետության նախագահին առընթեր Ռազմավարական հետազոտությունների կենտրոն¹

ԱՀ նախագահին առընթեր Ռազմավարական հետազոտությունների կենտրոնը (ՌՀԿ) հիմնադրվել է 2007թ. նոյեմբերի 12-ին ԱՀ նախագահ Ի.Ալիևի հրամանագրով: Այն պետական ոչ առևտրային կազմակերպություն է: Վարչական կենտրոնը գտնվում է Բաքվում: Կայքը՝ www.sam.az (ադրբեջաներեն և անգլերեն լեզուներով), ներկայացված է *Facebook*, *Twitter* սոցիալական ցանցերում և *YouTube*-ում:

ՌՀԿ-ն ստեղծվել է ԱՀ բարձրագույն ղեկավարությանը համաշխարհային քաղաքականության, անվտանգության, պետակաշինության, տարածաշրջանային քաղաքատնտեսական գործընթացների և այլ ոլորտների վերաբերյալ գիտավերլուծական տեղեկատվության, խորհրդատվությունների, կանխատեսումների տրամադրման, ինչպես նաև ԱՀ-ում իրականացվող ռազմավարական հետազոտությունների համակարգման նպատակով: ՌՀԿ գործունեության տարեկան ծրագիրը հաստատվում է ԱՀ նախագահի կողմից:

Կանոնադրության համաձայն՝ ՌՀԿ գործունեության առաջնահերթություններն են.

- Միջազգային քաղաքական հարցերում ռազմավարական խորհրդատվություն իրականացնելու նպատակով նախանշել ԱՀ ռազմավարական շահերն արտաքին և ներքին քաղաքականության մեջ:
- Օտարերկրյա պետությունների հետ ԱՀ ռազմավարական շահերին համապատասխան հարաբերությունների կառուցման և ընդլայնման նպատակով մշակել նոր մոտեցումներ:
- Ապահովել ԱՀ զարգացման ռազմավարության վերլուծությունը նոր գլոբալ մարտահրավերներին համապատասխան (նոր տեխնոլոգիաներ, էներգետիկ անվտանգություն, ահաբեկչություն, միջազգային ֆինանսական և տնտեսական համակարգեր, ժողովրդագրություն, առողջապահություն և այլն):
- Արտերկրում ԱՀ քաղաքական դրական իմիջի ստեղծումն ու ամրապնդումը, այդ թվում ՋԼՄ-ով նյութերի տարածումը:

¹ Կենտրոնի կանոնադրության, կառուցվածքի, գործունեության մասին տեղեկատվությունը վերցված է www.sam.az պաշտոնական կայքից:

- Մշտադիտարկել երկրում և արտերկրում ընթացող քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացումները մշակույթի, կրոնի և դավանանքի հարցերում վերլուծություններ իրականացնելու, դրանցով պայմանավորված հնարավոր փոփոխությունները և ռիսկերը հարևան երկրներում կանխատեսելու նպատակով:
- Ուսումնասիրել տարածաշրջանային հարցերը, հարևան երկրների հետ երկկողմ հարաբերությունները:
- Ուսումնասիրել ԱՀ-ում ժողովրդավարական ինստիտուտների և քաղաքացիական հասարակության հետ կապված իրավիճակը և քաղաքական էլիտայի ձևավորման գործընթացը:
- Ուսումնասիրել ԱՀ իշխանությունների և հասարակության միջև հարաբերությունների փոփոխությունները:
- ԱՀ արտաքին և ներքին քաղաքականության վերաբերյալ բնակչության տարբեր խմբերի տեսակետներին ծանոթանալու համար անցկացնել սոցիոլոգիական հարցումներ:
- Տարբեր քաղաքական հիմնախնդիրների (այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի խնդրի, դրա քաղաքական, տնտեսական և իրավական ասպեկտների) լուծման նպատակով ներկայացնել փորձագիտական առաջարկություններ:
- Ուսումնասիրել միջկրոնական հարաբերությունները ԱՀ-ում և նրա սահմաններից դուրս, տալ փորձագիտական գնահատականներ և կանխատեսումներ:
- Ուսումնասիրել կրոնական և էթնիկ հանդուրժողականության մակարդակը ԱՀ-ում, ադրբեջանական սփյուռքի կյանքի տարբեր ասպեկտները և հանդես գալ համապատասխան առաջարկություններով:
- Պատրաստել նորմատիվ ակտեր և գիտական շրջաբերականներ, ԱՀ արտաքին և ներքին քաղաքական ձեռքբերումների հիման վրա կազմակերպել քարոզչություն:
- Հետազոտական աշխատանքներում և ինովացիոն գործընթացներում ներգրավել երիտասարդներին:

2012թ. մայիսի 31-ին ՌԷԿ տնօրեն է նշանակվել Ֆարհադ Մամեդովը, որը մինչև 2009թ. ԱՀ նախագահի աշխատակազմի քաղաքական վերլուծու-

թյան և տեղեկատվական ապահովման բաժնի աշխատակից էր: Նախկինում կենտրոնը ղեկավարել են Էլիան Նուրիևը (2008-2011թթ., ներկայումս Արտաքին քաղաքականության գերմանական խորհրդի հրավիրված փորձագետ) և Գ.Փաշանյան (2011-2012թթ.՝ որպես ղեկավարի պաշտոնակատար, ներկայումս՝ տնօրենի տեղակալ):

ՌՀԿ աշխատանքներն ի պաշտոնե համակարգում է ԱՀ նախագահի աշխատակազմի քաղաքական վերլուծության և տեղեկատվական ապահովման բաժնի վարիչը: 2014թ. մայիսին նշված պաշտոնը զբաղեցնող Էլնուր Ասլանովը պաշտոնազրկվեց Թուրքիայի գյուլենական շարժման կողմից հավաքագրված լինելու մեղադրանքով: Ի դեպ, վերջինս համարվում է այդ շարժմանը հարող ԱՀ ամենաբարձրաստիճան պաշտոնյան: Թուրքական լրատվամիջոցների համաձայն, Անկարայի կողմից Ադրբեջանին փոխանցված ԱՀ «գյուլենական» պաշտոնյաների ցուցակում, բացի Է.Ասլանովից, նշված է եղել նաև Ֆարիադ Մամեդովի անունը, որին, սակայն, հաջողվեց խուսափել պաշտոնանկությունից:

ՌՀԿ կառուցվածքը.

1. Ներքին քաղաքականության բաժին, ղեկավար՝ փ.գ.թ. Թահիրա Ալլահյարովա:
2. Արտաքին քաղաքականության բաժին, ղեկավար՝ ք.գ.թ. Ռովշան Իբրահիմով:
3. Տնտեսական վերլուծության և գլոբալ խնդիրների բաժին, ղեկավար՝ տ.գ.դ. Վուսալ Քաշիմլի:

ՌՀԿ-ում աշխատում է 19 գիտաշխատող, այդ թվում՝ գիտությունների 3 դոկտոր, 8 թեկնածու:

Կենտրոնը քաղաքականության, պատմության, իրավունքի, միջազգային իրավունքի և միջազգային հարաբերությունների, տնտեսության թեմաներով վերլուծական հոդվածների մրցույթներ է անցկացնում, որոնց մասնակցում են մեծ թվով դիմորդներ աշխարհի մոտ 100 երկրներից:

ՌՀԿ-ն հրատարակում է «AZERBAIJAN FOCUS», «SAM մեկնաբանություններ», «Ռազմավարական վերլուծություն», «SAM արձագանք» պարբերականները: Կենտրոնի փորձագետները դասախոսություններ են կարդում Ադրբեջանի 7 բուհերում:

Կենտրոնում գրքերի հրատարակման ակտիվ ժամանակաշրջանը սկսվում է 2010-ից: Ստորև ներկայացնենք գործունեության ամբողջ ընթացքում հրատարակված առավել ուշագրավ գրքերը, որոնք կազմում են ընդհանուր թվաքանակի մոտ 80%-ը:

1. «Ադրբեջանի քաղաքական կուսակցությունները. ընտրություններ», Թահիրա Ալլահյարովա, Ֆարհադ Մամեդով, Բաքու, 2010թ.:
2. «Հվ. Կովկաս. տարածքային ամբողջականությունը և պայքարն իշխանության համար», Դավիդ Վելիև, ղեկավար՝ Արագ Ասլանլի, թուրքերեն, *QafqazSAM*-ի հետ համատեղ, Անկարա, 2011թ.:
3. «Ռուս-ադրբեջանական հարաբերությունները 20 տարվա ընթացքում», հոդվածների ժողովածու, ռուսերեն, Ռուսաստանի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի (*PIIC*) հետ համատեղ, Բաքու, 2011թ.:
4. «Պարսից ծոցի երկրների համագործակցության խորհուրդ. իրավիճակը և զարգացման հեռանկարները», Գյուլնարա Մամեդովա, Ռամիզ Ռահմանով, ադրբեջաներեն, Բաքու, 2011թ.:
5. «Իրանա-հայկական հարաբերությունները. աշխարհաքաղաքական իրողություններն ընդդեմ քաղաքական նկրտումների», Վուսալ Քաշիմլի, Ջաուր Սիրիև, Ջուլֆիյա Ալևև, ադրբեջաներեն, Բաքու, 2011թ.:
6. «Ադրբեջան-Թուրքիա հարաբերությունները վերջին 20 տարիներին. հաջողություններ և հնարավորություններ», հոդվածների ժողովածու, ադրբեջաներեն, Ադրբեջանի և Թուրքիայի գործարարների միության ֆինանսավորմամբ, Բաքու, 2011թ.:
7. «Ադրբեջան. ճանապարհ դեպի անկախություն», հոդվածների ժողովածու, ռուսերեն, Բաքու, 2012թ.:
8. «Ռուսաստանի և Թուրքիայի դերը Հվ. Կովկասի անվտանգության համակարգում», հոդվածների ժողովածու (հեղինակների թվում է նաև Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի խորհրդի նախագահ Ստեփան Գրիգորյանը), Ռուսաստանի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի (*PIIC*) հետ համատեղ, Բաքու, 2012թ.:
9. «Ադրբեջան-Թուրքիա. բարեկամություն, եղբայրություն և ռազմավարական գործընկերություն», Ջավիդ Վելիև, Ռեզատ Ռեսուլու, Քենան Աս-

լանլի, թուրքերեն, Ադրբեջանի և Թուրքիայի գործարարների միության ֆինանսավորմամբ, Անկարա, 2012թ.:

10. «Ճշմարտությունը Ղարաբաղյան հակամարտության միջերի մասին», Օլեգ Կուզնեցով, ռուսերեն, Մոսկվա, 2013թ.:
11. «Հավաքական հիշողություն. ինչպես են կազմվում, պահպանվում և արտահայտվում հավաքական պատկերացումներն անցյալի մասին», Ռաուֆ Գարաջոզով, ռուսերեն, Բաքու, 2013թ.:
12. «Պատմությունից մինչև մեր օրերը. Թուրքիայում բնակվող ադրբեջանցի թուրքերը», Այգուն Աթար, Սեբահաթին, Շիմսիր, թուրքերեն, Անկարա, 2013թ.:
13. «Կովկասի ծագող աստղը» (Ի.Ալինի մասին է), խմբագրակազմը՝ Հաջրի Erhan-ի ղեկավարությամբ, թուրքերեն, Թուրքիայի Աթաթյուրքի անվան մշակութային կենտրոնի հետ համատեղ, Անկարա, 2013թ.:
14. «Ադրբեջանի հետազոտական և ուղեղային կենտրոնները», Թահիրա Ալլահյարովա, Ֆարիադ Մամեդով, ադրբեջաներեն, Բաքու, 2013թ.:
15. «Զինաստանն ադրբեջանցիների աչքերով», Ֆ.Մամեդով, ռուսերեն, ադրբեջաներեն, Բաքու, 2013թ.:
16. «Հայաստանի տնտեսության վերլուծությունը», ՌՀԿ Տնտեսական վերլուծության և գլոբալ խնդիրների բաժին, ռուսերեն, Բաքու, 2013թ.:
17. «Տնտեսական արդիականացում», Վուսալ Քաշիմլի, ադրբեջաներեն, Բաքու, 2014թ.:

ՌՀԿ-ն համագործակցության հուշագրեր է ստորագրում նմանատիպ արտերկրյա կենտրոնների հետ: Ստորև ներկայացված ցանկը և կենտրոնի անցկացրած միջազգային միջոցառումների համադրությունը վկայում են, որ ոչ բոլոր դեպքերում են կազմված հուշագրերը վերածվում գործնական փոխգործակցության:

1. Թուրքիայի ԱԳՆ Ռազմավարական հետազոտությունների կենտրոն, 2011թ.:
2. Ռուսաստանի ռազմավարական հետազոտությունների կենտրոն (*PHCI*), 2011թ.:
3. Իտալիայի քաղաքական հետազոտությունների միջազգային ինստիտուտ, 2011թ.:

4. Միջազգային կապերի արգենտինական խորհուրդ, 2011թ.:
5. Հունաստանի «Սնծովյան միջազգային հետազոտությունների կենտրոն (ICBSS), 2011թ.:
6. Վարչավայի համալսարանի քաղաքական հետազոտությունների կենտրոն, 2011թ.:
7. «Stratfor» ԱՄՆ հետազոտական կենտրոն, 2011թ.:
8. Իսլամաբադի քաղաքական գիտահետազոտական ինստիտուտ, 2012թ.:
9. Ղազախստանի նախագահին կից Ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2012թ.:
10. Ղրղզստանի Ազգային ինստիտուտ, 2012թ.:
11. Իսլամական համաժողովի «Խոջալու-իրավական վերուծություն» երիտասարդական ֆորում, 2012թ.:
12. Ֆինլանդիայի Ալեքսանդրյան ինստիտուտ, 2012թ.:
13. Միջազգային հետազոտությունների ֆրանսիական ինստիտուտ (IFRI), 2012թ.:
14. Ուկրաինայի նախագահին կից Ռազմավարական հետազոտությունների ազգային ինստիտուտ, 2012թ.:
15. Ռազմավարական և միջազգային հետազոտությունների վրացական ֆոնդ, 2012թ.:
16. Ցեղասպանությունների և զանգվածային սպանությունների միջազգային կանխարգելում, 2012թ.:
17. Ռուսաստանի քաղաքական հետազոտությունների կենտրոն (ИИП-Центра), 2012թ.:
18. Չինաստանի Արդի միջազգային հարաբերությունների ակադեմիա, 2012թ.:
19. Չինաստանի Հասարակական գիտությունների ակադեմիա, 2013թ.:
20. Իրաքի Ռազմավարական հետազոտությունների կենտրոն, 2013թ.:
21. Կորեայի միջազգային տնտեսական քաղաքականության ինստիտուտ, 2013թ.:

Գործընկերներ են հանդիսանում նաև Մեծ Բրիտանիայի Ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը, (IISS), Կոնրադ Ադենաուերի ֆոնդը, Մոսկվայի Քարնեգի կենտրոնը: ՌՀԿ արտերկրյա գործընկերների թիվը հասնում է 35-ի:

Ներկայացված տարեկան հաշվետվությունների համաձայն, կենտրոնի փորձագետների կողմից մեկ տարվա ընթացքում հրապարակվում են 100-ի հասնող վերլուծական տեղեկանքներ, 150-ից ավելի հոդվածներ, իրականացվում են 50-ից ավելի միջոցառումներ (գիտաժողովներ, կլոր սեղաններ, քննարկումներ, մեծ մասը՝ Ադրբեջանում), որոնց մասնակցում են մեծ թվով արտերկրյա փորձագետներ և գիտնականներ, 100-ից ավելի գործուղումներ մոտ 30 երկիր:

Հատկապես կարևորվում է Լատինական Ամերիկայի երկրների ուղեղային կենտրոնների հետ կապերի զարգացումը տեղի հայկական Սփյուռքի ուժեղ դիրքերը թուլացնելու նպատակով: Կարևոր ուղղություններ են նաև Թուրքիան և Բալկանները:

2014թ. անցկացված միջոցառումներից կարելի է առանձնացնել «Ադրբեջան-Կենտրոնական Ասիա. փոխհարաբերություններ, զարգացում, համագործակցություն, ընդհանուր մարտահրավերներ», «Ադրբեջան, Վրաստան, Թուրքիա. եռակողմ տարածաշրջանային քաղաքականությունը և դաշինքի հեռանկարը», «Ադրբեջանա-թուրքական հարաբերությունների քաղաքական և անվտանգային կողմերը», «Ադրբեջան-Թուրքիա. տնտեսական փոխհարաբերությունների ազդեցությունը տարածաշրջանի տնտեսական ապագայի վրա», «Սումգայիթյան իրադարձություններ. պատմական հիշողություն և պատմական պատասխանատվություն», «Ադրբեջանի և Բելառուսի փոխհարաբերությունները» թեմաներով գիտաժողովները, որոնք անցկացվել են Բաքվում և ապահովել բավական ներկայացուցչական մասնակցություն շահագրգիռ երկրների կողմից:

Նույն ժամանակահատվածում արտերկրյա գիտաժողովներ են անցկացվել Թուրքիայում (կազմված է եղել երկու մասից. «ԼՂ հիմնախնդիրը 1828-ից մինչև մեր օրերը. ժողովրդագրական գործընթացներ և վարչական փոփոխություններ» և «Հայաստան-Ադրբեջան, ԼՂ վեճը աշխարհաքաղաքական շահերի համատեքստում», Թուրքիայի Եվրասիական ուսումնասիրությունների կենտրոնի (ԵՈՒԿ, *AVİM*) հետ համատեղ), Պակիստանում («Քաշմիրը և Լեոնային Ղարաբաղը. լուծումների որոնում»), Հունաստանում, Խորվաթիայում, Մոնտենեգրոյում, Գերմանիայում, Չինաստանում, Քուվեյթում և ԱՄԷ-ում:

ՌՀԿ հետազոտությունների հիմնական թեմաներից մեկը հայ-ադրբեջանական հակամարտությունն է: Կարող ենք փաստել, որ այս դեպքում

հետազոտական գործունեությունը բացառապես պայմանավորված է քարոզչական առաջնահերթություններով:

Նշված գործունեությունը ներառում է հետևյալ հինգ ուղղությունները.

1. Հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում. իրականացվում է միջազգային իրավական ակտերի, նմանօրինակ խնդիրների վերաբերյալ փաստաթղթերի փորձաքննություն, տարբեր լեզուներով հրատարակվում են գրքեր և ժողովածուներ, զարգացվում են կապերն արտասահմանյան գործընկերների հետ, արտերկրյա մասնագետների համար տեղեկատվական բազա ստեղծելու նպատակով հրատարակվում և տարածվում են փաստաթղթերի նոր ժողովածուներ, որոնցում զետեղվել են միջազգային կազմակերպությունների կողմից հայ-ադրբեջանական հակամարտության վերաբերյալ մինչ այժմ ընդունված փաստաթղթերը:
2. ԼՂ «ադրբեջանական համայնքին» գործուն աջակցություն ցուցաբերելը, կարևոր և հեղինակավոր միջազգային միջոցառումներում նրա ներկայացուցիչների մասնակցությունն ապահովելը: ՌԷԿ-ն փորձում է միջազգային մակարդակում հասնել այն բանին, որ ԼՂ բնակչություն ասելով հասկանան նախևառաջ ադրբեջանցիների, և դա մտնի հասարակական շրջանառության մեջ, իսկ բանակցությունների որոշակի փուլում նրանք ներգրավվեն որպես իրավահավասար կողմ:
3. Պայքար «հայկական քարոզչամեքենայի» դեմ: Այս ուղղությամբ հիմնական ջանքերն ուղղված են արտերկրյա գործընկերների հետ համագործակցության հաստատմանը: Թուրքական *AVİM* կենտրոնի հետ հաստատված գործակցության արդյունքում հրատարակվում է «Հայկական հետազոտություններ» անունը կրող ամսագիրը:
4. Աշխատանքներ, որոնք ուղղված են հայ-ադրբեջանական հակամարտությունը որպես «սառեցված հակամարտություն» ներկայացնելու դեմ, քանի որ այդպիսի հակամարտությունները, ըստ ադրբեջանական կողմի, որպես կանոն, դուրս են մնում միջազգային հանրության ուշադրությունից, աստիճանաբար փոխվում է դրանց նկատմամբ վերաբերմունքը, բանակցությունները կորցնում են նախկին ինտենսիվությունը և, ի վերջո, խնդրի լուծմանն ուղղված քայլերն անորոշ ժամանակով հետաձգվում են: Այս համատեքստում ուսումնասիրվում են Եվրոպայի

նմանօրինակ էթնոտարածքային հակամարտությունները:

5. Ոչնչացնել իբր հայկական կողմից ստեղծված «ադրբեջանցիների և հայերի միասին ապրելու անհնարինության» մասին քաղաքական առասպելը¹:

ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի ներկայացրած աշխարհի ուղեղային կենտրոնների տարեկան վարկանիշային սանդղակի համաձայն, 2014թ. ՌՀԿ-ն 123-րդն է աշխարհի առաջատար ՈւԿ-ների, 44-րդը՝ Կենտրոնական Ասիայի ՈւԿ-ների, 51-րդը՝ լավագույն քարոզչություն իրականացնող ՈւԿ-ների, 26-րդը՝ կառավարության հետ կապված լավագույն ՈւԿ-ների, 56-րդը՝ ամենալավ կառավարում ունեցող ՈւԿ-ների ցանկում:

2. ԱՀ էկոնոմիկայի և արդյունաբերության նախարարության Տնտեսական բարեփոխումների գիտահետազոտական ինստիտուտ (*ISRER*)²

Գործունեության հիմնական ուղղությունը սոցիալ-տնտեսական է: Հիմնական նպատակը ԱՀ սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության գիտական հիմնավորումն է, տնտեսական բարեփոխումների իրականացումը, այդ թվում՝ ռազմավարության և մարտավարության գիտական հիմքերի մշակումը: Տարեկան բյուջեն կազմում է 700 հազ. ԱՀ մանաթ (\$896 հազ.), հիմնական աշխատակազմի թիվը հասնում է 80-ի (որի մոտ կեսը՝ հետազոտողներ), պայմանագրային աշխատողները մոտ մեկ տասնյակ են:

Ունի գիտահետազոտական աշխատանքներով զբաղվող 6 բաժին.

- Մակրոտնտեսական հետազոտություններ
- Գործարարության զարգացում և տարածաշրջանային խնդիրներ
- Նաֆթային սեկտորի զարգացում
- Կայուն զարգացման խնդիրներ
- Վիճակագրություն և վերլուծություն
- Կրթություն և համակարգում:

Համագործակցություն. Երկրի ներսում. ԱՀ տուրիզմի ինստիտուտ, Բաքվի պետական համալսարան, Պետական կառավարման ակադեմիա, Ավիացիայի ազգային ակադեմիա, ԳԱԱ Տնտեսագիտության ինստիտուտ:

¹ Фархад Мамедов: «Азербайджан является сторонником активизации международного права в отношении конфликта», 17.06.2014г. www.1905.az

² Կենտրոնի մասին տեղեկատվությունը վերցված է www.ier.az պաշտոնական կայքից:

Արտերկրյա. Չինաստանի սոցիալական գիտությունների ակադեմիա, Տնտեսագիտության ինստիտուտ, Հվ. Կորեայի միջազգային տնտեսական քաղաքականության ինստիտուտ, Ղազախստանի տնտեսական հետազոտությունների ինստիտուտ, Հունգարիայի համաշխարհային տնտեսության ինստիտուտ, Մոլդովայի տնտեսագիտության, ֆինանսների և վիճակագրության ինստիտուտ, ՌԴ ԳԱԱ կենտրոնական տնտեսա-մաթեմատիկական ինստիտուտ, Թուրքիայի Մարմարայի և Գազի համալսարաններ, Ուկրաինայի տնտեսական հետազոտությունների և քաղաքական խորհրդատվությունների ինստիտուտ:

Դոնորներ. Թուրքիայի զարգացման և համագործակցության միջազգային գործակալություն (*TIKA*), Թուրքիայի զարգացման նախարարություն, Միջազգային համագործակցության գերմանական ասոցիացիա (*GIZ*), Համաշխարհային բանկ, Ջարգացման ասիական բանկ, Ջարգացման իսլամական բանկ, ՄԱԿ զարգացման ծրագիր, Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպություն (*OECD*):

Ըստ պաշտոնական կայքի՝ ներկայումս ինստիտուտում իրականացվում է 26 գիտահետազոտական ծրագիր:

Տարեկան մեկ անգամ հրատարակում է գիտական հոդվածների ժողովածու, վերջինը հրատարակվել է 2013թ.:

Կենտրոնն ունի համատեղ գիտահետազոտական աշխատանքների իրականացման փորձ ինչպես ադրբեջանական, այնպես էլ արտերկրյա համապատասխան կառույցների հետ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ 2007-ից Ադրբեջանում ձևավորվում է փորձագիտական շրջանակների նկատմամբ նոր քաղաքականություն, որի իրականացման համար ստեղծվել են տարբեր գործառնության չափերով կառույցներ ունեցող պետական կառույցներ:

Մասնավորապես, Ադրբեջանի նախագահին կից ոչ կառավարական կազմակերպությունների աջակցման պետական խորհրդի կողմից դրամաշնորհային մրցույթների միջոցով Ադրբեջանի իշխանությունները փորձում են տեղական և արտերկրյա փորձագիտական շրջանակների հնարավորությունները ծառայեցնել քարոզչական նպատակների և տարատեսակ ճնշումների միջոցով նվազագույնի հասցնել տեղական վերլուծական կենտրոնների անկախ գործունեությունը: Հաշվի առնելով ԱՀ ներքաղաքական համակարգի

բնույթը՝ կարելի է պնդել, որ հետախու տեղական ոչ պետական վերլուծական կենտրոնների գործունեությունը, հետազոտական ուղղությունները, իրականացվող ծրագրերը և նույնիսկ արտաքին համագործակցությունը մեծապես կախված են լինելու պետական շրջանակների հետ նրանց փոխգործակցությունից և իշխանության առաջնահերթություններից:

ԱՀ նախագահին առընթեր Ռազմավարական հետազոտությունների կենտրոնն իրականացնում է ներքին և արտաքին քաղաքականությանը, ինչպես նաև, տնտեսությանն առնչվող հիմնարար և փորձագիտական բազմաբնույթ հետազոտություններ՝ ակտիվորեն զարգացնելով արտաքին կապերն ուղեղային կենտրոնների հետ: Հատկանշական է Ղարաբաղյան հակամարտության մասով նրանց գործունեությունը, մասնավորապես միջազգային հանրության կողմից այն որպես «սառած հակամարտություն» ընկալելու դեմ ուղղված մոտեցումները: ԱՀ նախագահին կից գործող ուղեղային կենտրոնի նման գնահատականները կարող են խթանել և խրախուսել Ադրբեջանի կողմից հայաադրբեջանական սահմանին (այդ թվում արցախյան առաջնագծում) ռազմական բախումների հրահրումը՝ հակամարտությունը մշտապես թեժ վիճակում պահելու և ներկայացնելու համար: Այս ամենով հանդերձ, կենտրոնն ակտիվորեն ներգրավված է ադրբեջանական քարոզչական աշխատանքներում, որի հետազոտական ուղղությունները կարծես ուղենիշ են հանդիսանում ոչ պետական վերլուծական կենտրոնների համար, և պատահական չէ, որ ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի ներկայացրած աշխարհի ուղեղային կենտրոնների 2014թ. տարեկան վարկանիշային սանդղակի համաձայն, ՌՀԿ-ն 51-րդն է լավագույն քարոզչություն իրականացնող ՌԿ-ների ցանկում:

Տնտեսական բարեփոխումների գիտահետազոտական ինստիտուտը, զբաղված լինելով զուտ սոցիալ-տնտեսական հետազոտություններով, փորձում է չեզոքացնել ոչ պետական «Տնտեսական և սոցիալական զարգացման կենտրոնի» (*Center for Economic and Social Development, CESD*) առաջնայնությունն այս ոլորտում:

Մեպտեմբեր, 2015թ.

**ԱՂԻԲԵՋԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՏԻՐՈՒՑԹՈՒՄ**

Անուշավան Բարսեղյան

Ամփոփագիր

2007 թվականից Ադրբեջանում ձևավորվում է փորձագիտական շրջանակների նկատմամբ նոր քաղաքականություն, որն Ադրբեջանի իշխանությունների արձագանքն էր արտերկրյա դրամաշնորհներով ուղղորդվող ոչ պետական վերլուծական կենտրոնների գործունեության ակտիվացմանը: Նոր քաղաքականության միջոցով փորձ է արվում տոտալ վերահսկողություն սահմանել տեղական ուղեղային կենտրոնների նկատմամբ և դրանց, ինչպես նաև արտերկրյա նմանատիպ կենտրոնների հնարավորություններն օգտագործել քարոզչական նպատակներով: Ստեղծվող պետական ուղեղային կենտրոնները, ստանալով պետական զգալի ֆինանսավորում, հիմնարար հետազոտություններ են իրականացնում սոցիալ-տնտեսական, ներքին և արտաքին քաղաքականության ոլորտներում, ակտիվորեն մասնակցում են Ադրբեջանի հակահայկական քարոզչությանը:

**АЗЕРБАЙДЖАНСКАЯ ПОЛИТИКА
В ЭКСПЕРТНОЙ СФЕРЕ**

Анушаван Барсегян

Резюме

С 2007г. в Азербайджане формируется новая политика в отношении экспертных кругов, являющаяся реакцией азербайджанских властей на активизацию деятельности негосударственных аналитических центров, спонсируемых за счет иностранных грантов. Новая политика – попытка установить тотальный контроль над местными мозговыми центрами и использовать их возможности, наравне с возможностями аналогичных зарубежных структур, в собственных пропагандистских целях. Создаваемые государственные мозговые центры, получив значительное государственное финансирование, осуществляют фундаментальные исследования в социально-экономической, внешне- и внутривнутриполитической сферах, активно участвуют в антиармянской пропаганде Азербайджана.

AZERBAIJANI POLICY IN THE AREA OF EXPERTS

Anushavan Barseghyan

Resume

Since 2007 a new policy towards the expert circles is formed in Azerbaijan, which was the Azerbaijani government's response to intensified activities of non-government analytical centers that receive foreign monetary grants and act accordingly. The new policy attempted to exert total control over the local think tanks and use their, as well as similar foreign centers' potential for propaganda. In parallel, government-controlled think tanks are established with significant government financing to implement fundamental research in socio-economic area, domestic and foreign policies, as well as actively participate in the anti-Armenian propaganda of Azerbaijan.

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԸՆԿԱԼՄԱՆ
ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ
ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Աննա Կարապետյան՝

Բանալի բառեր՝ Ղարաբաղյան հակամարտություն, ազատագրված տարածքներ, կարգավորման փաթեթներ, փոխակերպում, կոշտացում:

Ազգերի ինքնորոշման իրավունքի իրացումը միջազգային պրակտիկայում հաճախ հանգեցնում է տարածքային վեճերի և հակամարտությունների: Դրանց կարգավորման գործընթացները ներառում են տարբեր բաղադրիչներ, որոնք առնչվում են մարդու իրավունքների պաշտպանությանը և փախստականների խնդիրներին, պատերազմի հետևանքների վերացմանը, կայուն խաղաղության հաստատմանը և այլն: Այդ համախմբում կարևոր տեղ է զբաղեցնում նաև տարածքային խնդիրների կարգավորումը:

Արցախի ժողովրդի ինքնորոշման ձգտմանն ի պատասխան Ադրբեջանի սանձազերծած պատերազմը ստեղծեց նոր իրավիճակ, որն ամրագրվեց 1994թ. զինադադարի համաձայնագրի կնքմամբ: Արդյունքում՝ Ադրբեջանի և Արցախի միջև առաջացան տարածքային խնդիրներ: Ղարաբաղյան հակամարտության պարագայում տարածքային հակասություններն ունեն մի քանի առանձնահատկություններ, որոնք արտացոլվում են նաև կարգավորման փաթեթների մեջ:

Մասնավորապես, կարելի է առանձնացնել տարածքների հետևյալ պայմանական տարանջատումը, որն օգտագործվում է կարգավորման տարբերակների քննարկման ընթացքում՝ ԼՂԻՄ տարածքը 1988թ. սահմաններով, պատերազմի ժամանակ ազատագրված 7 շրջանները, որոնք այսօր ԼՂՀ տարածքի մաս են կազմում, ինչպես նաև Շահումյանի շրջանը և Գետաշենի ենթաշրջանը, որոնք գտնվում են Ադրբեջանի վերահսկողության տակ: Կարգա-

¹ ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ:

վորման որոշ փաթեթներում առանձին անդրադարձ է կատարվում նաև Շուշի քաղաքին, որը, լինելով ԼՂԻՄ տարածքում, ԼՂԻՄ մյուս շրջաններից ավելի խիտ է բնակեցված եղել ադրբեջանցիներով: Ազատագրված 7 շրջաններից փաթեթներում առանձին անդրադարձ է կատարվում նաև Լաչինի շրջանին, որը կապ է ապահովում Հայաստանի և Արցախի միջև:

Հոդվածի նպատակն է դիտարկել տարածքային խնդիրների լուծման առաջարկվող տարբերակների փոխակերպումը բանակցային գործընթացում և խնդրի ընկալումների փոփոխությունը երեք կողմերում և առանձնացնելով ընդհանուր միտումները՝ առաջարկել գործողություններ կամ թեզեր, որոնք կնպաստեն բանակցային գործընթացում հայկական կողմերի դիրքերի ամրապնդմանը:

Այդ նպատակով դիտարկվում են 1994թ. մայիսին կնքված հրադադարից հետո քննարկված կարգավորման փաթեթները՝ ԼՂ հարցի կարգավորման փաթեթային տարբերակը (առաջարկված 1997թ. հուլիսին), փուլային տարբերակը (առաջարկված 1997թ. դեկտեմբերին), «ընդհանուր պետություն» տարբերակը (առաջարկված 1998թ. նոյեմբերին), 2001թ. ապրիլին Քի Վեսթում «համաձայնեցված» փաթեթը (որը գաղտնագերծված չէ, սակայն բովանդակությունը մասամբ ներկայացված է բարձրաստիճան պաշտոնյաների ելույթներում) և 2007թ. Մադրիդում կողմերին առաջարկված սկզբունքները, որոնք ստացել են «Մադրիդյան սկզբունքներ» անվանումը (մի քանի անգամ ենթարկվել են նորացման և ամբողջովին գաղտնագերծված չեն, սակայն գաղտնագերծված վեց կետերը հնարավորություն են տալիս դատողություններ անել կարգավորման գործընթացի բաղադրիչներին, մասնավորապես՝ նաև տարածքային խնդիրներին անդրադարձի վերաբերյալ):

Վերոնշյալ փաթեթներից յուրաքանչյուրում առանձին ուշադրություն է հատկացվել տարածքների խնդիրներին: Փաթեթները ներառում են Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցի զանազան լուծումներ, առաջարկում են ազատագրված տարածքների վերադարձի մեխանիզմներ, տարբեր մոտեցումներ են ներառում Լաչինի, Շուշիի և Շահումյանի նկատմամբ:

Եթե փաթեթային տարբերակը փորձում է հստակ սահմանում առաջարկել՝ ամրագրելով, որ միջանցքը չի կազմելու ողջ Լաչինի շրջանը, փուլային տարբերակում Լաչինի շրջանի հարցը, Շահումյանի և Շուշի քաղաքի հետ միասին, նախատեսվում է քննարկել հետագա բանակցությունների ժամա-

նակ, «ընդհանուր պետություն» տարբերակն ամրագրում է այս շրջանով միջանցքի տրամադրումը, սակայն դրա վերջնական սահմանումը նույնպես թողնվում է բանակցությունների միջոցով կարգավորվելուն: Քի Վեսթի պայմանավորվածությունները նույնպես ամրագրում էին Լաչինի շրջանով միջանցքի տրամադրում՝ մի շեշտադրումով, որ այն Լեռնային Ղարաբաղի հետ միևնույն կարգավիճակն ունենա: «Մադրիդյան սկզբունքներն» ամրագրում են տարածքների վերադարձի անհրաժեշտությունը և միջանցքի տրամադրման կարևորությունը, սակայն լրացուցիչ մանրամասներ չեն նշվում (առնվազն գաղտնագերծված հատվածում):

Ըստ փաթեթային և «ընդհանուր պետություն» տարբերակների՝ Շուշին և Շահումյանը համապատասխանաբար փոխանցվում են Բաքվի և Ստեփանակերտի վարչարարության ներքո: Փուլային տարբերակն այս հարցը ևս թողնում է հետագա կարգավորման: Քի Վեսթի պայմանավորվածություններն ու «Մադրիդյան սկզբունքներն» այս հարցին գաղտնագերծված հատվածում չեն անդրադառնում:

Անդրադառնանք փաթեթներին առանձին-առանձին:

1997թ. մայիս-հուլիսին ԵԱՀԿ Մինսկի խմբի (ՄԽ) համանախագահները մշակեցին և կողմերին առաջարկեցին կարգավորման փաթեթային տարբերակը:

Փաթեթային տարբերակը ենթադրում էր Լեռնային Ղարաբաղին ինքնավարության տրամադրում Ադրբեջանի տարածքում: Համապատասխանաբար՝ զորքերի դուրսբերում մինչև 1988թ. ԼՂԽՍ սահմանագիծը: Լաչինի շրջանով նախատեսվում էր տրամադրել միջանցք ԼՂ-ն Հայաստանի հետ կապելու համար, սակայն վերջինս ներառում էր ոչ ամբողջ Լաչինի շրջանը. Լաչին քաղաքը, ինչպես նաև միջանցքից դուրս շրջանի տարածքը հանձնվում է Ադրբեջանի վարչարարությանը, իսկ միջանցքը վարձակալության էր տրվում ԵԱՀԿ-ին, որն այն տրամադրում էր Ղարաբաղին: Շուշին և Շահումյանը համապատասխանաբար նախատեսվում էր հանձնել Բաքվի և Ստեփանակերտի վարչարարության ներքո:

Փաթեթային տարբերակում ասվում է [1]. «Հայաստանի ուժերը դուրս են բերվում Հայաստանի Հանրապետության տարածք: Լեռնային Ղարաբաղի ուժերը դուրս են բերվում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Հանրապետության 1988թ. սահմանագծից ներս (ստորև՝ VIII և IX կետերում նշված բացա-

ռուքյուններով)¹: Ադրբեջանի ուժերը դուրս են բերվում դեպի թիվ 1 Հավելվածում² համաձայնեցված գծեր՝ Բարձր մակարդակի պլանավորման խմբի հանձնարարականների հիման վրա»:

«Ուժերի դուրսբերման ավարտին բուֆերային գոտին տեղակայված է լինում 1988թ. ԼՂԻՄ սահմանագծի և հայ-ադրբեջանական սահմանի հյուսիսային մասի երկայնքով»: «Լեռնային Ղարաբաղի վարչական սահմանները գծվում են նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Հանրապետության սահմաններով»:

Լաչինի միջանցքի վերաբերյալ ամրագրվում է. «Ադրբեջանը միջանցքը վարձակալությամբ տրամադրում է ԵԱՀԿ-ին, որը պայմանագիր կկնքի՝ միջանցքը բացառապես Լեռնային Ղարաբաղի իշխանությունների կողմից օգտագործվելու մասին»:

«ԵԱՀԿ-ն հետևում է Լաչին քաղաքը շրջանցող ճանապարհի շինարարությանը: Շինարարության ավարտից հետո Լաչին քաղաքը հանվում է Լաչինի միջանցքից: Այն վերադարձվում է ադրբեջանական վարչարարության ներքո (որպես բաժանարար գոտու մաս), և նրա նախկին բնակիչները կկարողանան վերադառնալ»:

Լաչինի շրջանի տարածքը՝ միջանցքի շրջանակներից դուրս, համարվում է բաժանարար գոտու մաս»:

Նշվում է, որ կողմերը դուրս են բերում իրենց զինված ստորաբաժանումները Շուշի քաղաքից և Շահումյանի շրջանից, տեղահանված անձինք վերադառնում են իրենց նախկին բնակավայրերը և «համապատասխանաբար ներկայացված կլինեն Բաքվի և Ստեփանակերտի խորհրդարաններում և ընտրական խորհուրդներում, այդ վայրերի ոստիկանությունում և անվտանգության ուժերում»:

Փաթեթային տարբերակն ընդունվել է Ադրբեջանի կողմից, Հայաստանը որոշակի դիտողություններ է արտահայտել, սակայն ընդհանուր առմամբ դրական գնահատական է տվել փաթեթային տարբերակին, ԼՂՀ իշխանություններն այս տարբերակը մերժել են:

Հայաստանյան կողմը, ներկայացնելով իր մոտեցումն առաջարկված փաթեթին, արտահայտել է իր մի շարք անհամաձայնությունները, այդ թվում՝

¹ Նշված կետերը վերաբերում են Լաչինի միջանցքին և Շուշի քաղաքին ու Շահումյանի շրջանին:

² Գաղտնագրված չէ:

նշվել է, որ Հայաստանը չի կարող հարցի կարգավորման հիմք ընդունել Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքն այնքան ժամանակ, քանի դեռ չեն ճշգրտվել Ադրբեջան-Լեռնային Ղարաբաղ հարաբերությունները, և չի հստակեցվել Լեռնային Ղարաբաղի քաղաքական կարգավիճակը:

Տարածքների հարցի առումով Հայաստանն անհամաձայնություն է հայտնել Լաչինին վերաբերող կետի առնչությամբ՝ նշելով, որ այն «չի լուծում Լեռնային Ղարաբաղի անկլավային գոյության մասին խնդիրը»:

1997թ. սեպտեմբերին առաջարկվեց կարգավորման «փուլային տարբերակը»:

Փուլային տարբերակը ենթադրում էր Արցախյան գործերի դուրսբերում մինչև ԼՂԻՄ 1988թ. սահմանագիծը և Լաչինի շրջան: Ազատագրված մյուս շրջանների տարածքում ենթադրվում էր բուֆերային և բաժանարար գոտու ստեղծում և բնակչության վերադարձ: Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի, ինչպես նաև Լաչինի, Շուշիի և Շահումյանի հարցերը հետագայում պետք է կարգավորվեին բանակցությունների միջոցով:

Փաստացի, ազատագրված յոթ շրջաններից վեցը համաձայնագրով վերադարձվում էին Ադրբեջանին, ԼՂԻՄ կարգավիճակը կորոշվեր բանակցությունների արդյունքում, բանակցություններով կորոշվեին նաև Շուշիի, Լաչինի և Շահումյանի շրջանների հարցերը:

Փուլային փաթեթում ասվում է [2]. «Հայաստանի ցանկացած ուժ, որը տեղաբաշխված է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, դուրս է բերվում այդ սահմաններից ներս: Լեռնային Ղարաբաղի ուժերը դուրս են բերվում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Հանրապետության 1988թ. սահմանագծից ներս՝ բացառությամբ Լաչինի շրջանի: Ադրբեջանի ուժերը դուրս են բերվում դեպի թիվ 1 Հավելվածում¹ նշված սահմաններից անդին՝ բարձր մակարդակի պլանավորման խմբի հանձնարարականների հիման վրա, և դուրս են բերվում Հայաստանի ցանկացած տարածքից»:

«Ուժերի դուրսբերման ավարտին բուֆերային գոտին տեղակայվում է 1988թ. ԼՂԻՄ սահմանագծի և Լաչինի շրջանի հյուսիսային և հարավային սահմանագծերի երկայնքով»:

Ամրագրվում է, որ համաձայնագրի երեք կողմերը, վերջ դնելով հակամարտության պատերազմական կողմին, «համաձայն են Մինսկի համաժողո-

¹ Գաղտնագերծված չէ:

վի համանախագահների օժանդակությամբ բարեխղճորեն շարունակել վարել քանակցություններ ԵԱՀԿ գործող նախագահի կողմից համապատասխանաբար հրավիրված այլ կողմերի հետ՝ հակամարտության մյուս բոլոր կողմերի անհետաձգելի համընդգրկուն կարգավորմանը հասնելու նպատակով, ներառյալ քաղաքական կողմը, ինչը ներառում է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշումը և Լաչինի, Շուշիի և Շահումյանի հետ կապված խնդիրների լուծումը, այսպիսի կարգավորումը քանակցությունների ճանապարհով իրականանալուց և վերոհիշյալ կողմերի կողմից ստորագրվելուց հետո, ենթակա է ճանաչման միջազգային հանրության կողմից հնարավորինս արագ հրավիրվելիք Մինսկի համաժողովի ժամանակ»:

Փուլային տարբերակը ևս մերժվել է ԼՂՀ իշխանությունների կողմից:

Հայաստանը համաձայնել է այս համաձայնագիրն ընդունել որպես քանակցությունների հիմք: «Չնայած Համաձայնագրում ներկայացված՝ Շուշիի, Շահումյանի հետքաշումների և, հատկապես, Լեռնային Ղարաբաղի անվտանգության հարցերի շուրջ ունեցած լուրջ առարկություններին և վերապահումներին՝ Հայաստանը Համաձայնագրի սույն նախագիծն ընդունում է որպես քանակցությունների հիմք» [2],- ասված է Հայաստանի դիրքորոշումն արտահայտող գրության մեջ:

Հայաստանյան դիրքորոշումը ներառում է նաև դիտարկում, որ բաժանարար գոտին, որտեղ ենթադրվում է իրականացնել նախկին բնակչության վերադարձ, պետք է ներառի նաև Շահումյանի շրջանը:

1998թ. նոյեմբերին կողմերին առաջարկվել է կարգավորման «ընդհանուր պետություն» տարբերակը: Այն ամրագրում էր, որ «Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է Հանրապետության ձևի պետական և տարածքային կազմավորում և Ադրբեջանի հետ միասին կազմավորում է «ընդհանուր պետություն»՝ նրա միջազգայնորեն ճանաչված սահմաններում»: Այս փաթեթը ենթադրում էր գորքերի դուրսբերում մինչև 1988թ. ԼՂԻՄ սահմանագիծը՝ բացառությամբ Լաչինի շրջանի: Լաչինի շրջանի վերաբերյալ հետագայում պետք է համաձայնություն ձեռք բերվեր Ադրբեջանի և ԼՂ-ի միջև, հակառակ դեպքում այն պետք է մնար ամբողջովին ապառազմականացված գոտի: Ադրբեջանցի բնակչությունն իրավունք էր ստանում վերադառնալ Շուշի քաղաք, իսկ հայ փախստականները՝ Շահումյան, նրանց անվտանգությունը երաշխավորվում էր իշխանությունների կողմից, և իրավունքները հավասարեցվում են մյուս քաղաքացիներին:

Փաստաթղթում ասվում է [1]. «Լեռնային Ղարաբաղի սահմանները կհամապատասխանեն նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սահմաններին: Դրանց հնարավոր ճշգրտումները կամ փոփոխությունները կարող են լինել Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի միջև հատուկ փոխադարձ պայմանավորվածությունների առարկա»:

Լաչինի վերաբերյալ ամրագրվում է, որ «Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև անարգել հաղորդակցությունն ապահովելու նպատակներով Լեռնային Ղարաբաղի կողմից Լաչինի միջանցքն օգտագործելու հարցը հանդիսանում է առանձին պայմանավորվածության առարկա, եթե Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի համաձայնությամբ չընդունվեն այլ որոշումներ Լաչինի շրջանի հատուկ ռեժիմի վերաբերյալ: Լաչինի շրջանը մշտապես պետք է մնա որպես լիովին ապառազմականացված գոտի»:

«Կողմերը համաձայնության են գալիս այն մասին, որ բոլոր ադրբեջանցի փախստականները կարող են վերադառնալ Շուշի քաղաքի իրենց բնակատեղիները: Նրանց անվտանգությունը կերաշխավորվի Լեռնային Ղարաբաղի համապատասխան իշխանությունների կողմից: Նույնպիսի իրավունքներ կստանան նաև հայ փախստականները քաղաք Շահումյան վերադառնալու դեպքում»:

«Ուժերի դուրսբերման ավարտով բուֆերային գոտին տեղադրվում է ԼՂԻՄ 1988թ. սահմանագծի երկայնքով: Լրացուցիչ պայմանավորվածության հասնելու դեպքում այն կարող է անցնել նաև Լաչինի շրջանի սահմանագծերով»:

«Ընդհանուր պետություն» տարբերակը մերժվել է Ադրբեջանի կողմից:

Հայաստանը տվել է իր համաձայնությունն այս փաթեթին՝ որպես բանակցությունների հիմք: «Այս փաստաթղթում տեղ գտած մի շարք դրույթների վերաբերյալ Հայաստանն ունի վերապահումներ, սակայն դրանց կանդիդատնա բանակցությունների ընթացքում», - ասված է Հայաստանի պաշտոնական արձագանքի մեջ:

2001թ. Փարիզում, այնուհետև Քի Վեսթում կայացան ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի և Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի հանդիպումները: Քի Վեսթում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, Լեռնային Ղարաբաղը Լաչինի շրջանի մի հատվածով պետք է միանար Հայաստանի Հանրապետությանը: Պայմանավորվածությունները մանրամասն գաղտնա-

գերծված չեն, ուստի դրանց մասին պատկերացում կազմելու հնարավորություն ստանում ենք միայն բանակցություններին անմիջականորեն մասնակցած կամ այդ ժամանակահատվածում բարձր պաշտոններ զբաղեցրած անձանց հայտարարություններից: Դրանցից բխում է, որ փաթեթը ենթադրում էր ազատագրված շրջանների վերադարձ Ադրբեջանին՝ բացառությամբ Լաչինի շրջանի մի մասի:

«Այն ժամանակ խոսքը Լեռնային Ղարաբաղը՝ Լաչինի մի հատվածով Հայաստանի սուվերենության տակ դնելու մասին էր: Այսինքն՝ Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը պետք է լինեին մեկ պետություն՝ այսօրվա իմ գնահատմամբ, Ադրբեջանի տեսանկյունից ոչ այնքան համարժեք փոխանակման դիմաց. Ադրբեջանն ընդամենը պետք է իրավունք ստանար ՀՀ տարածքով անխափան կապ հաստատել Նախիջևանի հետ: Մա էր փաստաթղթի ամբողջ առանցքը», - ասել է այդ ժամանակ ՀՀ ԱԳ ղեկավարի պաշտոնը զբաղեցրած Վարդան Օսկանյանն իր հարցազրույցներից մեկի ժամանակ [3]:

Քի Վեսթի բանակցությունների ժամանակ քննարկվել է նաև Ադրբեջանի և Նախիջևանի միջև կապն ապահովելու համար Մեդրիի շրջանն Ադրբեջանին հանձնելու հարցը, ինչը հայկական կողմը մերժել է: Այդ մասին իր հարցազրույցում նշել է Վարդան Օսկանյանը: «Ես նկատի ունեմ վերջին շրջանի խոսակցությունները, որ մենք տալիս ենք տարածքները: Խոսքը վերաբերում էր Մեդրիի շրջանի փոխանակման տարբերակին: Երբ այդ հարցը բարձրացավ, մենք միանշանակ հայտարարեցինք, որ մերժել ենք նման լուծման տարբերակը, բայց չենք ժխտել, որ նման տարբերակ եղել է: Մենք ասել ենք, որ նման առաջարկ եղել է, բայց մերժվել է», - ասել է Վ.Օսկանյանը [4]: Նույն հարցազրույցում նա նաև հաստատել է, որ ըստ Քի Վեսթի պայմանավորվածությունների, բացի Լաչինից՝ վեց շրջանները վերադարձվելու էին Ադրբեջանին:

Քի Վեսթում բանակցությունների թե՛ փաստից, թե՛ արդյունքներից ադրբեջանական կողմը հետագայում հրաժարվել է:

2007թ. բանակցությունների սեղանին դրվել է բանակցային նոր փաթեթ՝ «Մադրիդյան սկզբունքները», որոնց շուրջ բանակցությունները շարունակվում են մինչ օրս: Դրանք կոչված են հետագայում հիմք ծառայելու Խաղաղության շրջանակային համաձայնագրի կնքման համար:

Այսօրվա դրությամբ գաղտնագերծված են Մադրիդյան սկզբունքներից վեցը, դրանք առաջին անգամ բարձրաձայնվել են ԵԱՀԿ ՄԽ համանախագահող երկրների ղեկավարների կողմից Լ՛Աքվիլայում (2009թ. հուլիսի 10): Հետագայում սկզբունքները բազմիցս նորացվել են, սակայն կարելի է ենթադրել, որ բանակցությունների արդյունքում կատարված նորացումները գաղտնագերծված վեց կետերին չեն վերաբերում, քանի որ ԵԱՀԿ ՄԽ համանախագահող երկրների ղեկավարների կողմից մշտապես հղում է կատարվում դրանց՝ առանց մատնանշելու որևէ փոփոխություն բարձրաձայնված սկզբունքներում:

Այս փաթեթն իր բնույթով և նպատակով տարբերվում է միջնորդների կողմից առաջարկված նախորդ փաթեթներից նրանով, որ չի ենթադրում որևէ հստակություն, այլ միայն ամրագրում է սկզբունքները, որոնց շուրջ համաձայնության գալուց հետո կողմերը պետք է անցնեն դրանց հստակեցմանն ու համապարփակ կարգավորման համաձայնագրի շուրջ բանակցություններին: Ուստի, դրանցում առավել ընդհանրական ամրագրվում է Ղարաբաղի և Հայաստանի միջև միջանցքի, ինչպես նաև ազատագրված տարածքների վերադարձի անհրաժեշտությունը՝ շրջանների քանակի, տարածքի, Շահումյանի մասին որևէ մանրամասն պայմանավորվածություն այս փուլում չի ակնկալվում (համենայնդեպս, գաղտնագերծված կետերից ելնելով):

Լ՛Աքվիլայի հայտարարության մեջ, մասնավորապես, ասված է. «Լեռնային Ղարաբաղը շրջապատող տարածքների վերադարձ Ադրբեջանի վերահսկողության տակ: Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը կապող միջանցք» [5]:

Սկզբունքների շուրջ բանակցություններն ընթանում են առ այսօր: 2010թ. Կազանում կողմերը մոտ էին դրանց ստորագրմանը, սակայն վերջին պահին ադրբեջանական կողմը հանդես եկավ նոր առաջարկներով՝ անհնարին դարձնելով սկզբունքների ստորագրումը: Այսօրվա դրությամբ, որևէ առաջընթաց դրանց ստորագրման առումով նկատելի չէ:

Կողմերի ընկալումները և դրանց կերպափոխումը

Տարածքային խնդիրների ընկալումների փոխակերպումը երեք կողմերում դիտարկելու համար կառանձնացնենք տարբեր ժամանակահատվածներում դրանցից յուրաքանչյուրի բարձրաստիճան պաշտոնյաների՝ նախագահների և ԱԳ նախարարների մի քանի հայտարարություններ:

Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ 20 տարուց ավելի «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակը, այդ տարիների ընթացքում բանակցային գործընթացի ցածր արդյունավետությունն ու Ադրբեջանի ահազնացող ռազմատենչ հռետորաբանությունը զգալի փոփոխությունների են ենթարկել հայկական երկու կողմերի ընկալումները: Եթե հրադադարի կնքումից անմիջապես հետո ԼՂԻՄ-ին հարակից ազատագրված շրջաններն ընկալվում էին որպես բուֆերային գոտի, որն անվտանգության ամուր երաշխիքների դիմաց կողմերը պատրաստ էին վերադարձնել Ադրբեջանին, ապա այսօր դրանք արդեն կայացած պետության՝ ԼՂՀ անքակտելի մաս են՝ թե՛ պետական կառավարման համակարգի, թե՛ հասարակության ընկալումների մեջ: Իսկ ադրբեջանական կողմն, իր հերթին, աստիճանաբար կոշտացնում է իր դիրքորոշումը, և եթե առաջ քննարկվում էր 6 կամ 5 շրջանների վերադարձի խնդիրը, այսօր Ադրբեջանը պնդում է բոլոր տարածքների վերադարձը և հավակնություններ ցուցաբերում նույնիսկ Հայաստանի տարածքների նկատմամբ:

Անդրադառնանք հակամարտության երեք կողմերից յուրաքանչյուրին առանձին-առանձին:

ԼՂՀ

Տարածքային խնդիրների առնչությամբ Արցախում ընկալումների փոփոխություն է տեղի ունեցել: «Եթե անցյալում ազատագրված տարածքներն ընկալվում էին որպես բուֆերային գոտի, ապա այժմ դրանք ընկալվում են որպես ԼՂՀ անքակտելի մաս՝ ամրագրված Սահմանադրությամբ», - խոսելով կերպափոխման մասին՝ պնդում է ԼՂՀ նախագահի մամլո խոսնակ Դավիթ Բաբայանը [6]: «Մինչև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական տարածքի ամբողջականության վերականգնումը և սահմանների ճշգրտումը՝ հանրային իշխանությունն իրականացվում է այն տարածքում, որը փաստացի գտնվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավագործության ներքո», - ասված է ԼՂՀ Սահմանադրության 142-րդ հոդվածում [7]:

Ներկայումս ԼՂՀ-ն չի քննարկում ազատագրված տարածքների վերադարձի հարցը՝ դրանք դիտարկելով որպես ԼՂՀ անբաժան մաս: «Եթե խոսքն Արցախին պարտադրված պատերազմի արդյունքում ազատագրված տարածքների մասին է, ապա դրանք Լեռնային Ղարաբաղի անբաժանելի մասն

են կազմում, և տվյալ փաստն ամրագրված են ԼՂՀ Սահմանադրության մեջ: Չպետք է մոռանալ նաև ԼՂՀ այն տարածքների մասին, որոնք մարտական գործողությունների ընթացքում բռնազավթվել են Ադրբեջանի կողմից և մինչև օրս գտնվում են ադրբեջանական կողմի վերահսկողության տակ: Խնդիրը պետք է դիտարկել՝ հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև պատմական արդարության վերականգնման և ԼՂՀ ժողովրդի անվտանգության համակողմանի ապահովման համատեքստում», - հարցազրույցներից մեկում ասել է ԼՂՀ ԱԳ նախարար Կարեն Միրզոյանը [8]:

Հայաստան

Հայաստանի դիրքորոշումը միջնորդների կողմից առաջարկված փաթեթներից յուրաքանչյուրի հանդեպ արտահայտվել է դրանց ի պատասխան ուղարկված գրություններով, որոնք գաղտնագերծվել են փաթեթների հետ միասին: Հայաստանն ի սկզբանե դեմ չի արտահայտվել ազատագրված տարածքների վերադարձին՝ անվտանգության երաշխիքների, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հստակեցման դեպքում: Նաև, եթե դիտարկենք առաջին երեք առաջարկները՝ փուլային, փաթեթային, «ընդհանուր պետություն», ԼՂՀ-ն այդ շրջանում եղել է բանակցային լիարժեք կողմ, և Հայաստանն իր կողմից պատրաստ է եղել համաձայնել ցանկացած տարբերակի, որը կբավարարեր ԼՂՀ շահերը և կարժանանար վերջինիս համաձայնությանը: Պայմանավորված նման մոտեցմամբ՝ հայաստանյան կողմի դիրքորոշումն առավել մեղմ է եղել այդ շրջանում:

1997թ. երկրի ղեկավար Լևոն Տեր-Պետրոսյանի տեսլականը հակամարտության կարգավորման վերաբերյալ արտահայտված է «Պատերազմ, թե խաղաղություն. լրջանալու պահը» հոդվածում: «Գաղափարը շատ պարզ է. բանակցությունների արդյունքում ստորագրվում է կարգավորման փուլային տարբերակը, բայց այն կիրառվում է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հստակեցումից հետո: Դրանով Ղարաբաղը միջազգային հանրությանն ապացուցում է իր կառուցողականությունը, ցույց է տալիս, որ ոչ մի մտադրություն չունի պահպանել գրավված տարածքները, իսկ մյուս կողմից՝ լուրջ առաջիադացում է արձանագրվում կարգավորման գործընթացում, և վերսկսվում են շուրջ մեկ տարի ընդհատված բանակցությունները» [9]:

Այս հոդվածում հստակ արտահայտվում է փուլային տարբերակով հակամարտությունը կարգավորելու ՀՀ նախագահի պատրաստակամությունը և համոզվածությունը, որ դա անհրաժեշտ և կարևոր քայլ է խաղաղության վերականգնման համար: Սակայն այս հոդվածն ու Ղարաբաղյան հակամարտության հարցում ՀՀ նախագահի ունեցած դիրքորոշումը նրա հրաժարականի պատճառը դարձան, ինչը վկայում է այն մասին, որ Ադրբեյջանի հանդեպ հասարակության և Հայաստանի քաղաքական ընտրանու շրջանում վստահության պակասի ու տարածքները նման պայմաններով վերադարձնելու անհամաձայնության ֆոնին նախագահի հայացքներն ու մոտեցումներն ընդունելի և ընկալելի չէին անգամ իր թիմի մյուս ներկայացուցիչների համար:

1998թ. փետրվարի 3-ին Լևոն Տեր-Պետրոսյանը հրաժարական տվեց՝ իր ելույթում նշելով, որ «կյանքը ցույց կտա, թե ով ինչ է արել Արցախի համար, և ով է իրականում ծախում այն: Արտառոց ոչինչ տեղի չի ունեցել. պարզապես Հայաստանում խաղաղության և արժանապատիվ հաշտության կուսակցությունը պարտություն է կրել» [10]: Արտահերթ ընտրությունների արդյունքում իշխանության եկավ ԼՂՀ նախկին նախագահ, ՀՀ վարչապետ Ռոբերտ Քոչարյանը: Նոր իշխանությունները բանակցությունները վարելու համար նոր սկզբունք որդեգրեցին, որը ենթադրում էր տարածքային հնարավոր զիջումներ միայն Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հստակ ամրագրման պարագայում: «Առանց Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցում հստակության, որևէ մեկը պատրաստ չէր և այսօր էլ պատրաստ չէ վերադարձնելու Լեռնային Ղարաբաղը շրջապատող, հայկական վերահսկողության տակ գտնվող տարածքները, որոնք ապահովում են Ղարաբաղի անվտանգությունը: Սա, անշուշտ, նախագահ Քոչարյանի հաստատ համոզմունքն էր», - գրում է Վարդան Օսկանյանը [11]:

2001թ., ելնելով Քի Վեսթի բանակցություններից, ՀՀ իշխանությունները փաստացի պատրաստ էին զիջել ազատագրված վեց շրջանները Հայաստանին Լեռնային Ղարաբաղի և Լաչինի միանալու դիմաց:

Այսօր ՀՀ իշխանությունները համաձայնություն են հայտնում ընդունել, որ Մինսկի խմբի առաջարկած սկզբունքները կարող են հակամարտության լուծման առանցք դառնալ [12]:

Հայաստանյան կողմի մոտեցումների կերպափոխման դինամիկան ցույց է տալիս, որ ազատագրված տարածքների հարցը մշտապես դիտարկվել է որպես բանակցային բաղադրիչ: Սակայն այն պայմանները, որոնց դիմաց Հայաստանը պատրաստ է եղել ստորագրել տարածքների վերադարձը, փոփոխվել են. եթե Լևոն Տեր-Պետրոսյանի համար ընդունելի էր համարվում փուլային կարգավորումը՝ տարածքների հանձնում և անորոշ ժամանակում կարգավիճակի հստակեցում, ապա Ռոբերտ Քոչարյանի, իսկ հետո՝ նաև Սերժ Սարգսյանի մոտեցմամբ այդ երկու հարցերը դրվում են միաժամանակ պարտադիր կարգավորման ներքո, և տարածքների վերադարձը դիտարկվում է որպես հնարավոր զիջում՝ հանրաքվեի միջոցով կարգավիճակի սահմանման և ճանաչման դիմաց:

Աղբբեջան

Աղբբեջանական կողմը մշտապես հանդես է եկել, իր բնորոշմամբ՝ «օկուպացված» շրջաններն իրեն վերադարձնելու պահանջով: Աղբբեջանի քաղաքականության հիմքում Հայաստանը որպես օկուպանտ ներկայացնելու սկզբունքն է: Պատահական չէ, որ մշտապես ընդգծվում է, որ այդ տարածքներն օկուպացրել է Հայաստանը և պետք է դուրս բերի իր գորքերն այդ տարածքներից: «Հայաստանի իշխանությունները՝ միջազգային պարտավորությունների համապատասխան, պետք է դադարեցնեն օկուպացիան և դուրս բերեն գորքերն Աղբբեջանի գրավված տարածքներից: Հակառակ դեպքում, ցանկացած միջադեպի համար պատասխանատվությունը ողջ ծավալով Հայաստանի վրա է», - ասված է Աղբբեջանի ԱԳՆ հերթական հայտարարության մեջ [13]:

Իր այս պահանջները հիմնավորելու համար աղբբեջանական կողմը մշտապես հղում է կատարում ՄԱԿ ԱԽ 4 բանաձևերին: Դրանցում, սակայն, ոչ թե ամրագրվում է Հայաստանի կողմից շրջանների օկուպացիայի փաստը, այլ կոչ է արվում Հայաստանին ազդեցություն գործել Լեռնային Ղարաբաղի հայերի վրա՝ ստիպելով նրանց դուրս բերել գորքերը զբաղեցված շրջաններից [14]:

Ժամանակ առ ժամանակ աղբբեջանական կողմը պարբերաբար անդրադառնում կամ արձագանքում էր այլ երկրների կամ միջնորդների կողմից շրջանառության մեջ դրվող այլ առաջարկներին, որոնք ենթադրում էին շրջանների մի մասի վերադարձ այլ պայմանների դիմաց:

Օրինակ, 2004թ. հունվարի 29-ին շրջանառության մեջ դրվեց «շրջանները երկաթգծի բացման դիմաց» բանաձևը, որի հեղինակն, ըստ աղբյուրների կողմի, Եվրամիության խորհրդարանի պատգամավոր Պեր Գարթոնն էր: Աղբյուրների խորհրդարանի խոսնակ Մուրթուզ Ալեսքերովը հայտարարել է, թե «իրենք պատրաստ են վերականգնել երկաթուղային հաղորդակցությունը Հայաստանի և Աղբյուրների միջև, եթե Հայաստանը վերադարձնի գրավյալ 7 շրջաններից 5-ը»: Հայաստանի ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը դեմ է արտահայտվել այդ մոտեցմանը՝ պնդելով, որ հարցը պետք է ստանա ամբողջական լուծում:

Այսօր Աղբյուրների հռետորաբանությունը կտրուկ փոփոխությունների է ենթարկվել: Այժմ Աղբյուրները հավակնություններ է ցուցաբերում ոչ միայն ազատագրված տարածքների, ոչ միայն Լեռնային Ղարաբաղի, այլև Հայաստանի տարածքների նկատմամբ: «Մերն է ոչ միայն Լեռնային Ղարաբաղը, այլև նույնիսկ ներկայիս Հայաստանն է ստեղծվել պատմական աղբյուրների հողերի վրա: Մենք դա լավ գիտենք: Արդեն նաև աշխարհը դա գիտի: Երիվանի խանությունը, Գեյջիկի, Զանգեզուրի մաղալը՝ մեր պատմական հողերն են, և մենք՝ աղբյուրներիցներս, պետք է վերադառնանք և կվերադառնանք նաև այդ տարածքներ», - ասել է Ալիևը [15]:

Ընդհանուր առմամբ, Աղբյուրները փորձում է հնարավոր բոլոր եղանակներով խուսափել խնդրի համակարգային և ամբողջական լուծումից՝ առաջ մղելով կարգավորման առանձին տարրերը կարգավորելու սկզբունքը: Օրինակ, տարածքների վերադարձ՝ առանց կարգավիճակի հարցի լուծման: Դրան գուցա հետ, այսօր Աղբյուրների քաղաքականությունն ուղղված է «Մաղրիդյան սկզբունքների» ստորագրումից խուսափելուն և անմիջապես խաղաղության համաձայնագրի բանակցություններին անցնելուն, ինչը հնարավորություն կտա վերջինիս այս փուլում խուսափել հանրաքվեի միջոցով Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի սահմանման ու դրա ճանաչման վերաբերյալ պարտավորություններ ստանձնելուց և այդ հարցի շուրջ մանրերելու ավելի մեծ դաշտ ստանալ մեծ համաձայնագրի շուրջ բանակցելիս:

Ամփոփելով կարելի է ամրագրել, որ բանակցությունների առավել քան 20 տարիների ընթացքում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի համատեքստում ստեղծվել է հետևյալ իրավիճակը: Նկատվում է Աղբյուրների դիրքորոշման կոշտացում: Եվ դա արտահայտվում է թե՛ հռետո-

րաբանության, թե՛ սահմանային միջադեպերի թվի աճի, թե՛ կարգավորման բաղադրիչների հարցում՝ ընդհուպ մինչև հավակնությունների դրսևորում ոչ միայն ազատագրված շրջանների, նախկին ԼՂԻՄ տարածքի, այլ նաև Հայաստանի տարածքների նկատմամբ:

ԼՂՀ-ում արմատանում է տարածքների վերադարձը բացառող մոտեցումը, որի հիմքում դրվում են թե՛ Սահմանադրությունը, թե՛ անվտանգության խնդիրների սրացումը, թե՛ «անկախության սերնդի» ընկալումները:

Հայաստանի պարագայում, բավական մեծ բազմակարծության ու կարգավորման որևէ տարբերակի շուրջ ընդհանուր համաձայնության բացակայության պայմաններում, հանրային տրամադրություններում առավելապես առկա են հետևյալ դրույթները. պահպանված է մոտեցումը, ըստ որի՝ ԼՂՀ-ն է իր ճակատագրի որոշողը, և Հայաստանի համար պետք է ընդունելի լինի ԼՂՀ ցանկացած որոշում, Ղարաբաղը Հայաստանին կապող տարածքի անհրաժեշտության գիտակցումը (դրա ներքո ընկալվում են Լաչինի և Քելբազարի շրջանները) և զգալիորեն ավելի փոքր անդրադարձ ու անորոշություն՝ կապված մյուս 5 շրջանների հետ:

Այս իրավիճակը պարունակում է մի շարք հնարավորություններ, ինչպես նաև մարտահրավերներ:

Հնարավորությունների թվում կարելի է դիտարկել այն, որ միջազգային հանրությունը, այդ թվում՝ ԵԱՀԿ ՄԽ համանախագահությունը, որքան էլ փորձում է դա ցույց չտալ և քողարկել, բայց չի կարող չնկատել, որ Ադրբեջանի պահվածքը բանակցություններում և տարածաշրջանում ապակառուցողական է և աստիճանաբար ավելի է կոշտանում:

Մասամբ հնարավորություն կարելի է համարել Ադրբեջանում ժողովրդավարության ցածր մակարդակի և հասարակության փակության հետևանքով հանրային իրական տրամադրությունների մասին լիարժեք պատկերացման բացակայությունը: Դա տեղիք է տալիս կարծելու, որ միգուցե ադրբեջանական հասարակության մոտեցումը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման և ընդհանրապես իրավիճակի վերաբերյալ այնքան ծայրահեղ չէ, որքան ներկայացնում են իշխանությունները: Այդ մասին որոշակի պատկերացում կազմելու հնարավորություն են տալիս հասարակության տարբեր շերտերի, առավելապես երիտասարդների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ շփումները:

Հնարավորություն են ԼՂՀ իշխանությունների և ժողովրդի միջև առկա մեծ համախմբումը հակամարտության կարգավորման միասնական տեսլականի շուրջ և չհավասարակշռված զիջումների բացառումը:

Մարտահրավերների թվում հարկավոր է դիտարկել Ադրբեջանի հետևողական բողոքներն ու դժգոհությունները միջազգային հանրության իբր հայանպաստ քայլերի կապակցությամբ, որոնք հանգեցնում են մոտեցումների հավասարակշռության խախտմանը և նրան, որ միջազգային հանրությունը, փորձելով սիրաշահել Ադրբեջանին, կատարում է Բաքվի պահանջն ու տեղիք տալիս շանտաժի:

Տարածաշրջանի համար կարևոր մարտահրավեր է Ադրբեջանի արմատականացումը՝ և՛ հռետորաբանությամբ, և՛ հրադադարի ռեժիմի հաճախակի խախտումներով, և՛ միջազգային հանրությանն ուղղված իր քաղաքականությամբ: Այն հայտարարությունները, որ հաճախ արվում են ներքին լսարանի և սեփական ժողովրդի աչքերում հզորություն ցուցաբերելու համար, իրենց ազդեցությունն են ունենում հակամարտության կարգավորման ընդհանուր մթնոլորտի վրա և խաթարում են վստահությունը: Արդյունքում՝ ի պատասխան առավել կոշտանում են հակամարտության բոլոր կողմերի դիրքորոշումները:

Ադրբեջանի տարաբնույթ հավակնությունները, որոնք առնչվում են նաև ՀՀ տարածքներին, խաթարում են քաղաքական բանակցությունների միջոցով երկարաժամկետ կարգավորման հասնելու վստահությունը:

Չպետք է բացառել, որ այդ կեցվածքը և հռետորաբանությունը կարող են հոգեբանական ներգործություն ունենալ նաև մեր հանրության վրա: Հայկական երկու պետություններում, ի պատասխան Ադրբեջանի վարած քաղաքականության, մեծանում է առավել կոշտ քայլերի հանրային պահանջն ու նվազում զիջումների գնալու պատրաստականությունը:

Ադրբեջանի այս կեցվածքը և պրոպագանդայի դերը հասարակության մեջ արդյունքում խթանում են ծայրահեղական հայացքների տարածումն ադրբեջանական երիտասարդ սերնդի շրջանում, ինչը երկարաժամկետ հեռանկարում հարցականի տակ է դնում Ղարաբաղյան կարգավորման հնարավորությունը:

Ադրբեջանի այս շանտաժային կեցվածքը ներվում է միջազգային հանրության կողմից՝ հանգեցնելով տարածաշրջանում իրավիճակի սրացմանը՝ հետաձգելով քաղաքական կարգավորումն ու մեծացնելով պատերազմի հավանականությունը:

Հաշվի առնելով վերոնշյալ մարտահրավերներն ու հնարավորությունները՝ առաջարկում ենք մի քանի գործողություններ.

1. Ադրբեջանական շանտաժը զսպելու և սեփական հանրության մեջ պարտվողական տրամադրությունները կանխելու համար երբեմն հարկավոր է ակնառու դեմքերի, մասնավորապես՝ Արցախյան պատերազմի մասնակիցների, հրապարակախոսների ներգրավմամբ հայտարարություններ անել՝ ադրբեջանական այլ տարածքների նկատմամբ մեր հնարավոր հավակնությունների, դիրքերում նոր առավելություններ ձեռք բերելու, որոշ հարցերում նախահարձակ լինելու կամ զսպիչ գործողություններում անհամաչափ քայլերի դիմելու հանրային պահանջը ցույց տալու նպատակով: Նման հայտարարությունները, մի կողմից, ցույց կտան Ադրբեջանի իշխանություններին և միջնորդներին, որ արմատականության դրսևորումները հանգեցնում են նաև հայկական կողմերում հանրային տրամադրությունների արմատականացմանը, մյուս կողմից՝ կամրապնդեն բանակցողների դիրքերը:
2. Այդ համատեքստում կարելի է շրջանառության մեջ դնել նաև Հայաստանի կողմից ԼՂՀ հնարավոր ճանաչման և բանակցություններից դուրս գալու թեզը՝ իր տարբեր դրսևորումներով: Օրինակ, կարող է նպատակահարմար լինել ՀՀ-ԼՂՀ պետաիրավական պայմանագրերի բանակցման բարձրաձայնումը, ոչ միայն ընդդիմության, այլև իշխանության ներկայացուցիչների կողմից ԼՂՀ ճանաչման թեզի շրջանառումը և այլն:
3. Ադրբեջանի բողոքների հետևանքով միջազգային հանրության տրամադրությունների հավասարակշռման մղումը կանխելու նպատակով նպատակահարմար է երկկողմ հանդիպումների և համանախագահների հետ քննարկումների ժամանակ նույնպես դժգոհություն հայտնել բանակցային գործընթացի ընթացքից, համանախագահության աշխատանքից, միջազգային հանրության արձագանքներից: Նպատակահարմար կլինի նաև առավել կոշտացնել ՀՀ ԱԳՆ արձագանքները ԵԱՀԿ ՄԽ համանախագահների համահավասարեցման փորձերին և միջազգային կազմակերպությունների կողմից ընդունվող ոչ հայանպաստ հայտարարություններին:
4. Այս համատեքստում հայկական կողմերը պետք է ավելի ակտիվ օգտագործեն այն թեզը, որ միջազգային հանրությունը, այդ թվում նաև միջ-

նորոները, շարունակելով հավասարության նշան դնել կողմերի միջև և հստակ չմատնանշելով, թե ով է հրադադարի բազմաթիվ խախտումները նախաձեռնող կողմը, որևէ կերպ չեն նպաստում սահմաններին լարվածության թուլացմանը: Հարկավոր է մատնանշել, որ Ադրբեջանն է խոչընդոտում միջադեպերի հետաքննության մեխանիզմների մշակմանը և որպես մեր կողմից կամքի դրսևորում՝ հնարավորության դեպքում առավել հանգամանալից և հիմնավորված փաստեր և տեղեկատվություն տրամադրել միջնորդներին միջադեպերի վերաբերյալ:

5. Ադրբեջանական հակահայկական արշավին հակազդելու համար կարևոր է համախմբել թե՛ Հայաստանի, թե՛ Արցախի, թե՛ Սփյուռքի ջանքերը: Այդ հարցը ցանկալի է ներառել համահայկական օրակարգի մեջ և պարբերաբար կազմակերպել հստակ ծրագրված և համակարգվող արշավներ՝ միջազգային հանրության տեղեկացման, հակահայկական քարոզի կանխարգելման և հայանպաստ տրամադրությունների խորացման նպատակով:

Բանակցային գործընթացի ընդհանուր համատեքստում Ադրբեջանի դիրքորոշման կոշտացման դիմագրավումն ու առնվազն միջազգային հանրության մեջ իրավիճակի ճիշտ ընկալման ձևավորումն իրենց ազդեցությունը կունենան ողջ բանակցային գործընթացի, տարածաշրջանային իրավիճակի, այդ թվում նաև տարածքային խնդիրների նկատմամբ կողմերի և միջնորդների դիրքորոշումների փոփոխության վրա:

Հոկտեմբեր, 2015թ.

Աղբյուրներ և գրականություն

1. ԼՂ հարցի կարգավորման «ընդհանուր պետություն» տարբերակ Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտության համապարփակ կարգավորման սկզբունքների մասին, Համաձայնագիր Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին, 10 նոյեմբերի, 1998թ.:
2. ԼՂ հակամարտության կարգավորման փուլային տարբերակ, Համաձայնագիր Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտության դադարեցման մասին (նախագիծ), 2 դեկտեմբերի, 1997թ.:
3. «Քի Վեսթը «շեղում» էր բանակցային գործընթացի տրամաբանությունից», <http://www.mediamax.am/am/news/keywest/544/>, 4 ապրիլ 2011:
4. Интервью министра иностранных дел Вардана Осканяна телекомпании "A1+", http://archive.aravot.am/2001/aravot_rus/May/12/st01.htm, 12 мая 2001

5. Joint Statement on the Nagorno-Karabakh Conflict by U.S. President Obama, Russian President Medvedev, and French President Sarkozy at the L'Aquila Summit of the Eight, July 10, 2009.
6. ԼՂՀ նախագահի մամլո խոսնակ Դավիթ Բաբայանի հարցազրույցը «Armtimes.am» կայքին, <http://armtimes.com/hy/read/43027>, 22 հունիս, 2013:
7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրություն, ընդունված 2006թ. դեկտեմբերի 10-ին:
8. ԼՂՀ ԱԳ նախարար Կարեն Միրզոյանի բացառիկ հարցազրույցը Մեդիամաքս-ին, <http://www.nkr.am/hy/speeches-articles-and-interviews/39/>, 20.06.2013:
9. «Հայաստանի Հանրապետություն», 1 նոյեմբերի, 1997թ.: ՀՀԱՆԱ, 28/01.11.97: Բնագիր: Բնքնագիր: https://hy.wikisource.org/wiki/%D5%8A%D5%A1%D5%BF%D5%A5%D6%80%D5%A1%D5%A6%D5%B4_%D5%A9%D5%A5%D5%9E_%D5%AD%D5%A1%D5%B2%D5%A1%D5%B2%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%E2%80%A4_%D5%AC%D6%80%D5%BB%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AC%D5%B8%D6%82_%D5%BA%D5%A1%D5%B0%D5%A8#cite_note-2
10. ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականի հայտարարությունը, <http://nt.am/am/news/126420/>, 3 փետրվար, 1998թ. . :
11. Հատված Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախկին նախարար Վարդան Օսկանյանի «Անավարտ տասնամյակ» գրքից, 24.06.2011, <http://www.2rd.am/hy/Lernayin-Karabagh>
12. Նախագահն ընդունել է Եվրամիության հատուկ ներկայացուցիչ Հերբերտ Ջարբերին, <http://www.president.am/hy/press-release/item/2014/07/30/President-Serzh-Sargsyan-meeting-with-EU-special-representative/>, 30.07.2014.
13. Армении следует, проявив ответственность, освободить оккупированные территории Азербайджана - МИД АР, <http://www.1news.az/politics/20150523062731836.html>, 23.05.2015.
14. ՄԱԿ Անվտանգության խորհրդի բանաձևեր 822(1993), 853(1993), 874 (1993), 884 (1993).
15. Речь Президента, Верховного главнокомандующего Ильхама Алиева, <http://news.day.az/politics/591463.html>, 26 июня 2015.

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ
ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Աննա Կարապետյան

Ամփոփագիր

Արցախի ժողովրդի ինքնորոշման ձգտմանն ի պատասխան Ադրբեջանի սանձազերծած պատերազմը ստեղծեց նոր իրավիճակ: Ադրբեջանի և Արցախի միջև առաջացան տարածքային խնդիրներ, որոնց կարգավորման տարբերակներ պարբերաբար առաջարկվում են միջնորդների կողմից:

Հողվածում դիտարկվում է տարածքային խնդիրների լուծման առաջարկվող տարբերակների փոխակերպումը բանակցային գործընթացում և խնդրի ընկալումների փոփոխությունը երեք կողմերում և, առանձնացնելով ընդհանուր միտումները, առաջարկվում են գործողություններ կամ թեզեր, որոնք կնպաստեն բանակցային գործընթացում հայկական կողմերի դիրքերի ամրապնդմանը:

Դիտարկվում են 1994թ. մայիսին կնքված հրադադարից հետո քննարկված կարգավորման փաթեթները, կողմերի բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարությունները, դուրս են բերվում հիմնական միտումները, առաջարկվում են գործողություններ ուղղված առկա մարտահրավերների նվազեցմանն ու հնարավորությունների ամրապնդմանը:

ТРАНСФОРМАЦИИ ВОСПРИЯТИЯ ТЕРРИТОРИАЛЬНЫХ ВОПРОСОВ В ПЕРЕГОВОРНОМ ПРОЦЕССЕ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА

Анна Карапетян

Резюме

Война, развязанная Азербайджаном в ответ на стремление народа Карабаха к реализации права на самоопределение, создала новую ситуацию. Между Карабахом и Азербайджаном возникли территориальные споры, варианты разрешения которых периодически предлагались посредниками.

Целью данной статьи является рассмотрение трансформации предлагаемых вариантов разрешения территориальных споров на протяжении переговорного процесса и отслеживание трансформации восприятия этого вопроса у трех сторон, а также разработка предложений, направленных на укрепление позиций армянских сторон в переговорном процессе.

С этой целью рассмотрены предложения посредников урегулирования Карабахского конфликта, начиная со времени подписания режима прекращения огня, а также заявления высокопоставленных лиц трех сторон в разные периоды времени. В результате анализа были выведены основные тенденции и разработаны некоторые предложения, направленные на снижение рисков и расширение возможностей армянских сторон в переговорном процессе.

**TRANSFORMATION OF THE PERCEPTIONS OF TERRITORIAL ISSUES
IN THE KARABAKH CONFLICT NEGOTIATION PROCESS**

Anna Karapetyan

Resume

The war unleashed by Azerbaijan in response to the desire of Karabakh people to realize their right to self-determination created a new situation. As a result, territorial disputes arose between Karabakh and Azerbaijan, and options for its resolution have periodically been offered by the mediators.

The purpose of this paper is to consider the transformation of the proposed options for the resolution of territorial disputes during the negotiation process and to track changes in the perception of this issue by the three involved parties. The paper also distinguishes the general trends and provides recommendations or theses aimed at strengthening the positions of the Armenian sides in the negotiation process.

For this purpose, the paper considers the conflict settlement packages discussed since the time of signing the ceasefire in 1994, as well as the statements by senior officials of the three sides made at different times. As a result of the analysis, the main trends are derived and some proposals are presented aimed at reducing the risks and expanding the opportunities for the Armenian sides in the negotiation process.

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԻ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Մտեփան Հասան-Ջալալյան*

Բանալի բառեր՝ քաղաքական գիտակցություն, քաղաքական մշակույթ, քաղաքական կյանք, քաղաքական համակարգ, ինքնորոշման ազատություն, քաղաքական վարքագիծ, քաղաքական մասնակցություն, համապետական ընտրություններ:

Արցախի Հանրապետության քաղաքական պատմության յուրահատկությունները, մասնավորապես՝ ազնվականական դասի համեմատաբար երկարատև պահպանված լինելու իրողությունը, արցախահայության ճնշող մեծամասնության բնիկ լինելը, իր ներսում մեծապես քիչ թվով ներգաղթյալներ պարունակելու հանգամանքը, վերջին գրեթե երկուսուկես տասնամյակներում անկախ հանրապետության հռչակումն ու պետական շինարարությունը, նպաստել և նպաստում են զանգվածային քաղաքական մշակույթի վերարտադրությանը:

Ինչպես ցույց են տալիս սոցիոլոգիական հետազոտությունները, Արցախի Հանրապետության զանգվածային քաղաքական գիտակցության մշակույթի հիմնական գծերից մեկը հայրենասիրությունն է, որն առավել արտահայտված դրսևորվում է երիտասարդության շրջանում:

Նախընթաց ամենադժվարին պայմաններում անգամ, երբ դրված է եղել հայության լինել-չլինելու հարցը, հայ ժողովրդի արցախյան ազգահատվածը մշտապես կառչած է մնացել իր հողին, անգամ շրջապատված վիճակում գենքը վայր չի դրել ու չի հանձնվել, այլ փորձել է հիմնականում գենքի ուժով, իսկ երբեմն էլ՝ դիվանագիտությամբ, բայց բոլոր դեպքերում ինքնուրույն, պաշտպանել իր բնօրրանը:

* ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի հայցորդ, ՀՀ Ազգային ժողովի փորձագետ:

Սոցիալական բնույթի պրոբլեմներն արցախցիների համար ունեցել են համեմատաբար երկրորդական նշանակություն, նրանց հիմնական ջանքերը գլխավորապես ուղղված են եղել ազատագրության խնդիրների իրականացմանը: Այսուհանդերձ, ինչպես ցույց են տալիս բնակչության քաղաքական տեղեկացվածության հետազոտությունները, քաղաքականության վերաբերյալ արցախցիների կողմնորոշումն ունի արտահայտված բնույթ կամ բարձր մակարդակ:

Այսպես, 2015թ. մայիսի 3-ին խորհրդարանական ընտրություններին մասնակցող համամասնական և մեծամասնական թեկնածուների վարկանիշներն ու դրանք պայմանավորող գործոնները պարզելու նպատակով նույն թվականի ապրիլին անցկացված սոցիոլոգիական հետազոտության համաձայն՝ Ազգային ժողովի ընտրություններով հետաքրքրված է եղել քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների 40%-ը [1, էջ 5]: Սա կարելի է համարել ժամանակակից Արցախի Հանրապետության քաղաքական մշակույթի կարևորագույն ցուցանիշներից մեկը:

Հատկանշական է, որ թեև բարձր է քաղաքականության վերաբերյալ Արցախի Հանրապետության բնակչության տեղեկացվածության մակարդակը, այնուամենայնիվ, բնակչության քիչ մասն է ընդգրկված ամենօրյա քաղաքական գործընթացներում: Մասնավորապես, եթե քաղաքական գործընթացներում մասնակցության չափանիշ ընդունենք այս կամ այն կուսակցության պատկանելությունը, ապա տեսնում ենք, որ արցախահայության փոքր մասն է ակտիվություն դրսևորում Արցախի Հանրապետության առօրյա քաղաքական կյանքում: 2015թ. ապրիլի դրությամբ կուսակցական է եղել Արցախի Հանրապետության բնակչության ընդամենը 6.3%-ը [1, էջ 4]:

Քաղաքականության նկատմամբ արցախցիների՝ որպես հայ ժողովրդի ակտիվ, նախաձեռնող, եռանդուն ազգահատվածի, մշտական վերաբերմունքի բացակայությունը բացատրվում է մի շարք փոխկապակցված պատճառներով: Այդ պատճառներից մեկն, ըստ մեզ, Արցախի Հանրապետության քաղաքացիների մեծամասնության համար քաղաքականության նկատմամբ հետաքրքրության բացակայությունն է: Մյուս պատճառն Արցախի Հանրապետության բարձրագույն քաղաքական իշխանությունների, մասնավորապես՝ հանրապետության նախագահի նկատմամբ առկա հանրային վստահությունը կարող է լինել:

Մտածելով, որ քաղաքական խնդիրներով պետք է զբաղվեն երկրի բարձրագույն քաղաքական իշխանության մարմինները, որոնք ձևավորվում են համապետական ընտրությունների արդյունքում, Արցախի Հանրապետության քաղաքացիները քաղաքականության նկատմամբ չեն ցուցաբերում ամենօրյա հետաքրքրություն: Մինչդեռ ընտրական ակտիվության ցուցանիշները վկայում են, որ Արցախի Հանրապետության քաղաքացիներն ակտիվորեն հետաքրքրվում են համապետական ընտրություններով: 2012թ. նախագահական ընտրությունների ընթացքում ընտրություններին քաղաքացիների մասնակցության ակտիվությունը կազմել է 73%¹, իսկ 2015թ. մայիսի 3-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների ընթացքում այդ ցուցանիշը կազմել է մոտ 71%²:

Հարկ է նշել, որ եթե հետևենք Արցախի Հանրապետության քաղաքական կյանքին և քաղաքական մշակույթին, սկսած հանրապետության անկախության հռչակումից մինչև մեր օրերը, ապա կարող ենք ասել, որ ընդհանուր առմամբ աճել է Արցախի Հանրապետության հասարակության քաղաքականացվածության աստիճանը: Այդ մասին են վկայում մինչ օրս տեղի ունեցած բոլոր համապետական ընտրություններին արցախահայության մասնակցության ցուցանիշները: Արցախցին, որպես կանոն, համերաշխ է պետության հետ բոլոր մակարդակներում: Պետությունը (կառավարությունը) նույնացվում է գոյություն ունեցող քաղաքական համակարգի հետ: Պետության, որպես բարձրագույն իշխանական ատյանի, գոյության ճանաչման փաստը, որն էական ազդեցություն ունի քաղաքացիների կյանքում, և որն իր գործունեության համար պատասխանատվություն է կրում նրանց առջև, Արցախի Հանրապետության հասարակության բոլոր շերտերի և խավերի համար միասնության կայուն երաշխիքն է: Կառավարությունն արցախցու համար բարձրագույն ատյան է, որն անսխալական չէ և, հետևաբար, պետք է ժողովրդի առջև պատասխանատվություն կրի իր սխալների և բացթողումների համար: Այսպիսով, կարծում ենք՝ ճիշտ կլինի ասել, որ պետության նկատմամբ վերաբերմունքի առումով արցախցիները կարևորում են ժողովրդի առջև նրա պատասխանատվության գաղափարը:

¹ cecnr.am/լրի-նախագահի/19-հուլիսի-2012թ./#

² cecnr.am/wp-content/uploads/2015/05/Նախնական-արդյունքներ.pdf

Արցախահայության քաղաքական կողմնորոշման մշակույթի տրամաբանական շարունակությունը քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների նկատմամբ կողմնորոշման մշակույթն է: Արցախի Հանրապետության քաղաքացու համար ժամանակակից կուսակցությունը չի համարվում որպես մի կենտրոն, որը կազմակերպում է իր քաղաքական կյանքը: Կուսակցությունը նրա համար ավելի շուտ քաղաքական ուժ է, որը կազմակերպում է ընտրական գործընթացը և օգնում է իրեն կատարել ճիշտ ընտրություն: Արցախցին սկզբունքային տարբերություն չի տեսնում կուսակցությունների միջև և թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր կուսակցությունների նկատմամբ ունի լոյալ վերաբերմունք: Ընդհանուր առմամբ, արցախցիները լոյալ վերաբերմունք ունեն երկրում գոյություն ունեցող քաղաքական համակարգի նկատմամբ: Այդ լոյալ կողմնորոշումն արտահայտվում է նախևառաջ քաղաքական համակարգի բաղկացուցիչ հանդիսացող ինստիտուտների նկատմամբ դրսևորվող վերաբերմունքով: Օրինակ, բարձրագույն քաղաքական իշխանության մարմինների ղեկավարների գործունեության քննադատությունն ամենին չի ազդում ինստիտուտի նկատմամբ դրական վերաբերմունքի վրա:

Արցախահայության քաղաքական մշակույթի կարևորագույն բնորոշիչներից մեկը նրանց օրինապահությունն է: Այս իմաստով երկրի քաղաքական համակարգում կարևոր տեղ է զբաղեցնում Սահմանադրությունը՝ որպես հասարակության կյանքը կանոնակարգող ամենակարևոր իրավաքաղաքական ինստիտուտ: Երկրի մայր օրենքն ընդունվել է 2006թ. դեկտեմբերի 10-ին, համաժողովրդական հանրաքվեի արդյունքում: Հարկ է, սակայն, նշել, որ արցախահայության կյանքում սահմանադրաիրավական ավանդույթներն ունեն ավելի քան մեկուկես հազարամյակի պատմություն: Բանն այն է, որ V դարի վերջին Արցախի Հանրապետությունում ընդունվել է աշխարհի առաջին սահմանադրությունը, որը կոչվել է «Սահմանադրություն կանոնական»:

Արցախի Հանրապետության Սահմանադրությունը հռչակում է այնպիսի իրավունքներ, ազատություններ և սկզբունքներ, որոնք պաշտպանում են Արցախի Հանրապետության բոլոր քաղաքացիները և ընդունվում են նրանց կողմից՝ որպես հիմնական քաղաքական արժեքներ, որոնց նկատմամբ ունեցած կողմնորոշումը Արցախի Հանրապետության քաղաքական մշակույթի կարևորագույն բաղադրատարրերից մեկն է: Սահմանադրությունը հռչակում

և ամրագրում է ազատության սկզբունքը: Այն երաշխավորում է մտքի, խղճի և դավանանքի ազատությունը [2, Հոդված 26]:

Արցախցու համար ազատությունը քաղաքական և կենսական արժեք է, որը որոշում է նրա հայացքը սեփական երկրի սոցիալական և քաղաքական կյանքի բազմաթիվ երևույթների նկատմամբ: Ըստ որում, այն արցախցիների կողմից մեկնաբանվում է որպես ինքնորոշման ազատություն, այսինքն՝ սեփական կյանքն անարգել կազմակերպելու՝ օրենքով երաշխավորված հնարավորություն: Մյուս կարևոր արժեքը, որի նկատմամբ կողմնորոշումը նույնպես արցախյան քաղաքական մշակույթի կարևորագույն բաղադրատարրերից մեկն է, և որը հատուկ ամրագրված է երկրի մայր օրենքում, հավասարությունն է: Չնայած հավասարությունը, ինչպես և ազատությունը, կարող է ունենալ տարբեր մեկնաբանություններ, սակայն արցախցին հավասարություն ասելով նկատի ունի բոլորի հավասարությունն օրենքի առջև [2, Հոդված 21]: Այլ խոսքով՝ հավասարությունն ընկալվում է որպես Արցախի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու համար կյանքի, ազատության և սեփականության նկատմամբ հավասար հնարավորությունների առկայություն, ինչպես նաև այդ հնարավորություններն օրենքով պաշտպանելու հավասարություն:

Ցանկացած հասարակության քաղաքական մշակույթ որոշվում է քաղաքական վարքագծում արտահայտվող ազգային բնավորությամբ, ազգային ավանդույթներով, որոնք, պահպանելով որևէ կոնկրետ հանրույթի քաղաքական գործընթացի պատմական անընդհատությունը, ձևավորում են նոր սերունդների կողմից մշակույթի առավել հաստատուն և յուրօրինակ տարրերի ժառանգման մեխանիզմ: Ի՞նչ է քաղաքական վարքագիծը: Գոյություն ունեն այս ֆենոմենի բազմաթիվ սահմանումներ: Դրանցից մեկի համաձայն, օրինակ, «Քաղաքական վարքագիծը անձի, սոցիալական խմբի գնահատականներում, դիրքորոշումներում, որոշակի գործողություններում արտահայտվող առօրեական կոնկրետ քաղաքական գործողությունն է» [3, էջ 21]: Մենք քաղաքական վարքագիծ ասելով նկատի ենք առնում սոցիալական սուբյեկտի պրակտիկ փոխազդեցությունը քաղաքական միջավայրի հետ, կամ ավելի կոնկրետ՝ քաղաքական պրոցեսի սուբյեկտների պրակտիկ հարաբերությունը քաղաքական համակարգի նկատմամբ: Սակայն միանգամից հարց է առաջանում՝ ի՞նչ բովանդակություն ունի այդ «փոխազդեցությունը» կամ «հարա-

բերությունը»: Հետազոտողների զգալի մասը, իհարկե՝ ոչ միաթեքորեն, նշում է, որ խոսքը վերաբերում է քաղաքական մասնակցությանը [4]: Իսկ քաղաքական մասնակցությունն, ըստ մեզ, ոչ այլ ինչ է, եթե ոչ պետական իշխանության կիրառման կամ օգտագործման ոլորտում քաղաքացիների պրակտիկ գործունեության տարբեր միջոցների ամբողջություն, որոնց նպատակն է ազդեցություն ունենալ քաղաքական որոշումների մշակման և ընդունման գործընթացների վրա:

Տարբեր են քաղաքական կյանքին մասնակցության ձևերը: Նկատի ունենալով, որ ժողովրդավարական քաղաքական վարչակարգի պայմաններում հասարակության քաղաքական մասնակցությունը հիմնականում դրսևորվում է քաղաքացիների՝ ընտրություններին մասնակցության տեսքով՝ կկենտրոնանանք Արցախի Հանրապետությունում ընտրական մասնակցության ձևի վրա: Բացահայտելու համար Արցախի Հանրապետությունում քաղաքական գիտակցության և վարքագծի, ինչպես նաև քաղաքական մասնակցության հետագա զարգացման միտումները՝ անհրաժեշտ ենք համարում վերլուծել քաղաքացիների մասնակցությունը տեղի ունեցած համապետական ընտրություններին և հանրաքվեներին:

Ստորև բերված *Աղյուսակում* պաշտոնական տվյալների հիման վրա կներկայացնենք 1991-2015թթ. ընթացքում Արցախի Հանրապետության քաղաքացիների՝ հանրաքվեներին և համապետական ընտրություններին մասնակցության, որպես քաղաքական կյանքին մասնակցության հիմնական դրսևորման, պատկերն Արցախի Հանրապետությունում:

Աղյուսակ

1991-2015թթ. ընթացքում Արցախի Հանրապետությունում տեղի ունեցած հանրաքվեներին և համապետական ընտրություններին քաղաքացիների մասնակցության պատկերը

Հանրաքվեի կամ համապետական ընտրության անցկացման թվականը և անվանումը	Ընտրողների ընդհանուր թիվը ըստ ընտրացուցակների	Գրանցված և քվեաթերթիկ ստացած ընտրողների ընդհանուր թիվը	Մասնակցության տոկոսը
10.12.1991թ., Անկախության հանրաքվե	132.328	108.736	82.2%
28.12.1991թ., Գերագույն խորհրդի ընտրություն	չկա	չկա	չկա
30.04.1995թ., Ազգային ժողովի արտահերթ ընտրություն	չկա	չկա ¹	73.9%
24.11.1996թ., նախագահի ընտրություն	89.733	70.052	78.07%
1.09.1997թ., նախագահի արտահերթ ընտրություն	90137	76.257	84.6%
18.06.2000թ., Ազգային ժողովի ընտրություն	85.866	51.267	59.7%
11.08.2002թ., նախագահի ընտրություն	85.523	64.736	75.7%
19.06.2005թ., Ազգային ժողովի ընտրություն	87.949	64.841	73.3%
10.12.2006թ., Սահմանադրության ընդունման հանրաքվե	90.077	78.389	87.02%
19.07.2007թ., նախագահի ընտրություն	92.114	71.286	77.4%
23.05.2010թ., Ազգային ժողովի ընտրություն	98.518	66.771	67.7%
19.07.2012թ., նախագահի ընտրություն	99.227	72.958	73.5%
3.05.2015թ., Ազգային ժողովի ընտրություն	102.042	72.296	70.8% ²

¹ Համաձայն ԼՂՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի հավաստագրման՝ 1991թ. դեկտեմբերի 28-ին տեղի ունեցած Գերագույն խորհրդի և 1995թ. ապրիլի 30-ին տեղի ունեցած Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների՝ ըստ ընտրացուցակների ընտրողների ընդհանուր թվի և գրանցված ու քվեաթերթիկ ստացած ընտրողների ընդհանուր թվի վերաբերյալ տեղեկությունները չեն պահպանվել:

² Տվյալները վերցված են Արցախի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքից՝ www.cecnkr.am:

Ինչպես տեսնում ենք, քննվող ժամանակահատվածում ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների մասնակցության ամենաբարձր ցուցանիշը (87.02%) գրանցվել է 2006թ. դեկտեմբերի 10-ին տեղի ունեցած Սահմանադրության հանրաքվեի ժամանակ: Երկրորդ տեղում (84.6%) 1997թ. սեպտեմբերի 1-ին տեղի ունեցած արտահերթ նախագահական ընտրությունների ժամանակ քաղաքացիների մասնակցության ցուցանիշն է, իսկ երրորդ տեղում (82.2%) 1991թ. դեկտեմբերի 10-ին տեղի ունեցած անկախության հանրաքվեին քաղաքացիների մասնակցության ցուցանիշն է: Ինչպես երևում է աղյուսակից, 1991, 1996, 1997, 2002, 2006, 2007, և 2012թթ. տեղի ունեցած հանրաքվեներին և նախագահական ընտրություններին քաղաքացիների մասնակցության համեմատաբար բարձր ցուցանիշերի համեմատ, Արցախի Հանրապետության քաղաքացիները ցածր մասնակցություն են ցուցաբերել 1995, 2000, 2005, 2010 և 2015թթ. տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններին: Իսկ 2000թ. հունիսի 18-ին տեղի ունեցած 3-րդ գումարման Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ գրանցվել է մինչ օրս Արցախի Հանրապետությունում տեղի ունեցած հանրաքվեներին և համապետական ընտրություններին քաղաքացիների մասնակցության ամենացածր ցուցանիշը՝ 59.7%:

Նկատի ունենալով հանրաքվեներին և համապետական ընտրություններին արցախցիների մասնակցության վեր բերված պաշտոնական ցուցանիշները՝ կարելի է ասել, որ Արցախի Հանրապետության քաղաքացիների համար կարևոր և առաջնային նշանակություն ունեն երկրի ազգային-պետական կարգավիճակին, պետության մայր փաստաթղթի, որպես երկրի հետագա զարգացման և առաջընթացի ապահովման ամենակարևոր իրավաքաղաքական փաստաթղթի, ընդունմանը, ինչպես նաև պետության առաջին դեմքի, որպես երկրի ինքնիշխանության, անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորի, ընտրությանը վերաբերող հանրաքվեներն ու ընտրությունները: Ընտրություններին մասնակցության ցուցանիշները վկայում են, որ ընտրությունները չափազանց կարևոր տեղ են գրավում Արցախի Հանրապետության հասարակության քաղաքական կյանքում: Ըստ էության, ընտրությունները, մասնավորապես՝ նախագահական, Արցախի Հանրապետությունում ավելին են, քան պարզապես այս կամ այն պաշտոնի համար քաղաքական գործչի ընտրությունը:

Ամենօրյա զանգվածային կուսակցական կյանքի բացակայության պայմաններում ընտրություններն Արցախի Հանրապետությունում, ներառյալ հիմնականում հեռակա կարգով վարվող քաղաքական բանավեճերը, նախընտրական քարոզարշավները, որոնց իր մասնակցությունն է ունենում քաղաքացիների փոքր մասը, յուրատեսակ ձևով փոխարինում է ամենօրյա կուսակցական կյանքին, ընդ որում՝ երկարատև ժամանակահատվածով:

Ըստ քաղաքական կյանքին ունեցած մասնակցության՝ Արցախի Հանրապետության քաղաքացիներին պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի՝

1. մասնակիցներ – քաղաքական կյանքում քիչ թե շատ ակտիվորեն ներգրավված անձինք,
2. դիտորդներ – քաղաքական գործընթացներում նվազագույն մասնակցություն ունեցողներ,
3. անտարբերներ - անձինք, ովքեր ընդհանրապես ներգրավված չեն քաղաքական գործընթացներում:

Արցախցիների համար հիմնականում համապետական ընտրություններին և հանրաքվեներին բարձր ցուցանիշներով մասնակցելու անհրաժեշտությունը պայմանավորված է նաև արտաքին գործոնով: Բանն այն է, որ ամեն համապետական ընտրությունների ժամանակ Արցախի Հանրապետության պատկան մարմինների հրավերով ընտրությունների ընթացքին հետևելու նպատակով Արցախի Հանրապետությունում գտնվող միջազգային դիտորդները, որոնցից շատերը ներկայացնում են աշխարհում քաղաքական կշիռ ունեցող և ադրբեջանա-արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում ներգրավված պետություններ, ուշիուշով հետևում են, թե որքանով են տեղի ունեցող ընտրական գործընթացները համապատասխանում ժողովրդավարության չափանիշներին:

Մինչ օրս տեղի ունեցած ընտրությունների արդյունքում միջազգային դիտորդներն արձանագրել են, որ ընտրությունները համապատասխանել են ընտրությունների անցկացման ժողովրդավարության չափորոշիչներին: Մրանով արցախահայությունն ապացուցել և ապացուցում է, որ ի գորու է ապրել անկախ, հավատարիմ է ժողովրդավարության ավանդույթներին և այդ ավանդույթների լավագույն շարունակողն է: Ամփոփելով Արցախի Հանրապետու-

թյունում քաղաքացիների ընտրական վարքագծի վերաբերյալ վերն ասվածը՝ նշենք, որ քաղաքացիների մեծամասնությունը քվեարկության ժամանակ առաջնորդվում է հիմնականում անհատականացված մոտեցումներով՝ կարևորելով և առաջնային համարելով ոչ թե կուսակցությունը, այլ անձին:

Հոկտեմբեր, 2015թ.

Աղբյուրներ և գրականություն

1. «Սոցիոմետր» անկախ սոցիոլոգիական կենտրոն, 2015թ. ԼՂՀ Ազգային ժողովի համամասնական և մեծամասնական թեկնածուների ընտրվելու վարկանիշերը և պայմանավորող գործոնները, հատուկ սոցիոլոգիական հետազոտության հաշվետվություն, Երևան, 2015թ.:
2. Արցախի Հանրապետության Սահմանադրություն:
3. *Օրդուխանյան Է., Սուքիասյան Հ.,* Քաղաքական մշակույթի առանձնահատկությունները Հայաստանում, Երևան, 2012թ.:
4. *Ковлер А., Смирнов В.,* Демократия и участие в политике, Москва, 1986.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ստեփան Հասան-Ջալալյան

Ամփոփագիր

Հոդվածում վերլուծվում են Արցախի Հանրապետության հասարակության քաղաքական գիտակցությանը և վարքագծին վերաբերող հարցեր: Հենվելով Արցախի բնակիչների քաղաքական տեղեկացվածության մասին սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների վրա՝ նշվում է, որ արցախցիները վառ արտահայտված քաղաքական կողմնորոշում ունեն:

Եվ այնուամենայնիվ, չնայած Արցախի Հանրապետության քաղաքացիների՝ քաղաքականության մասին տեղեկացվածության համեմատաբար բարձր մակարդակին, բնակչության ընդամենը մի փոքր մասն է ներգրավված ամենօրյա քաղաքական գործընթացներում: Հանրային քաղաքական գիտակցությունը սերտորեն կապված է քաղաքական վարքագծի հետ և արտացոլվում է դրանում:

Սոցիալական վարքագիծը քաղաքական միջավայրի հետ գործնական փոխգործակցության առարկա է հանդիսանում: Նկատի է առնվում քաղաքական կյանքին մասնակցությունը:

Հաշվի առնելով, որ վարքագծի քաղաքական մշակույթի ամենակարևոր կողմերից մեկը ընտրազանգվածի վարքագիծն է, ինչպես նաև հենվելով 1991-2015թթ. Արցախի Հանրապետությունում անցկացված համապետական նշանակության ընտրությունների ու հանրաքվեների վերաբերյալ պաշտոնական տվյալների վրա՝ աղյուսակով ներկայացվել է դրանց Արցախի Հանրապետության քաղաքացիների մասնակցության պատկերը:

ОСОБЕННОСТИ ПОЛИТИЧЕСКОГО СОЗНАНИЯ И КУЛЬТУРЫ ПОВЕДЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРЦАХ

Степан Асан-Джалалян

Резюме

В данной статье анализируются вопросы, касающиеся политического сознания и поведения арцахского общества. Основываясь на результатах социологического исследования о политической осведомленности жителей Арцаха, можно отметить яркую выраженность политической ориентированности арцахцев и высокий уровень их политического сознания.

Тем не менее следует отметить, что, несмотря на относительно высокий уровень политической информированности граждан Республики Арцах, лишь малая часть населения вовлечена в повседневные политические процессы. Общественное политическое сознание тесно связано с политическим поведением и выражается в этом поведении. Социальное поведение является предметом практического взаимодействия с окружающей политической средой, или, более конкретно, практического отношения субъектов политического процесса к политической системе.

Говоря об отношениях или о взаимодействиях, мы имеем в виду политическое участие.

Учитывая, что один из самых важных аспектов политической культуры поведения – электоральная культура поведения, а также основываясь на официальных данных 1991-2015гг. о Республики Арцах в общих выборах и референдумах, в статье обрисована картина участия граждан Республики Арцах в политических процессах.

**THE PECULIARITIES OF POLITICAL CONSCIOUSNESS AND
CULTURE OF POLITICAL BEHAVIOR IN THE ARTSAKH REPUBLIC**

Stepan Hasan-Jalalyan

Resume

The article analyzes the issues related to political consciousness and behavior of Artsakh society. Based on sociological surveys about Artsakh citizens' political awareness, it is noted that they have clearly expressed political orientation.

However, it is noted that, despite the relatively high level of awareness of citizens of the Republic of Artsakh, only a small part of the population is involved in daily politics. Public political consciousness is closely linked to the political behavior and is reflected in that behavior. More specifically social behavior is subject to the practical interaction with the political system/environment. This relationship or interaction implies political participation.

Considering that the electorate's behavior one of the most important aspects of the culture of political behavior, as well as based on the official data for the year 1991-2015 about participation in the general elections and referendums of the Artsakh Republic, the article illustrates the pattern of Artsakh Republic citizens' level of participation.

ՄԵՑԵՍՄԻՈՆԻԶՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Մերոք Սուռյան՝

Բանայի բառեր՝ սեցեսսիա, սեցեսսիոնիզմ, քաղաքական քարտեզ, անջատողականություն, տնտեսաաշխարհագրական, էթնիկական, ռասայական, կրոնական, քաղաքական գործոն, պետություն, միջազգային իրավունք, անկախություն, ինքնորոշում:

Պետության կարևոր հատկանիշներից է նրա անկախությունը, այսինքն՝ ամբողջ սեփական տարածքի նկատմամբ իշխանության տիրապետությունը և անկախությունը ներքին քաղաքական հարաբերություններում: Պետական տարածքների անօտարելիության սկզբունքը նշանակում է, որ պետական տարածքի ոչ մի մաս չի կարող օտարվել, տրվել ուրիշ պետության կամ անկախանալ, իր սեփական կամքով այդ տարածքին ինքնավարություն կամ անկախություն տալուց բացի:

Մյուս կողմից՝ միջազգային իրավունքն ապահովում է ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքը: Այն ձևակերպված է ՄԱԿ 1970թ. համապատասխան հռչակագրում: Այսօր, ի հակադրություն համաշխարհային ինտեգրացիայի կողմնակիցների, սեցեսսիոնիստական ազգայնական գաղափարախոսություն կրողները բարձրաձայնում են ինքնորոշման իրավունքները և դրան ավելի մեծ տեղ տալու անհրաժեշտությունը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Երկիր մոլորակի քաղաքական քարտեզը լայնամասշտաբ փոփոխությունների է ենթարկվել: Այդ գործընթացն արտահայտվել է գոյություն ունեցած պետությունների կազմից առանձին տարածքների դուրս գալով (*սեցեսսիա՝ պետության կազմից նրա ինչ-որ մասի դուրս գալը*. լատ. *secessio* - գնալ, հեռանալ, *secedo* - գնում եմ, հեռանում եմ բառից) և այդ տարածքների բազայի վրա նոր ինքնակա-

¹Փոխզնդապետ, ՀՀ ԶՈւ ԳՇ ռազմատեղագրական բաժին, աշխարհագրական գիտությունների թեկնածու:

ռավարվող քաղաքական տարածքային կազմավորումների ձևավորմամբ: Սեցեսսիան անջատողականության արդյունքն է, անեքսիայի հակառակը: Տերմինն առաջին անգամ այս նշանակությամբ ի հայտ է եկել անկախության համար ամերիկյան պատերազմում:

Ապագադուրացման գործընթացի դանդաղեցմամբ սեցեսսիոն երևույթները նվազել են, սակայն աշխարհի քաղաքական քարտեզի ձևափոխման գործընթացը չի ավարտվել: 20-րդ դարում քաղաքական քարտեզի 2-րդ մեծ ձևափոխումը տեղի է ունեցել 1990-ական թթ.՝ հիմնականում Խորհրդային Միության, Չեխոսլովակիայի և Հարավսլավիայի տրոհումների հետևանքով: Սեցեսսիոն գործընթացները շարունակվում են նաև 21-րդ դարում:


Սեցեսսիայի վրա հիմնված ազգայնական գաղափարախոսությունը հեշտ է յուրացվում տարբեր խմբավորումների կողմից՝ հասարակական կազմակերպություններից մինչև ահաբեկիչներ: Շատ քաղաքական կազմակերպություններ իրենց ծրագրերը կառուցում են այդ գաղափարների շուրջ: Կապի և ՋԼՄ զարգացումը մեծացնում է սեցեսսիոնիստական գաղափարախոսության արդյունավետ քարոզչության հնարավորությունները: Հաճախ առանձին տարածքներ հայտնվում են ապստամբների ամբողջական վերահսկողության տակ և փաստացի մեկուսացվում են պետությունից, այսինքն՝ տեղի է ունենում փաստացի սեցեսսիա: Որոշ դեպքերում սեցեսսիոնիզմի զարգացումն ուղեկցվում է բաց, հաճախ՝ զինված հակամարտությամբ «մայր» պետության իշխանությունների դեմ: Ներկայումս քննարկվող կարևոր հարցերից մեկն այն է, թե սեցեսսիան և սեցեսսիոնիզմը պետությունների համար վտանգ են արդյոք: Առաջին հայացքից պատասխանը միանշանակ է. այսօր աշխարհում կան բազմաթիվ ներպետական հակամարտություններ, վիճաբանություններ, որոնցում սեցեսսիան համարվում է ընդդիմադիրների առանցքային պահանջը և այն խլում է մարդկային կյանքեր, քայքայում տնտեսությունը և այլն: Սակայն սեցեսսիան և սեցեսսիոնիզմը նաև անկախություն և ինքնորոշում տանող ճանապարհներից մեկն են: Սեցեսսիոնիզմի ազդեցությունը շոշափելի է աշխարհի շատ տարածաշրջաններում՝ Եվրոպայում (Նկ. 1)¹ և Լատինական Ամերիկայում (Նկ. 2) հայտնի է զինված սեցեսսիոնիզմը (Օլսթեր, Բասկերի երկիր, Կոսովո՝ Եվրոպայում, Կոլումբիա, Չյապաս՝ Լա-

¹ Քարտեզների համար հիմք է հանդիսացել՝ *Попов Ф.А., География сецессионизма в современном мире. Автореферат диссертации, М., 2010.*


տինական Ամերիկայում), մինչև վերջերս այն տեղ ուներ նաև Օվկիանիայում (Նոր Կալեդոնիա, Բուգենվիլ), սակայն առավել մեծ տարածում ունեն դրանք Ասիայում (Նկ. 3) և Աֆրիկայում (Նկ. 4): «Սև մայրցամաքը» բզկտվում է տասնյակ «թեժ կետերից», որոնք, այլ ծագումներից բացի, ունեն սեցեսսիոնիստական ծագում: Դրանցից են՝ Հյուսիսային Կոտ դ'Իվուարը, ամբողջ Սուդանը, Կազամանը՝ Սենեգալում, Կաբինդան՝ Անգոլայում, նիգերիական Բիաֆրան, Կատանգան և Հարավային Կասաին՝ Կոնգոյում, Սիերա Լեոնեի հարավ-արևելքը, Եթովպիան, Հարավաֆրիկյան Հանրապետությունը և այլն: Ասիայում ձևավորվել են սեցեսսիոնիզմի չորս մեծ «կաթսաներ»՝ արևելահնդկական, մյանմայական, աֆղանական և մերձավորարևելյան, իսկ սրանց միջև կան նաև Քաշմիրը և Թամիլ Իլամը, Մինդանաոն և Քրդստանը, Արևելյան Թուրքեստանը և Կովկասը:

Մյուս կողմից՝ սեցեսսիոնիզմի հետ որոշ դեպքերում կապված են ահաբեկչությունը, թմրաբիզնեսը և ծովահենությունը, որոնք սպառնում են համաշխարհային անվտանգությանը: Պատահական չէ, որ, օրինակ, թմրանյութերի հումքի մատակարարման խոշորագույն օջախները համապատասխանում են սեցեսսիոնիստական մեծ խմբավորումների կենտրոնացման շրջաններին (բիրմայական «Ոսկե եռանկյունի» հատվածը, Աֆղանստանի ծայրամասային շրջանները, Կոլումբիայի խորքային տարածքը): Թմրաբիզնեսը հակաօրինական գործունեության միակ ձևը չէ, որը ծաղկում է «ոչ պետական տարածքներում»՝ կենտրոնական իշխանությունների կողմից անվերահսկելի «կեղծ պետությունների» տարածքներն օգտագործվում են զենքի ապօրինի առևտրի, մարզումների ճամբարների և ահաբեկիչների բազաների ստեղծման, միջազգային հանցագործների պատասպարման համար: Համաշխարհային կայունությանը վտանգ ներկայացնող ծովահենությունը, որն ունի նաև սեցեսսիոնիստական ծագում, անմիջականորեն կապվում է Սոմալիի և նրանից փաստացի անջատված ահաբեկչական Պունտլենդ պետության հետ, որը ծովահենների համար անվտանգ նավահանգիստ է հանդիսանում:

Նկ. 1
Եվրոպայում սեգրեգիանիզացի տարածման գոտիների աշխարհագրական տեսակները




Ամերիկայում սեգեսիոնիզմի տարածման գոտիների աշխարհագրական տեսակները




Նկ. 3

Մահարում, Ավստրալիայում և Օվկիանիայում սեգեախոնդրի տարածման գոտիների աշխարհագրական տեսակները



Աֆրիկայում սեգեստիոնիզմի տարածման գոտիների աշխարհագրական տեսակները



Ընդհանուր առմամբ, երկրագնդում առանձնացվում են սեցեսսիոնիզմի տարածման գոտիների (ՄՏԳ) աշխարհագրական տեսակներ, որոնք տարբերում են հիմնականում աշխարհագրական դիրքով և ունեն իրենց առանձնահատկությունները: Այդ ՄՏԳ-ներն են.

1. *Արևմտաեվրոպական* - ընդգրկում է Արևմտյան Եվրոպայի երկրները,
2. *Հետսոցիալիստական* - ընդգրկում է նախկին ԽՍՀՄ-ը և Արևելյան Եվրոպայի նախկին սոցիալիստական երկրները,
3. *Արևմտասիական* - ընդգրկում է Փոքր Ասիա թերակղզուց մինչև Հնդստան թերակղզի, Արաբական թերակղզու և Մեծ Մերձավոր Արևելքի երկրները,
4. *Հարավասիական* - ընդգրկում է Ասիայի հարավը՝ Հնդկաստանը, Նեպալը, Բուրմանը, Բանգլադեշը և Շրի Լանկան,
5. *Հնդկաչինական* - ընդգրկում է Հնդկաչին թերակղզու և հարակից պետությունները,
6. *Չինական* - ընդգրկում է Չինաստանը և Մոնղոլիան,
7. *Աֆրիկա-մալայական* - ընդգրկում է Աֆրիկայի արևմտյան հատվածի պետությունները, Եթովպիան և Մալայան կղզեխումբը,
8. *Հյուսիսաֆրիկյան* - ընդգրկում է ամբողջ Հյուսիսային Աֆրիկայի երկրները և Սոմալին,
9. *Աֆրիկական արևադարձային* - ընդգրկում է Կենտրոնական և Հարավային Աֆրիկայի երկրները,
10. *Խաղաղօվկիանոսյան* - ընդգրկում է Խաղաղ օվկիանոսում գտնվող պետությունները,
11. *Հյուսիսամերիկյան-ավստրալական* - ընդգրկում է Հյուսիսային Ամերիկայի երկրները և Ավստրալիան,
12. *Հատինամերիկյան* - ընդգրկում է Կենտրոնական և Հարավային Ամերիկայի երկրները,
13. *Կարիբյան-ատլանտյան* - ընդգրկում է Աֆրիկայի հյուսիսարևմտյան առափնյա հատվածում գտնվող կղզիները և Կարիբյան ավազանի երկրները:

Սեցեսսիան օբյեկտիվ իրականություն է, որի ականատեսն ենք մենք այսօր՝ ԽՍՀՄ և Հարավսլավիայի անկում, Լեռնային Ղարաբաղի Հանրապե-

տության, Մերձդնեստրի, Աբխազիայի, Օսիայի և այլնի ստեղծում: Սրանք ընդամենը մի քանի օրինակներ են, թե ինչպես է որևէ պետության մի մասն ընդվզում, պայքարում և դուրս գալիս այդ պետության կազմից, որոնց մի մասը ճանաչված է, մյուս մասը՝ չճանաչված միջազգային հանրության կամ որևէ այլ ճանաչված անկախ պետության կողմից: Սեցեսսիայի հիմնավորման համար գոյություն ունեն տարբեր դասակարգումներ և չափանիշներ: Հիմնական գաղափարն այն է, որ սեցեսսիան արդարացվում է այն դեպքում, երբ անկախության ձգտող ժողովրդի մշակույթը և ինքնությունը վտանգված են այն պետության կողմից, որի կազմի մեջ մտնում են, և անկախություն ձեռք բերելը չի բերի մարդկանց իրավունքների նոր ոտնահարումների ու չի հանգեցնի նոր ազգային փոքրամասնությունների խնդիրների: Այս առումով, թերևս, ամենադասականը և ամենաօրինակելին Լեռնային Ղարաբաղն է, որի հայ բնակչությանը սպառնում էր տեղահանում (Նախիջևանի օրինակով), արտաքսում կամ ոչնչացում, իսկ մշակութային արժեքներին՝ պարզապես խոշտանգում կամ բնաջնջում (կրկին՝ Նախիջևանի օրինակով): Անկախություն ձեռք բերելով՝ ԼՂՀ-ում կասեցվել են այդ գործընթացները, և չի առաջացել որևէ ազգային փոքրամասնության խնդիր:

Սեցեսսիոնիզմի պատճառները տարաբնույթ են: Այդ երևույթի վրա ազդող հիմնական գործոններն են.

1. *տնտեսաաշխարհագրական* - երբ առավել զարգացած շրջանը ձգտում է առանձնանալ համեմատաբար թույլից, հետամնացից: Լավագույն օրինակներն Իտալիան և Իսպանիան են, երբ Իտալիայի զարգացած հյուսիսը՝ Հյուսիսի Լիգան, փորձում է առանձնանալ հարավային մասից, իսկ Իսպանիայում Կատալոնիան է փորձում ձեռք բերել անկախություն (այստեղ նաև էթնիկական գործոնը կա):
2. *ռասայական* – օրինակ, փոքրամասնություն կազմող սպիտակամորթների պայքարը ՀԱՀ-ում, հնդկացիների պայքարը Պերուում և Կոլումբիայում,
3. *էթնիկական* - ինքնավարության ձեռքբերմանը կամ դրա ընդլայնմանը, ինչպես նաև անկախ պետության կարգավիճակ ստանալու ձգտումն է: Սա ամենատարածված գործոնն է: Օրինակներն են՝ Բասկերի երկիրը՝ Իսպանիայում, Հնդկաստանի հյուսիսարևելյան նահանգները, ԼՂՀ-ն՝

- Ադրբեջանում, Աչեհը՝ Ինդոնեզիայում, Աբխազիան և Հարավային Օսիան՝ Վրաստանում, Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության արևելյան շրջանները և այլն,
4. *կրոնական* - դասական օրինակը Լիբանանն է, որտեղ մեծամասնությունն կազմող արաբ բնակչությունը պառակտված է զանգվածային մեկուսի տարածքային համայնքների,
 5. *կրոնա-էթնիկական* - երբ պայքար է գնում նույն էթնիկ և կրոնական գաղափարներ ունեցող խմբերի վերամիավորման համար: Այսպես, Օլսթերում կաթոլիկ իռլանդացիները ձգտում են վերամիավորվել Իռլանդիայի հետ, Քաշմիրի մահմեդականները՝ Պակիստանի: Կրոնական և էթնիկական գործոններն անբակտելիորեն շաղկապված են իրար շատ երկրներում՝ Սուդանում, Սոմալիում, Կոնգոյում, Անգոլայում, Լիբերիայում և այլն,
 6. *ներքաղաքական գործոն* - երբ տարածաշրջանային էլիտան ձգտում է իշխանության և տեղի է ունենում պետության կուսակցական և գաղափարական պառակտում: Օրինակ, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն և Չինական Հանրապետություն կամ Թայվան, Կորեայի Ժողովրդական Ժողովրդավարական Հանրապետություն և Կորեայի Հանրապետություն կամ Հարավային Կորեա,
 7. *արտաքին քաղաքական գործոն* - աջակցություն սեցցեսիոնիստներին գերտերությունների և առավել զարգացած հարևան պետությունների կողմից: Աջակցության շարժառիթները տարբեր են՝ թուլացնել մրցակցին, աշխարհաքաղաքական կարևոր շրջանների և առանձնացվող տարածքների տնտեսության նվաճում, զենքի վաճառք հակամարտող կողմերին և այլն: Այդպիսին եղել է Պանաման 20-րդ դարի սկզբնամասում, այդպիսին է ներկայումս Կոսովոն,
 8. *Արևադարձային Աֆրիկայում և Օվկիանիայում ավանդական ցեղային հասարակության թուլացում* - երբ դանդաղում և դժվարանում է պետական շինարարությունը, քանի որ հնադարյան հասարակությունը ձգտում է իշխանության մոնոպոլացման և այն բաժանել հարազատ ցեղային միությունների միջև: Այդպիսի իրավիճակ է Ֆիջիում, Պապուա Նոր Գվինեայում, Սոմալիում, Մոդոնոնյան և Կոմորյան կղզիներում:

Սակայն չի կարելի ասել, որ այս գործոններն ազդում են առանձին-առանձին. շատ դեպքերում դրանցից մի քանիսը հանդես են գալիս միասին:

Գործոններից բացի, կան հատկանիշների խմբեր, որոնք անհրաժեշտ են սեցեսսիոնիզմի գաղափարախոսության և սեցեսսիայի ձևավորման ու զարգացման համար: Այդ խմբերն են.

1. բնական մոտիկությունը, որը որոշվում է լեզվով և արյունակցական կապով,
2. հավատքը,
3. արտաքին քաղաքական կողմնորոշումը,
4. վարչատարածքային միավորի սահմաններում ծնվելը կամ ապրելը,
5. տարածապես մեկուսացված շրջանում ծնվելը կամ ապրելը,
6. պատմական հատկանիշը,
7. տնտեսական հատկանիշը:

Եթե սեցեսսիոնիզմը բարձր զարգացած Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրներում զարգանում է հիմնականում ներքին գործոններով պայմանավորված, ապա Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի, Օվկիանիայի և հետսոցիալիստական երկրներում մեծանում են միջազգային ներգրավումը և արտաքին գործոնի դերը:

Աշխարհում տեղի ունեցող սեցեսսիոն գործընթացները շարունակական են. քանի դեռ կան ազգային խտրականությունը, ազգայնական գաղափարախոսությունը և պայքարն ինքնորոշման ու անկախության համար (ինչը բնորոշ է մարդ արարածին), սեցեսսիոնիզմն ուղեկցելու է մեր մոլորակին:

Օգոստոս, 2015թ.

ՄԵՑԵՍՍԻՈՆԻԶՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Մերոք Սուջան

Ամփոփագիր

Հողվածում ներկայացված են ժամանակակից սեցեսսիայի և սեցեսսիոնիզմի սահմանումը, դրանց բնորոշ գծերը, ըստ աշխարհամասերի դրանց տարածումը, առաջացման գործոնները հատկանիշները: Սեցեսսիան օբյեկտիվ իրականություն է, որի ան-

խոս վկան ենք մենք: 20-րդ դարի 50-60-ականներին սկսված ապագադուրացման ժամանակներից մինչ օրս սեցեսսիոնիզմի դրսևորման արդյունքում աշխարհի քաղաքական քարտեզի վրա ի հայտ են եկել բազմաթիվ նոր պետություններ և տարածքներ, որոնց մի մասը դարձել են ճանաչված անկախ պետություններ, մյուս՝ գերակշռող մասը չունի հստակ կարգավիճակ: Առանձնացված են սեցեսսիոնիզմի տարածման գոտիների աշխարհագրական տեսակները, սեցեսսիոնիզմի առաջացման վրա ազդող գործոնները և հատկանիշները:

СЕЦЕССИОНИЗМ В СОВРЕМЕННОМ МИРЕ

Сероб Сулджян

Резюме

В статье представлены современные дефиниции сепарации и сепарационизма, свойственные им черты, распространенность по континентам, особенности факторов размежевания. Сепарация – объективная реальность, безмолвными свидетелями которой мы выступаем. Со времен начавшейся в 50-60-х гг. XXв. деколонизации до наших дней в результате проявлений сепарационизма на карте мира появилось множество новых государств и территорий, часть которых обрела статус признанных суверенных государств, а другая, превалирующая часть так и не получила четкого статуса. В статье выделены географические типы зон распространения сепарационизма, факторы и параметры, влияющие на его возникновение.

SECESSIONISM IN MODERN WORLD

Serob Sujyan

Resume

The article presents the modern definitions for secession and secessionism, their characteristic traits, level of spread by continents and factors of emergence. Secession is an objective reality and we are its silent witnesses. Since the dawn of decolonization in 1950-60s to date many new states and territories were established, some of which had become recognized independent countries, while the overwhelming majority lacks clear status. The geographic types of secessionism zones are distinguished in the article, along with factors and characteristics that influence its emergence.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՄԻՋԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

*Զարուհի Բարուխանյան**

Բանալի բառեր՝ ՀՀ իմիջ, հանրային դիվանագիտություն, «փափուկ» ուժ, ՋԼՄ, մշակույթ, զարգացման ռազմավարություն:

Ժամանակակից աշխարհում երկրները պայքարում են միջազգային հարթակում իրենց կշռի և դերակատարության ուժեղացման համար ոչ միայն դասական ռազմական ուժի և տնտեսության հզորացման միջոցով, այլև ակտիվ զարգացնելով հանրային դիվանագիտությունը՝ կիրառելով այսպես կոչված «փափուկ ուժի» ռազմավարությունը լայն հասարակական շերտերի աջակցությունը ստանալու նպատակով: Դա պայմանավորված է համաշխարհային տեղեկատվական ենթակառուցվածքի բուռն զարգացմամբ, ինչի հետևանքով, սկսած 20-րդ դարից և հատկապես 21-րդ դարասկզբին, հանրային կարծիքը դարձավ երկրների ներքին և արտաքին քաղաքականության վարման արդյունավետ գործիք:

Հանրային դիվանագիտությունն ունի բազմաթիվ սահմանումներ, սակայն էությանը այն արտերկրյա հասարակության հետ երկխոսություն հաստատող համակարգ է: Այն երկրի արտաքին քաղաքական արդյունավետ գործիքներից է և ուղղված է աշխարհում երկրի դրական իմիջի ձևավորմանը: Հանրային դիվանագիտության գլխավոր նպատակը պետության «փափուկ ուժի» զարգացումն է:

Հանրային դիվանագիտության հայեցակարգի մշակողն ու առաջատարն Արևմուտքն է, սակայն այլ երկրները, օրինակ՝ Ռուսաստանը, նույնպես վերջին տարիներին ակտիվ զարգացնում են այդ ոլորտը: Ներդրումները «*PIA-Новости*»-ում, «*Russia today*» արտասահմանյան հեռուստահեռարձակման կազմակերպումը, արտասահմանյան «*Ketchum*» PR-գործակալության հետ

* Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի ասպիրանտ:

պայմանագիրը, Մոչիում Օլիմպիական խաղերի անցկացումը և այլն՝ Մոսկվայի քայլերն են՝ ուղղված «փափուկ ուժի» ուժեղացմանը [1]:

«Փափուկ ուժի» հասկացությունը շրջանառության մեջ է դրել ամերիկացի քաղաքագետ Ջ.Նայր 1990թ. «Լիդերության կոչը. ամերիկյան ուժի փոփոխական բնույթը» գրքում [2]: Դրա մեթոդները հակադրված են պետության ավանդական «կոպիտ ուժին»՝ ռազմական ուժ և տնտեսություն, հարկադրանքին և կաշառքին: Այն թույլ է տալիս հասնել ցանկալի արդյունքների հրապուրանքի, գայթակղանքի շնորհիվ: Հայեցակարգի հիմքում ընկած է կամավորության սկզբունքը: Այն իրականացվում է մշակույթի, քաղաքական գաղափարների և ծրագրերի տարածման ու մասսայականացման շնորհիվ: Հատկանշական է, որ «փափուկ» ուժի ազդեցության աստիճանը կախված է տվյալ հասարակության տեղեկատվական ենթակառուցվածքի զարգացածության աստիճանից:

Հանրային դիվանագիտությունը ենթադրում է գործողությունների լայն շրջանակ. օտարերկրյա հեռարձակումից մինչև կրթական, մասնագիտական փոխանակումներ: Դրա առանձնահատկությունն այն է, որ արդյունավետությունն արտահայտվում է երկարաժամկետ հեռանկարում:

Զանգվածային լրատվամիջոցները հանրային դիվանագիտության արդյունավետ և ազդեցիկ միջոցներ են: Դեռևս 1970-ական թթ. կեսերին ԱՄՆ Սենատի Միջազգային գործառնությունների ենթակոմիտեի հանձնարարությամբ կազմված զեկույցում արվում է հետևյալ եզրակացությունը. «Ամերիկյան լրատվամիջոցներն ազդեցություն են թողնում արտասահմանյան տեղեկատվական հոսքերի վրա», և դա «նպաստում է ամերիկյան մշակույթի տարածմանը համաշխարհային մասշտաբով» [3, c. 312]:

Հատկանշական է, որ ժամանակակից հայաստանյան մեդիա-դաշտը լայնորեն ներկայացված է համացանցում և հաճախ տրամադրում է նյութերի բազմալեզու տարբերակներ, ինչը քանիցս մեծացնում է լսարանը: Ներկա դրությամբ հայաստանյան վեց հեռուստաալիքները՝ «Հ1»-ը, «Շանթ»-ը, «Երկիր Մեդիա»-ն, «Կենտրոն»-ը և «Armenia»-ն, իրականացնում են հայալեզու արբանյակային հեռարձակում: Գործում են նաև սփյուռքահայության կողմից հեռարձակվող հեռուստաալիքներ և բազմաթիվ պարբերականներ: Օրինակ՝ «TV ARM RU»-ն Ռուսաստանի հայերի ռուսալեզու ալիքն է, որը հեռարձակ-

վում է Ռուսաստանում, Եվրոպայում և Մերձավոր Արևելքի երկրներում: Սակայն արտասահմանյան լսարանին ուղղված հայկական ՋԼՄ լսարանը հիմնականում սփյուռքի հայությունն է, ինչպես նաև այլ երկրների որոշ լրատվամիջոցներ, քաղաքագետներ, որոնք հետաքրքրված են տարածաշրջանի խնդիրներով:

Արտասահմանյան լսարանի վրա ազդեցություն են ունենում Հայաստանի և հայ ազգի մասին տեղ գտնող հրապարակումներն արտասահմանյան ՋԼՄ-ում: Դրանք մեծ ազդեցություն ունեն Հայաստանի արտաքին իմիջի ձևավորման վրա: Նրանց համար Հայաստանին անդրադառնալու շարժառիթ կարող է հանդիսանալ երկրի հետ կապված որևէ իրադարձություն՝ քաղաքական, մշակութային, սպորտային և այլն: Օրինաչափ է արտասահմանյան ՋԼՄ անդրադարձը Հայաստանին երկկողմ պետական պաշտոնական այցերի ժամանակ, որոնք արժարժվում են պաշտոնական լրատվության, ինչպես նաև աշխարհաքաղաքական վերլուծությունների տեսքով: Հատկանշական է, որ արտասահմանյան ՋԼՄ-ում Հայաստանի մասին տեղեկատվության դրական կամ բացասական բնույթը կախված է տվյալ երկրի աշխարհաքաղաքական շահերից, ինչպես նաև տվյալ ՋԼՄ քաղաքական դիրքորոշումներից:

Այսպես՝ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի նախաշեմին ու հատկապես ոգեկոչման արարողությունների ընթացքում Հայոց ցեղասպանության հարցը նոր հնչեղություն էր ստացել միջազգային հարթակում և ՋԼՄ-ում: Թեմային անդրադարձ են կատարել բազմաթիվ արտասահմանյան և միջազգային լրատվամիջոցներ, այդ թվում խոշոր և հեղինակավոր լրատվամիջոցներ՝ *«International New York Times»*, *«Figaro»*, *«The Boston Globe»*, *«Catholic Herald»*, *«France 24»*, *«The Australian news»* և այլն [4-9]: Դա պայմանավորված էր, առաջին հերթին, հայկական դիվանագիտության և արտերկրի հայ համայնքների համատեղ ջանքերով, որոնք ուղղված էին միջազգային հարթակում թեման հնարավորինս շատ բարձրաձայնելուն, ուշադրությունը սևեռելուն ու դատապարտելուն: Հատկանշական է, որ բազմաթիվ միջազգային լրատվամիջոցներ քննադատեցին Թուրքիայի ժխտողական քաղաքականությունը և այն տոնակատարությունները, որոնք կազմակերպվել էին Թուրքիայում ապրիլի 24-ին Գալիպոլիի ճակատամարտի հաղթանակի կապակցությամբ:

Այս առումով ուշագրավ է, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նախաշեմին ստեղծվել էր աշխատանքները համակարգող պետական հանձնաժողով, որը մշակել և իրականացրել էր բազմապիսի ծրագրեր և միջոցառումներ՝ ուղղված Հայոց ցեղասպանության 100-ամյակի ոգեկոչմանն ինչպես Հայաստանի ներսում, այնպես էլ ողջ աշխարհում: Հանձնաժողովը համակարգել էր Հայոց ցեղասպանության տարելիցի կապակցությամբ տարբեր ոլորտներում տարվող աշխատանքները՝ եկեղեցի, մշակույթ, գիտություն, գրականություն, ՋԼՄ և այլն: Հանձնաժողովի աշխատանքը կարելի է դիտարկել որպես հայկական հանրային դիվանագիտության առաջին համակարգված դրսևորում:

Մշակութային բաղադրիչը նույնպես կարևոր և առաջնային տեղ է զբաղեցնում հանրային դիվանագիտության ոլորտում: Նշենք, որ մշակույթը, ըստ Ջ.Նայի, ցանկացած պետության «փափուկ ուժի» երեք աղբյուրներից մեկն է՝ քաղաքական գործողությունների և արժեհամակարգի հետ համատեղ [2]: Սակայն, ի տարբերություն պետության ներքին և արտաքին քաղաքականության, երկրի մշակույթի և արժեհամակարգի հանդեպ վերաբերմունքը հանրության կողմից ավելի կայուն է:

ՀՀ-ում ամեն տարի անց են կացվում միջազգային հնչեղություն ունեցող բազմաթիվ գրական, թատերական, երաժշտական փառատոններ և մշակութային միջոցառումներ, որոնց ընթացքում Հայաստան են այցելում այդ ոլորտների միջազգային ճանաչում ունեցող գործիչները և օտարերկրյա լրագրողներ: Արտերկրում կազմակերպվում են Հայաստանի մշակույթի օրեր, հայկական արվեստը ներկայացնող ցուցահանդեսներ, հայկական արվեստի ներկայացուցիչները մասնակցում են բազմապիսի միջազգային փառատոնների և այլն, ինչի շնորհիվ միջազգային հանրությունը հնարավորություն է ունենում ծանոթանալու հայկական մշակույթին և արժեհամակարգին:

Հիշատակենք Հայաստանում կայացած հասարակական և մշակութային մի քանի խոշոր իրադարձություններ, որոնք կարելի է դիտարկել որպես Հայաստանի հանրային դիվանագիտության դրսևորում, և որոնց լայնածավալ անդրադարձել են ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան լրատվամիջոցները, ինչը դրական ազդեցություն է ունեցել Հայաստանի իմիջի վրա ներքին և արտաքին լսարանների շրջաններում:

Այսպես՝ վերջին տարիներին Հայաստանում անցկացված և համաշխարհային արձագանք ստացած խոշոր միջոցառումներից առանձնանում են 2001թ. Հայաստանում Քրիստոնեության ընդունման 1700-ամյակին նվիրված միջոցառումները, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 2012թ. Երևանը գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակելը՝ կապված հայկական առաջին տպագիր գրքի 500-ամյակի հետ, որի ընթացքում Երևանում անցկացվեցին միջազգային գրական բազմաթիվ փառատոններ և միջոցառումներ: Առանձնահատուկ շուքով ամեն տարի նշվում է Էրեբունի-Երևան տոնակատարությունը՝ հնարավորինս ներգրավելով միջազգային հանրությանը, ինչի նպատակն է տարածել Երևանի՝ որպես աշխարհի հնագույն քաղաքներից մեկի, իմիջը: Ժամանակակից հայաստանյան մշակութային կյանքի ամենանշանակալից միջոցառումներից մեկը «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնն է, որի անցկացման տարբեր տարիներին Երևան են այցելել համաշխարհային ճանաչում ունեցող մշակույթի գործիչներ. այդ թվում՝ Շարլ Ազնավուրը, Տոնինո Գուերրան, Ատոմ Էգոյանը, Ալեն Թերզյանը, Կլաուդիա Կարդինալեն, Ֆանի Արդանը և ուրիշներ:

Ուշագրավ է, որ «Ոսկե ծիրան» 11-րդ կինոփառատոնին պարբերաբար անդրադարձ էին կատարում ռուսական լրատվամիջոցները՝ «Аргументы недели» թերթը, «Культура» հեռուստատեսությունը, «Портал Южного региона yuga.ru կայքը, «Новая газета», «Невское время» թերթերը, «Радио культура»-ն և այլն [10-15]: Փառատոնին նվիրված արտասահմանյան ՋԼՄ լուսաբանումներում՝ լուրերում, հարցազրույցներում, ակնարկներում կերտվել է Հայաստանի բազմակողմանի իմիջը. միջավայրը, մարդիկ, մայրաքաղաքը, անդրադարձ է կատարվել հայ-թուրքական հարաբերություններին, Ղարաբաղյան հակամարտությանը, ցեղասպանությանը:

Հայաստանում անցկացվող միջազգային հնչեղությունն ունեցող միջոցառումները նպաստում են ինչպես ոլորտի ճանաչված ներկայացուցիչների այցելությանը Հայաստան, այնպես էլ միջազգային ՋԼՄ ուշադրությանը, որոնց շնորհիվ աշխարհի հանրությունը ծանոթանում է ոչ միայն անցկացվող միջոցառումներին, այլև Հայաստանի հիմնախնդիրներին:

Համաշխարհային ճանաչում ունեցող հայազգի գործիչները նույնպես բարձրաձայնում են Հայաստանի հիմնախնդիրները, ինչը միջազգային հանրությանը հասանելի է դառնում ՋԼՄ-ի միջոցով [16-18]:

Պետք է նշել, որ մարդկային կապիտալի առումով ևս մեր հայրենակիցները բարձր են պահում Հայաստանի պատիվը միջազգային հարթակում: Այսպես՝ մեր հայրենակիցները լավագույնս ներկայացնում են երկիրը մշակույթի, սպորտի, մտավոր աշխատանք պահանջող ոլորտներում: Հայաստանի շախմատի տղամարդկանց հավաքականն օլիմպիական եռակի չեմպիոն է (2006, 2008, 2012թթ.), աշխարհի թիմային առաջնության (2011թ.) հաղթող:

Շարունակելով Հայաստանի ներկայացուցչական ոլորտների ցանկը՝ հարկ է նշել, որ միջազգային հարթակներում զգալի հաջողություն և ճանաչում են ձեռք բերել հայ ծրագրավորողները:

Հայ գիտնականների վաստակն անուրանալի է համաշխարհային գիտության զարգացման գործում: Նրանց գիտական հոդվածները տպագրվում են ամենաբարձր վարկանիշ ունեցող գիտական ամսագրերում: Հայ գիտնականները լավագույնս ներկայացնում են հայ գիտության ձեռքբերումներն արտասահմանյան գիտական կոնֆերանսներում, նրանց կողմից Հայաստանում կազմակերպվող կոնֆերանսների շնորհիվ Հայաստան են ժամանում համաշխարհային գիտական էլիտայի ներկայացուցիչները:

Հատկանշական է, որ այս բոլոր իրադարձությունները նպաստում են Հայաստանի համար շահավետ լրատվական հոսքերի առաջացմանը, որոնք շրջանառվում են ինչպես ներքին լսարանում, այնպես էլ միջազգային հարթակում՝ կերտելով Հայաստանի դրական իմիջը:

Հայաստանը միջազգային լրատվամիջոցների մշակութային ու ճանաչողական հրապարակումներում ներկայանում է որպես հնադարյա քաղաքակրթություն ունեցող երկիր՝ հնագույն ճարտարապետական կոթողներով ու գեղատեսիլ վայրերով: Վայր, որտեղ պահպանվել են սեփական յուրահատուկ ավանդույթները: Հայ ժողովուրդը բնութագրվում է որպես հյուրընկալ, իսկ երկրի մթնոլորտը՝ ջերմ: Բարձր է գնահատվում այն փաստը, որ, չնայած Հայաստանում առկա բազմաթիվ խնդիրներին, հայ ժողովրդի արժեհամակարգի մեջ մեծ տեղ են գրավում արվեստն ու ձգտումը դեպի գեղեցիկը: Նշվում է ազգի մտավոր ներուժը [10-15, 19]:

Այսպիսով՝ ուրվագծվում են հայկական հանրային դիվանագիտության ուժեղ կողմերը. մշակույթը, մարդկային կապիտալը:

Արտասահմանում հայկական հանրային դիվանագիտության զարգացման և Հայաստանի իմիջի առաջխաղացման գործում մեծ ներդրում ունի

հայկական սփյուռքը: Սակայն այսօր հայկական հանրային դիվանագիտության աշխատանքը համակարգված չէ, և չկա որևէ ռազմավարություն, որը կապահովեր տարվող աշխատանքի բարձր արդյունավետությունը:

Անհրաժեշտություն է առաջանում որոշակի համակարգող մարմնի հիմնումը, որը կստանձներ հայկական հանրային դիվանագիտության կարճա- և երկարաժամկետ ռազմավարության մշակումը՝ ելնելով թիրախային լսարանի առանձնահատկություններից, համակարգված միջոցառումների իրականացումը, համագործակցության զարգացումը տեղական և միջազգային ՋԼՄ-ի հետ, հետադարձ կապի ուսումնասիրումը, ինչպես նաև դրա գործառույթների մեջ կմտներ ոլորտի նոր կադրերի պատրաստումը և համալսարաններում հանրային դիվանագիտություն մասնագիտացման ուսուցման օժանդակությունը:

Հայոց հանրային դիվանագիտության հաջողության և ցանկալի արդյունքների հասնելու լավ օրինակ դարձավ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի աշխատանքները համակարգող պետական հանձնաժողովը, որի համակարգող և նախաձեռնող աշխատանքի շնորհիվ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը հայտնվեց միջազգային հանրության ուշադրության կենտրոնում, իսկ Թուրքիան սուր քննադատվեց ցեղասպանության փաստը մերժելու և տարելիցի օրը տոնակատարություններ կազմակերպելու կապակցությամբ: Հայտնի է, որ հետագայում հանձնաժողովը վերափոխվելու է Հայկական խորհրդի, որը լինելու է հայ ազգի հիմնախնդիրների խորհրդակցական մարմին: Այս կապակցությամբ հույս է առաջանում, որ հանձնաժողովը կզբաղվի Հայաստանի հանրային դիվանագիտության համակարգման խնդրով, այդ թվում ՋԼՄ-ի միջոցով Հայաստանի իմիջի առաջխաղացման հարցով:

Հոկտեմբեր, 2015թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Долинский А.В.*, Практические вопросы оптимизации российской публичной дипломатии//www.ruskiymir.ru,16.03.2010.
2. *Nye J.S.*, Soft Power. The Means to Success in World Politics. New York: Public Affairs, 2004, p. 192.
3. *Беглов С.И.*, Внешнеполитическая пропаганда, М., Высшая школа, 1984, с. 312.
4. Մերժ Սարգսյանի հեղինակային հոդվածը International New York Times պարբերականին //www.iravunk.com, 24.09.2014:

5. Թուրքիան պետք է ասերեսվի իր պատմությանը. Էդվարդ Նալբանդյան// www.panorama.am, 06.09.2014:
6. Why does Turkey continue to deny Armenian genocide?// www.bostonglobe.com, 09.03.2015.
7. Catholic Herald-ը քննադատել է Էրդողանին` Հայոց ցեղասպանության իրողությունն աղավաղելու մեջ// www.armeniangenocide100.org, 27.02.2015:
8. France24. Ցեղասպանության տարելիցին ընդառաջ Էրդողանը բազմապատկում է սադրանքները// www.armeniangenocide100.org, 13.02.2015:
9. The Australian news. Հանցավոր լռություն Թուրքիայի կողմից իրագործված Հայոց ցեղասպանության նկատմամբ// www.panorama.am, 08.11.2014:
10. Любовь к «Золотому абрикосу», «Аргументы недели» еженедельник, 14.07.2014.
11. В Ереване начался сезон «Золотого абрикоса», телеканал «Культура», 14.07.2014, տե՛ս նաև В Ереване завершены показы и вручены награды кинофестиваля «Золотой абрикос», 21.07.2014:
12. «Золотой абрикос»: Кино на фоне войны// www.yuga.ru, 23.07.2014.
13. Какое время – такое и «Племя», газета «Новая газета», 24.07.2014.
14. Кшиштоф Занусси: «У меня нет ощущения тупика», газета «Невское время», 29.07.2014, տե՛ս նաև Режиссёрам раздали «золотые абрикосы», 26.07.2014.
15. Китайский режиссер Цзя Чжанкэ получил специальную награду Ереванского кинофестиваля «Золотой абрикос» - «Талер Параджанова», радио «Культура», 18.07.2014, տե՛ս նաև Фильмом «Прощай, язык» Жан-Люка Годара закрылся 11-й Ереванский международный кинофестиваль «Золотой абрикос», 21.07.2014.
16. Познер. Шарль Азнавур, телеканал «Первый канал», 20.04.2015.
17. Քարդաշյանները ՀՀ այցի 2 օրում 36,5 մլն դոլարի PR են արել//zaruhi.com, 12.04.2015:
18. Անկարային ուղղված Քիմ Քարդաշյանի կոչը կատաղեցրել է թուրքերին//news.am, 2015, 27 ապրիլի:
19. Armenia: the cleverest nation in the world, BBC world service, 11.09.2012.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՄԻՋԸ
ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ**

Զարուհի Բարուխանյան

Ամփոփագիր

Ժամանակակից տեղեկատվական հասարակության զարգացման պայմաններում աննախադեպ աճել է հանրային կարծիքի դերը քաղաքական և հասարակական գործընթացներում, ինչով և պայմանավորված է հանրային դիվանագիտության ոլորտի զարգացումը: Հոդվածում ուսումնասիրված է հայկական հանրային դիվանագիտության և պետության իմիջի փոխկապվածությունը: Հետազոտության արդյունքում ուրվագծվել է հայկական հանրային դիվանագիտության ոլորտը համակարգելու, զարգացման ռազմավարություն մշակելու խնդիրը:

ИМИДЖ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И ОБЩЕСТВЕННАЯ ДИПЛОМАТИЯ

Заруи Бабухянян

Резюме

В современных условиях развития информационного общества необычайно возросла роль общественного мнения в политических и общественных процессах, чем обусловлено развитие сферы общественной дипломатии. В статье исследована взаимосвязь армянской общественной дипломатии с имиджем страны. В результате исследования выявлена задача систематизации и разработки стратегии развития сферы армянской общественной дипломатии.

IMAGE OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE PUBLIC DIPLOMACY

Zaruhi Babukhanyan

Resume

The role of the public opinion has extraordinarily increased in political and social processes in the under the development of the contemporary information society. It has determined the development of the public diplomacy. The article investigates the interrelation of the Armenian Public Diplomacy and the image of the state. The necessity of systematization and strategy development for the sphere of Armenian public diplomacy has been outlined as a result of the research.

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

*Աղասի Թավադյան**

Բանալի բառեր՝ տնտեսական անվտանգություն, դրամավարկային քաղաքականություն, ԵՏՄ, գնաճ, փոխարժեք, վերաֆինանսավորման տոկոսադրույք:


Գնաճը ՀՀ-ում փաստացի կանխորոշում է դրամավարկային քաղաքականությունը: Գնաճի նպատակադրումը չպետք է իրականացվի միայն այն դրույթի հիման վրա, որ այն գտնվում է ուղղակի և անմիջական կախվածության մեջ փողի զանգվածից, քանզի անկատար շուկայի և այլ մակրոտնտեսական գործոնների համակարգային կապերը հաշվի առնելու դեպքում այս վերլուծության լիարժեքության պնդումը թերի է: Նույնիսկ այն պնդումը, որ դրամական զանգվածի աճը հստակորեն կբերի գնաճի, առավել ևս՝ անկառավարելի, մեր տնտեսության պայմաններում թերի է և հեռու իրական դրությունից: Այնուամենայնիվ, գնաճի կառավարումը կատարվում է առավելապես դրամական զանգվածի զսպամամբ, և այլ մակրոտնտեսական գործիքներն ուղղված են հիմնականում այդ նպատակի իրականացմանը: Տվյալ հանգամանքի ուսումնասիրությունը և որոշակի լուծման որոնումն ուղղակի փոխկապակցված են ՀՀ տնտեսական անվտանգության հետ:

Հայաստանի Հանրապետությունում առկա է գների աճի և նվազման հստակ սեզոնային միտում, և այն լիարժեքորեն հաշվի չի առնվում, որը նույնպես տնտեսական անվտանգության խնդիր է: Գնաճային տատանումներն առկա են ոչ միայն մեկ տարվա ընթացքում, այլև մի քանի տարիների կտրվածքով: Տվյալ իրավիճակն ակնկալում է գնաճային երևույթների վերլուծություն և մակրոտնտեսական ցուցանիշների պատճառահետևանքային կապերի բացահայտում: ՀՀ գնաճի սեզոնային բնույթը պատկերված է *Գծապատկեր 1*-ում.

* ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագետ, տ.գ.թ.:

Գծապատկեր 1

ՀՀ գնաճի սեզոնային բնույթի նկարագրիչը



Գծապատկերից երևում է, որ 2006թ. գնաճի նպատակադրման քաղաքականությանն անցնելուց հետո տարեկան գնաճի մակարդակը, որը հաշվարկված է յուրաքանչյուր ամսվա վերջից նախորդ 12 ամիսների կտրվածքով, փաստացի միայն 25% դեպքերում է գտնվել ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով սահմանված 4 ± 1.5 շրջանակներում: Այսպիսով, տարեվերջյան գնաճի ցուցանիշը, որի կարգավորումը ՀՀ ԿԲ հիմնական խնդիրն է, չի արտացոլում տնտեսության իրական պատկերը: Փաստացի, արդյունավետորեն չի ապահովվում գնաճի 4 ± 1.5 սահմաններում գտնվելու պահանջը: Տնտեսական ակտիվության լավարկման նպատակից և սահմանադրությամբ սահմանված ԿԲ հիմնական խնդրի տրամաբանությունից ելնելով՝ գնաճի տարեկան ցուցանիշը պետք է գտնվի 4 ± 1.5 միջակայքում ոչ միայն տարեվերջին, այլև յուրաքանչյուր 12 ամսվա կտրվածքով: ՀՀ գնաճն ունի տատանողական բնույթ, որը խաթարում և դժվարացնում է բանկային տոկոսադրույքների ու տնտեսվարող սուբյեկտների կանխատեսումները: Անորոշության պայմաններում բանկային տոկոսադրույքներն ավելի բարձր են: Սա կարող է դժվարացնել դրամական միջոցների շարժը տնտեսությունում, անվստահություն առաջացնել ազգային դրամի նկատմամբ և բերել գործարարության ակտիվության նվազմանը: Անորոշության հաղթահարման համար նպատակահարմար է ունենալ գնաճի կայուն և որոշակի ցուցանիշ: Խելամիտ է նույնիսկ 5.5 վերին

սահմանից որոշակիորեն բարձր առանց սեզոնային տատանումների գնաճի ցուցանիշը, քան տատանողական բնույթ կրողը: Այս դեպքում «խաղի կանոնները» տնտեսությունում հստակ են, և տնտեսական ցուցանիշները՝ կանխատեսելի: Կայուն գնաճի պարագայում վարկային տոկոսադրույքները համեմատաբար ավելի ցածր են, քան այն գնաճի դեպքում, որի մակարդակը ցածր է, սակայն ունի տատանողական բնույթ:

Գնաճի՝ տարվա կտրվածքով տատանողական բնույթն էական է մեր տնտեսության համար: Այն կարող է նաև խանգարել ԵՏՄ երկրների և Հայաստանի միջև տնտեսական կապերի լավարկմանը, որը բացասաբար է անդրադառնում ՀՀ տնտեսական անվտանգության վրա:

Գնաճի կառավարումը պետք է լինի ճկուն, որը հաշվի է առնում գնային միտումները, սեզոնայնությունը, գների իրական վիճակը և գների կանխատեսումները միջազգային շուկաներում, հատկապես՝ էներգակիրների և հացահատիկի: Անհրաժեշտ է նաև համակարգված վերլուծել գնաճի և այլ առանցքային տնտեսական ցուցանիշների՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքի, փողայնացման մակարդակի, փոխարժեքի, միջազգային պահուստների, առևտրային հաշվեկշռի հետ կապը:

Տնտեսական ակտիվության և անվտանգության կարգավորման գործում մակրոտնտեսական ցուցանիշներից կարևորվում է նաև փոխարժեքը, որի կարգավորումն էական կարևորություն ունի հատկապես առևտրային հաշվեկշռի անհամաչափություն ունեցող երկրներում: Նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում 2014թ. արտահանումը կազմել է \$1.5 մլրդ, իսկ ներմուծումը՝ \$4.4 մլրդ: Ներմուծումը գերազանցում է արտահանումը գրեթե 3 անգամ: ՀՀ-ն փաստացի ներմուծող երկիր է, որը վտանգավոր է տնտեսական անվտանգության տեսանկյունից ներմուծվող ապրանքների գնաճով և նրանով, որ ներմուծվող ապրանքները կարող են դրսևորել զգալի մրցակցություն ներքին արտադրության համար՝ խոչընդոտելով դրա զարգացմանը:


2015 թվականից Հայաստանը ԵՏՄ անդամ է և պետք է հետապնդի իր տնտեսական շահերը տվյալ կառույցում՝ ՀՆԱ առավելագույն աճ ստանալու և դրա կառուցվածքը բարելավելու նպատակով: Նշենք, որ ՀՀ արժույթն էական փոփոխության է ենթարկվել հիմնականում ռուսական ռուբլու հանդեպ (*Գծապատկեր 2*), որն ունի իր բացասական հետևանքները: ՀՀ արժույթի տատանումները դոլարի և եվրոյի նկատմամբ ԵՏՄ երկրներում ամենացածրն

էին, 2014 թվականից տարածաշրջանում դրսևորված փոխարժեքային տատանումներից դրամն արժեզրկվել է ընդամենը 18% դոլարի հանդեպ, ռուսական, բելառուսական, դազախական և տարածաշրջանի այլ արժույթների համեմատ: 2014թ. սկզբից մինչև 2015թ. սեպտեմբեր վերջիններս արժեզրկվել են համապատասխանաբար 97%, 82% և 78%¹:

Դրամի արժեզրկումը դոլարի նկատմամբ միայն առաջին հայացքից է նպաստավոր տնտեսական զարգացման և արտահանման խթանման համար: Ակնհայտ է, որ դրամային արժեք կրող ապրանքը դոլարի թանկացումից արտասահմանում տվյալ արժույթով ավելի մրցունակ գին կունենա: Սակայն ազգային արժույթն արժեզրկվել է ՀՀ շուկայում առկա փոխարկելի արժույթներից միայն դոլարի նկատմամբ, դրամը տարածաշրջանի այլ արժույթների, նույնիսկ եվրոյի նկատմամբ արժևորվել է, որը փաստացի հանգեցրեց հայկական ապրանքների գների՝ տվյալ արժույթներով թանկացմանը:

Գծապատկեր 2

ՀՀ դրամի դինամիկան ԱՄՆ դոլարի, եվրոյի և ռուսական ռուբլու հանդեպ



2014թ. ռուբլու և եվրոյի նկատմամբ դրամի արժևորումը բացասաբար անդրադարձավ դեպի Ռուսաստան և Եվրամիության երկրներ Հայաստանի

¹ Տվյալները հաշվարկված են «bankir.ru/kurs» աղբյուրի հիման վրա:

արտահանման վրա: Տեղի է ունեցել արտահանման կառուցվածքի ոչ նպաստավոր փոփոխություն: Դեպի Ռուսաստան 2014թ. արտահանումը կրճատվեց 8%, դեպի Եվրամիություն՝ 12%, որոնք անբարենպաստ փոփոխություններ են, քանզի ՀՀ-ից Ռուսաստան և ԵՄ արտահանման ծավալն ընդամենի համեմատ համապատասխանաբար կազմում է 22,7% և 33.6%¹: Ռուսաստանը ՀՀ պատրաստի արտադրանքի հիմնական ներկրողն է: Իհարկե, պատրաստի արտադրանքի արտահանման կրճատումը ՀՀ տնտեսական անվտանգության խնդիր է: Նշենք, որ 2014թ. ՀՀ-ն գրանցեց արտահանման որոշակի աճ, սակայն ի հաշիվ դեպի Չինաստան արտահանման տեսակարար կշռի գրեթե 2.5 անգամ աճի: Սա պայմանավորված է ընդերքից ստացվող պղնձի խտանյութի արտահանմամբ, որի գինը 2015թ. սկզբից դրսևորում է նվազման միտում՝ նվազելով գրեթե 20%-ով: Փաստացի, 2015թ. արտահանման ցուցանիշը կարող է նվազել նաև բերված հանգամանքի պատճառով՝ էլ ավելի մեծացնելով արտահանում-ներմուծում տարբերությունը:

Տարածաշրջանում փոխարժեքի ամենացածր փոփոխության գինը եղավ նաև այն, որ կտրուկ պակասեցին ՀՀ միջազգային պահուստները: Միայն 2014թ. ընթացքում միջազգային պահուստները կրճատվել են ավելի քան 35%-ով, ի տարբերություն, օրինակ, Ռուսաստանի Դաշնության, որի ազգային արժույթը ԵՏՄ-ում ամենամեծ փոփոխություններն է կրում, սակայն ՌԴ ԿԲ-ն 2014թ. փոխարժեքային և տնտեսական տատանումները հաղթահարեց ավելի քիչ միջազգային պահուստներ օգտագործելով (այս ցուցանիշը նույն ժամանակահատվածում կրճատվել է 22%-ով)²: 2015թ. ՀՀ միջազգային պահուստները լրացվեցին, սակայն ի հաշիվ արտաքին պարտքի էական մեծացման: Միջազգային պահուստների կրճատումն, իհարկե, վտանգավոր է տնտեսական անվտանգության տեսանկյունից, քանզի նվազեցնում է տնտեսության կարգավորման հնարավորությունները ճգնաժամային իրավիճակում:

Հայաստանի համար նպաստավոր է ԵՏՄ Պայմանագրի 64-րդ՝ «Համաձայնեցված արժույթային քաղաքականության նպատակները և սկզբունքները» հոդվածի³ կիրառումը հատկապես էներգակիրների գնագոյացման համար, քանզի մենք գազ և նավթամթերք ներկրող երկիր ենք, և ռուսական ռուբլով

¹ ՀՀ Մաքսային ծառայության տվյալների բազա:

² Արժույթի միջազգային հիմնադրամի տվյալների բազա:

³ <http://www.eurasiancommission.org/ru/Lists/EECDocs/635375701449140007.pdf>

գնագոյացման դեպքում որևէ պատրվակ չէր լինի էներգակիրների գների բարձրացման համար: Այս դեպքում հաշվարկները կկատարվեին ոչ թե դոլարով, որն ամրացել է դրամի համեմատ, այլ ռուբլով: Պետք է նշել, որ էներգակիրների հարաբերականորեն ցածր գները նպաստավոր են ոչ միայն սոցիալական խնդիրների լուծման համար, այլև, առաջին հերթին, դրական են ազդում երկրի տնտեսության մրցունակության վրա, ինչը կարևոր ցուցանիշ է տնտեսական անվտանգության համար, մասնավորապես՝ փոքր տնտեսությամբ երկրի առանցքային ցուցանիշ հանդիսացող արտահանման համար:

Այսպիսով, ՀՀ արժույթը, տարածաշրջանի արժույթների փոփոխության դինամիկայի համեմատ, հստակ կարգավորման կարիք ունի: Ներքին արժույթներով փոխհաշվարկներին անցումը, որը փաստացի ԵՏՄ Պայմանագրի պահանջն է, ոչ միայն կբարելավի ներքին տնտեսական ակտիվությունը՝ խթանելով արտահանումը և բարելավելով ապրանքային հաշվեկշիռը, այլև կապահովագրի ներքին սպառողին, հատկապես՝ էներգակիրների գների թանկացումից:

Փողայնացման մակարդակը ՀՀ-ում 36% է (2013թ.): Եվրոգոտու տնտեսություններում այդ ցուցանիշը մոտ 100% է, զարգացած ասիական երկրներում՝ 150%-ից բարձր, Ռուսաստանում՝ 56% (2013թ.)¹: Տվյալ իրավիճակում առաջանում է դրամի սով, ինչը բերում է դոլարիզացիայի, և փաստացի փողայնացման զանգվածի կարգավորումը դժվարանում է:

2015թ. սեպտեմբերի դրությամբ վերաֆինանսավորման տոկոսադրույքը կազմում է 10.25%, որը բարձր ցուցանիշ է: ՀՀ-ում բարձր վերաֆինանսավորման տոկոսադրույքը միայն առաջին հայացքից է զսպում գնաճը: Վերաֆինանսավորման տոկոսադրույքի շեմի բարձրացման դեպքում այն, փոքրացնելով դրամաշրջանառության և շուկայի գործարքների չափը և արագությունը, զսպում է պահանջարկի գնաճը, սակայն ավելի երկար կտրվածքով նպաստում է ծախքերի գնաճին: Այս գործոնն ունի հակառակ ազդեցություն շեմի իջեցման դեպքում: Նույնիսկ կատարյալ շուկայական պայմաններում վերաֆինանսավորման տոկոսադրույքի ազդեցությունը գնաճի վրա միանշանակ չէ: Այս պարագայում վերաֆինանսավորման տոկոսադրույքի աճն արդարացված է կարճ ժամանակահատվածում, որը մեղմում է պահանջարկը և, հետևաբար, գնաճը: Որպես այդպիսին կարճաժամկետ կտրվածքով այն արդյունավետ միջոց է չնախատեսված, ճգնաժամային ռիսկերը հաղթահա-

¹ OECD iLibrary, World Bank, World Economic Indicators.

րելու համար: Մակայն այն զսպում է շուկան և երկարաժամկետ կտրվածքով կարող է բերել ծախքերի գնաճի:

ՀՀ բարձր վերաֆինանսավորման տոկոսադրույքի և ցածր փողայնացման պայմաններում տնտեսվարող սուբյեկտներում առաջանում է սեփական միջոցների պակասուրդ, որը չափազանց դժվար է լրացնել բարձր բանկային տոկոսադրույքի դեպքում: Բարձր վերաֆինանսավորման տոկոսադրույքը, առաջին հայացքից նպաստելով ցածր գնաճին, բացասաբար է անդրադառնում տնտեսական անվտանգության վրա:

ՀՀ-ում գործնականում վերաֆինանսավորման տոկոսադրույքի ազդեցությունը գնաճի վրա թույլ է, քանզի ՀՀ-ում փողի առաջարկի և պահանջարկի տարբերությունն ակնհայտորեն լրացվում է արտարժույթով, առկա է դոլարի դաշտային մեծ ցուցանիշ, բացասական առևտրային հաշվեկշռի պատճառով մեծ է ներմուծվող գնաճի ազդեցությունը, ներքին գներն էլ հիմնականում ունեն մենաշնորհային բնույթ: Դա հանգեցրել է նրան, որ ՀՀ-ում թուլացել է վերաֆինանսավորման տոկոսադրույք և գնաճ կապը: Վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացումը հանգեցնում է տնտեսական ակտիվության իջեցման՝ առանց ցանկալի ազդեցություն ունենալու բարձր դոլարի դաշտային պայմաններում գնաճի վրա:

Գնաճը Հայաստանի Հանրապետությունում մեկ գործոնային երևույթ չէ և ունի ոչ մոնետար բնույթ: Գնաճը պայմանավորված է ոչ միայն դրամական զանգվածի փոփոխությամբ, այլև մեր փոքր տնտեսության որոշ ապրանքների մենաշնորհային դիրքով և ներմուծվող ապրանքների գներով, հատկապես երբ ներմուծումը գերազանցում է արտահանումը գրեթե 3 անգամ: Էներգակիրների գները, որպես ոչ մոնետար գործոն, ունեն մեծ ազդեցություն գնաճի վրա, և դրանք պայմանավորված են Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումներով ամբողջ համակարգի էներգակիրների գների գնագոյացման վերաբերյալ:

Շուկայի անկատարությունը հանգեցնում է որոշակի խոչընդոտների գնաճի նպատակադրման քաղաքականության իրականացման ժամանակ: Այս խոչընդոտները կարելի է համարել անցանկալի տնտեսական «շփում», որի մեծացումը բացասաբար է անդրադառնում դրամավարկային գործոնների փոխկապվածության վրա: Մասնավորապես, կայուն տնտեսական և արտաքին գների ոչ էական փոփոխվող իրավիճակում նպատակահարմար է

վարել վերաֆինանսավորման տոկոսադրույքի սահուն իջեցման քաղաքականություն: Այս գործընթացը կմեծացնի վերաֆինանսավորման տոկոսադրույքի օգտակար ռեզերվը՝ ավելի կառավարելի դարձնելով պոտենցիալ ռիսկերը տնտեսական ոչ բարենպաստ պայմաններում: Վերաֆինանսավորման տոկոսադրույքի օգտակար ռեզերվը տնտեսական ցուցանիշների վրա ազդեցության արդյունավետության գործակից է, որի բարձր լինելու պարագայում վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխությունն ավելի հստակ ազդեցություն կունենա տնտեսության վրա: Կիսթանվեն բանկային գործունեությունը և շուկան, ինչպես նաև կբարելավվի փողայնացման մակարդակը, որը բավական ցածր է ՀՀ-ում փողի համեմատաբար մեծ պահանջարկի և ՀՀ դրամի ցածր առաջարկի պայմաններում:

Այսպիսով, տնտեսական անվտանգության ապահովման և դրամավարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ են հաջորդական, համակարգված քայլեր՝ հաշվի առնելով գնաճի փոխկապվածությունն այլ տնտեսական ցուցանիշների հետ: Առանձնացված միայն մեկ ցուցանիշի կարգավորումը չի նպաստում տնտեսության զարգացմանը և կարող է հարված հասցնել տնտեսական անվտանգությանը:

Հոկտեմբեր, 2015թ.

**ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

Աղասի Թավադյան

Ամփոփագիր

Գնաճի կառավարումը պետք է լինի համակարգային, որը հաշվի է առնում սեզոնայնությունը, գնային միտումները և կանխատեսումները միջազգային շուկաներում, նաև գնաճի և այլ առանցքային տնտեսական ցուցանիշների՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքի օգտակար ռեզերվի, փողայնացման մակարդակի, փոխարժեքի, միջազգային պահուստների և առևտրային հաշվեկշռի հետ կապը:

ԵՏՍ տարածաշրջանում ներքին արժույթներով փոխհաշվարկներին անցումը ոչ միայն կնպաստի գնաճի կարգավորման մոտեցումների համաձայնեցմանը, այլև կբարելավի տնտեսական ակտիվությունը՝ իրանելով արտահանումը և բարելավելով ապրանքային հաշվեկշիռը, կապահովագրի ՀՀ տնտեսությունն էներգակիրների գների թանկացումից:

Տնտեսական անվտանգության ապահովման և դրամավարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ են հաջորդական,

համակարգված քայլեր՝ հաշվի առնելով գնաճի փոխկապվածությունն այլ տնտեսական ցուցանիշների հետ:

ДЕНЕЖНО-КРЕДИТНАЯ ПОЛИТИКА С ТОЧКИ ЗРЕНИЯ ЭКОНОМИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ

Агаси Тавадян

Резюме

Регулирование инфляции должно быть системной, учитывающей сезонность, тенденции изменения цен и их прогнозы на международном рынке, также их взаимосвязи с ключевыми экономическими показателями: сформулированным в работе показателем полезного резерва ставки рефинансирования, уровне монетизации, курсом национальной валюты, золотовалютными резервами и торговым балансом.

Переход на взаиморасчеты на национальных валютах в ЕАЭС не только будет способствовать согласованию подходов регулирования инфляцией, но и улучшит экономическую активность, стимулируя экспорт и положительно воздействуя на торговый баланс. Кроме того, это нивелирует отрицательное воздействие колебания мировых цен энергоносителей на экономику РА.

Для обеспечения экономической безопасности и повышения эффективности денежно-кредитной политики необходимы последовательные, систематизированные шаги, учитывающие взаимосвязи ее ключевых экономических показателей.

MONETARY POLICY IN TERMS OF ECONOMIC SECURITY

Aghasi Tavadyan

Resume

Inflation control should be systemic, taking into account its seasonality, price trends and forecasts in the international market, as well as its interrelations with key economic indicators: the useful reserve index of refinancing rate, monetization level, exchange rates, foreign exchange reserves and trade balance.

The transition to settlement payments in national currencies in EEU will not only contribute to coordination of inflation regulation, but also will improve the economic activity, stimulate export and optimize the trade balance. In addition, it can eliminate the negative effects of fluctuations in world energy prices on the economy of Armenia.

Taking into account the relationship of inflation and other key economic indicators, consistent and systematic steps are needed to ensure the economic security and improve the effectiveness of monetary policy.

ԵՏՍ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՑԻՆ ՈԼՈՐՏԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՈՒՐՎԱԳԻԾ

*Գայանե Հարությունյան**

Բանալի բառեր. Եվրասիական տնտեսական միություն, դրամավարկային քաղաքականություն, գնաճ, փոխարժեք, վերաֆինանսավորման տոկոսադրույք, դրամայնացում:

Տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացներում սովորաբար առանցքային նշանակություն է ստանում դրամավարկային համաձայնեցված քաղաքականության հիմնախնդիրը: Այս առնչությամբ սպասելիքներն ու հնարավորությունները մեծապես պայմանավորված են ինտեգրացիոն գործընթացների հետանկարային զարգացման սահմաններով և այն հանգամանքով, թե որքանով են առաջարկվող մոտեցումները համապատասխանում ազգային տնտեսություններում առկա իրողություններին ու տնտեսական մերձեցման աստիճանին:

Միասնական դրամավարկային քաղաքականության իրականացումն անդամ պետությունների կողմից առավելապես բնորոշ է տնտեսական ինտեգրացիայի բավական ուշ փուլերին, երբ, ըստ էության, տնտեսական համագործակցության բոլոր մյուս ոլորտներում հասանելի են դարձել տնտեսական քաղաքականության առավելագույն ներդաշնակեցումը և համաձայնեցումը: Այս առումով, եվրասիական տնտեսական ինտեգրացիան զոնե ներկա փուլում արժույթային միության ստեղծում չի ենթադրում, հետևաբար, չեն նախատեսվում նաև միասնական արժույթի ներդրման, միասնական կենտրոնական բանկի հիմնադրման և միասնական դրամավարկային քաղաքականության իրականացման համար համապատասխան միջոցառումներ: Սակայն տնտեսական ինտեգրացիայի յուրաքանչյուր փուլի հատուկ է արժույթային համագործակցության այնպիսի խնդիրների լուծում, որոնք բխում են ինտե-

*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, բաժնի վարիչ:

գրացիայի տվյալ մակարդակի պահանջներից: Միաժամանակ պետք է ընդունել, որ արժութային համաձայնեցված և կոորդինացված քաղաքականության իրականացումն օբյեկտիվ անհրաժեշտություն է նաև տնտեսական ինտեգրացիայի ներկա փուլում, երբ կարևորվում են փոխադարձ ներդրումների և դրամական փոխանցումների ժամանակ արժութային սահմանափակումների վերացումը և արժութային գործարքների իրականացման միանման սկզբունքների կիրառումը: Դրամավարկային ոլորտում (մասնավորապես փոխարժեքի և տոկոսադրույքի քաղաքականությունների) էական տարբերություններն ազգային տնտեսություններում կարող են լուրջ խոչընդոտ հանդիսանալ ԵՏՄ շրջանակներում ուղենշային համարվող «չորս ազատությունների» հասնելու համար: Դրամավարկային դաշտը չափազանց ընդգրկուն է, սահմանները հաճախ տարրալուծվում են տնտեսության ամենատարբեր ոլորտներում, ինչը խիստ կարևոր է դարձնում ինտեգրացիոն զարգացումների արդյունքում հնարավոր փոփոխությունների վերլուծությունը:

ԵՏՄ հիմնադիր պայմանագրում դրամավարկային ոլորտին առնչվում են 14-րդ՝ «Արժութային քաղաքականություն» (որտեղ արտացոլված մոտեցումներն առավել կոնկրետացված են Հավելված 15-ում) և 16-րդ՝ «Ֆինանսական շուկաների կարգավորում» (Հավելված 17-ի հետ միասին) բաժինները: Այսպես, Բաժին 14-ի Հոդված 64-ը սահմանում է արժութային քաղաքականության համաձայնեցման սկզբունքները.

- արժութային քաղաքականության ձևավորման և իրականացման մոտեցումների ներդաշնակեցում և մոտարկում,
- անհրաժեշտ կազմակերպարավական հիմքերի ստեղծում՝ արժութային ոլորտում ինտեգրացիոն գործընթացների զարգացման համար,
- ներքին և միջազգային շուկաներում ազգային արժույթների նկատմամբ վստահության և փոխադարձ փոխարկելիության ապահովմանն ուղղված քաղաքականության իրականացում և այլն:

Ինչ վերաբերում է կոնկրետ փոխարժեքի քաղաքականությանը, ապա այս ուղղությամբ կոորդինացումն իրականացվելու է առանձին մարմնի կողմից, որի անդամներ են հանդիսանալու անդամ պետությունների ԿԲ-ների ղեկավարները, և որի գործունեության կարգը սահմանվելու է միության ներսում գործող միջազգային պայմանագրերով (ԵՏՄ Պայմանագիր, 64-րդ հոդ-

ված, 3-րդ կետ): Առաջարկվող սկզբունքներն առավելապես ենթադրում են արժույթային վերահսկողության և կարգավորման ոլորտում օրենսդրության ներդաշնակեցում, ինչպես նաև՝ ազգային արժույթների նկատմամբ վստահության ամրապնդում միության ներսում գործարքների իրականացման ժամանակ: Վերջինս մասնավորապես, նշանակում է, որ ԵՏՄ անդամ երկրների միջև փոխադարձ հաշվարկները պետք է իրականացվեն ազգային արժույթներով:

Ինչպես ազգային մակարդակում, այնպես էլ ինտեգրացիոն կառույցի ներսում արդյունավետ դրամավարկային քաղաքականության իրականացման համար չափազանց կարևոր է զարգացած ֆինանսական շուկայի առկայությունը: Իրողություն է այն, որ եվրասիական տնտեսական տարածքի այս տիրույթում որոշակի վակուում գոյություն ունի (մասնավորապես, պասիվ բորսայական շուկայի իմաստով), և այդ ուղղությամբ անդամ պետությունների տնտեսական ինտեգրացիայի խորացումը կարող է դրական մեծ էֆեկտ ունենալ բոլոր կողմերի համար: ԵՏՄ Պայմանագրի 16-րդ բաժնի 70-րդ հոդվածը սահմանում է ֆինանսական շուկաների համաձայնեցված կարգավորման նպատակներն ու սկզբունքները, որոնք առաջին հերթին նախատեսում են ֆինանսական ընդհանուր շուկայի ստեղծում, ինչը ենթադրում է ֆինանսական համակարգում գործող սուբյեկտների գործունեության արտոնագրերի փոխադարձ ընդունում, ֆինանսական շուկաներում ռիսկերի կառավարման մոտեցումների համաձայնեցում, տեղեկատվության փոխանակություն: Նախատեսված բոլոր միջոցառումների հետևանքները ԵՏՄ անդամ պետություններից յուրաքանչյուրի համար կախված է առավելապես այդ տիրույթում առկա ելակետային պայմաններից՝ դրամավարկային քաղաքականության գործող ռեժիմից, փոխարժեքի ռեժիմից, վերաֆինանսավորման տոկոսադրույքից, տնտեսության կապիտալիզացիայի և փողայնացման ցուցանիշներից:

ԵՏՄ անդամ բոլոր պետություններում դրամավարկային քաղաքականության հիմնական նպատակը գների կայունության ապահովումն է, ինչը ենթադրում է գնաճի զսպում որոշակի միջակայքում¹: Դրան զուգահեռ՝ երկր-

¹ Երկրների դրամավարկային քաղաքականությունների առանձնահատկությունների ուսումնասիրությունն իրականացվել է հրապարակված պաշտոնական տեղեկատվության հիման վրա. Հայաստանի համար՝ Գնաճի հաշվետվություն (Դրամավարկային քաղաքականության ծրագիր, 4-րդ եռամսյակ 2014թ.), Բելառուսի համար՝ «2015թ. դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղությունների հաստատման մասին» նախագահի հրամանագիր, Ղազախստանի համար՝ «2015թ. Ղազախստանի Հանրապետության դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին» Ազգային բանկի որոշումը, Ռուսաստանի համար՝ «Միասնական պետական դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղությունները 2014 թվականին և 2015-2016թթ. ժամանակահատվածում»:

ների կենտրոնական բանկերի կողմից հայտարարվում են նաև այլ գերակա նպատակներ. այսպես, Բելառուսի Ազգային բանկը շեշտում է նաև երկրի ոսկու-արտարժուրթային պաշարների պահպանման անհրաժեշտությունը՝ վերջինս կարևոր դիտելով երկրի տնտեսական անվտանգության տեսանկյունից, իսկ Ղազախստանի Ազգային բանկը դրամավարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման համար ընդգծում է ֆինանսական համակարգի կայունության, ինչպես նաև՝ տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացներին (մասնավորապես՝ Եվրասիական միասնական տնտեսական տարածքի շրջանակներում) մասնակցելու կարևորությունը:

Աղյուսակ 1

Տարեկան գնաճը (%-ներով) ԵՏՄ երկրներում¹

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
Հայաստան	7.0	0.6	3.0	4.6	9.0	3.5	7.3	7.7	2.6	6.2	3.0 ²
Բելառուս	18.1	10.3	7.0	8.4	14.8	13.0	7.8	53.3	59.1	19.0	16.2 ³
Ռուսաստան	10.9	12.7	9.7	9.0	14.1	11.7	6.9	8.4	5.1	6.8	11.4 ⁴
Ղազախստան	7.1	7.9	8.6	10.8	17.2	7.4	7.1	8.3	5.1	5.8	7.4 ⁵
Ղրղզստան	4.1	4.3	5.6	10.2	24.5	6.8	7.8	16.6	2.7	6.8	7.5 ⁶

Ֆինանսական կայունությունը, այսինքն՝ ֆինանսական համակարգի անխափան և արդյունավետ աշխատանքը, դրամավարկային քաղաքականության իրականացման կարևոր նախապայման է հայտարարվում նաև Ռուսաստանի բանկի կողմից: Ինչ վերաբերում է Հայաստանի Կենտրոնական բանկին, ապա վերջինս գնաճային սպասումներում և կանխատեսումներում նույնպես մեծ կարևորություն է տալիս Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցության հետևանքներին:

¹ Աղբյուրը՝ CIA World Factbook. <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/index.html>

² ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն:

³ Բելառուսի Հանրապետության ազգային վիճակագրական կոմիտե:

⁴ Федеральная служба государственной статистики РФ.

⁵ Ղազախստանի Հանրապետության ազգային տնտեսության նախարարության վիճակագրական կոմիտե:

⁶ Ղրղզստանի Հանրապետության ազգային վիճակագրական կոմիտե: Էքսպրես տեղեկատվություն: Հունվար 2015թ.:

Հայաստանը ԱՊՀ երկրների շարքում առաջինն (2006թ.) է անցում կատարել *գնաճի նպատակադրման ռազմավարության*¹ մինչ այդ կիրառվող փողի ագրեգատների նպատակադրման քաղաքականությունից: ԵՏՄ անդամ պետությունների գնաճի ցուցանիշները վերջին 10 տարիների համար բերված են *Աղյուսակ 1*-ում, որը վկայում է գնաճի նպատակադրման ռազմավարության առավելությունների մասին: Ի դեպ, տարբեր տնտեսագետների վերլուծությունները [1] նույնպես ցույց են տալիս, որ գնաճը նպատակադրող երկրները հիմնականում ավելի մեծ հնարավորություն ունեն ապահովել ֆիսկալ կարգավորվածության բարձր աստիճան, ճկուն փոխարժեք, արտարժույթային զգալի պաշարներ: Այս առնչությամբ Հայաստանի մասին դատողությունները ենթակա են որոշակի վերապահումների՝ պայմանավորված օբյեկտիվ բազմաթիվ գործոններով (այդ թվում՝ տնտեսության անարդյունավետ կառուցվածք, առևտրային հաշվի հսկայական բացասական հաշվեկշիռ, արտասահմանյան դրամական փոխանցումներից զգալի կախվածություն և այլն), ինչպես նաև՝ վարվող թանկ փողերի քաղաքականությամբ:

2015թ. գնաճի նպատակադրման ռազմավարությանը լրիվ անցում է կատարել նաև Ռուսաստանը, որտեղ մինչ այդ գործում էր առանց ակնհայտ անվանական խարսխի ռազմավարությունը: Ընդ որում, 2015թ. համար գնաճային թիրախ է սահմանվել տարեկան 4.5%, իսկ 2016 թվականից սկսած՝ Ռուսաստանի բանկը սահմանել է կայուն 4% թիրախ, որից շեղման միջակայքը 1.5% է: Հիշենք, որ ԵՏՄ պայմանագիրը պարտավորեցնում է անդամ պետություններին ճշգրտել գնաճի մակարդակը, որը չպետք է գերազանցի ամենացածր գնաճ արձանագրած գործընկեր պետության ցուցանիշն ավելի քան 5%-ով: Նման մոտեցումը ենթադրում է գնաճի նպատակադրման աստիճանական անցում նաև ԵՏՄ մյուս պետություններում:

Արդեն 2015թ. հունվարի՝ Բելառուսի Ազգային բանկի տեղեկատվական հաղորդագրություններում հստակ նշվում է այդ ուղղությամբ դրամավարկային քաղաքականության ռազմավարական մոտեցումների փոփոխության մասին¹: Նկատենք, որ մինչ այդ այնտեղ կիրառվում էր փոխարժեքի նպատակադրման ռազմավարությունը, որի ներքո բելառուսական ռուբլու փոխարժեքը սկզբում ամրակցված էր ամերիկյան դոլարին, հետո (2007 թվականից)

¹ Информационное сообщение об отдельных вопросах денежно-кредитной политики, <http://www.nbrb.by/Press/?nId=1116>

ռուսական ռուբլուն և ամերիկյան դոլարին, իսկ ավելի ուշ (2009 թվականից)՝ արժույթային զամբյուղին, որտեղ ռուբլուց ու դոլարից բացի ներկայացված էր նաև եվրոն: Բելառուսի վերաբերյալ *Աղյուսակ 2*-ի տվյալները ցույց են տալիս, որ դրամավարկային նման ռազմավարությունն իրեն չի արդարացրել, և դիտարկված 10-ամյա հատվածում այդ երկիրը մշտապես գնաճի լուրջ հիմնախնդիր է ունեցել: Ենթադրվում է, որ գնաճի նպատակադրումը և դրամավարկային քաղաքականության կոորդինացումը ԵՏՄ շրջանակներում պետք է միտված լինի հատկապես այդ հիմնախնդրի առաջնահերթ լուծմանը:

Աղյուսակ 2

Վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերջին 14 արժեքները ԵՏՄ պետություններում¹

Հայաստան		Բելառուս		Ռուսաստան		Ղազախստան		Ղրղզստան ²	
06.11.2012	8	13.03.2013	28.5	30.04.2010	8	31.10.2010	7	29.01.2014	4.11
13.08.2013	8.5	17.04.2013	27	01.06.2010	7.75	30.11.2010	7	05.02.2014	4.11
12.11.2013	8	15.05.2013	25	25.02.2011	8	31.12.2010	7	12.02.2014	4.13
24.12.2013	7.75	10.06.2013	23.5	29.04.2011	8.25	31.01.2011	7	19.02.2014	4.18
11.02.2014	7.5	12.11.2013	23.5	26.12.2011	8	09.03.2011	7.5	27.02.2014	4.47
13.05.2014	7.25	29.11.2013	23.5	14.09.2012	8.25	30.04.2011	7.5	01.03.2014	6
24.06.2014	7	13.12.2013	23.5	13.09.2013	5.5 ³	01.07.2011	7.5	31.07.2014	6.5
12.08.2014	6.75	12.02.2014	23.5	03.03.2014	7	01.10.2011	7.5	26.08.2014	6.5
23.09.2014	6.75	12.03.2014	23.5	25.04.2014	7.5	14.02.2012	7	29.09.2014	7
11.11.2014	6.75	16.04.2014	22.5	25.07.2014	8	02.04.2012	6.5	30.09.2014	7
03.12.2014	6.75	19.05.2014	21.5	05.11.2014	9.5	04.06.2012	6	28.10.2014	9
23.12.2014	8.5	16.07.2014	20.5	11.12.2014	10.5	06.08.2012	5.5	25.11.2014	10
22.01.2015	9.5	13.08.2014	20	16.12.2014	17	01.04.2013	5.5	30.12.2014	10.5
10.02.2015	10.5	09.01.2015	25	02.02.2015	15	22.10.2013	5.5	27.01.2015	11


¹ Աղբյուրը՝ http://cbonds.ru/indexes/indexdetail/?group_id=139.

² Ղրղզստանում օգտագործվում է «հաշվարկային դրույք» տնտեսագիտական եզրը, որը նույնական է «վերաֆինանսավորման տոկոսադրույքի» հետ:

³ Ռուսաստանում վերաֆինանսավորման տոկոսադրույքի ցուցանիշները ներկայացված են մինչև 2012թ. սեպտեմբերը, արդեն 2013թ. սեպտեմբերից ներկայացվում է Ռուսաստանի ԿԲ-ի, այսպես կոչված, հիմնական դրույքաչափը (*ключевая ставка*), որը հանդես է գալիս միաժամանակ որպես տոկոսադրույք, որով ԿԲ-ն 7-օրյա վարկեր է տրամադրում առևտրային բանկերին և ընդունում է նրանցից դեպոզիտներ: Նախատեսվում է, որ մինչև 2016թ. հունվարը, Ռուսաստանի ԿԲ-ն այս գործիքին կամրակցի նաև վերաֆինանսավորման տոկոսադրույքը, և դրանց արժեքները կհավասարվեն:

Գծապատկեր 1

ԵՏՄ անդամ պետությունների փոխարժեքների դինամիկան 2010-2015թթ.



Դրամավարկային քաղաքականության յուրահատուկ ռեժիմ (բազմատեսակ անվանական խարխիսներով [2]) գործում էր նաև Ղազախստանում, որտեղ թեև ժամանակ առ ժամանակ կիրառվել է գնաճի նպատակադրում, սակայն դրամավարկային քաղաքականությունում միշտ գերակշռել է դրամական ազդեցատների նպատակադրումը: 2015թ. դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին Ղազախստանի կառավարության և Ազգային բանկի համատեղ հայտարարությամբ այս պետությունը նույնպես վերջնական անցում կատարեց գնաճի նպատակադրման ռազմավարությանը՝ սկզբնապես նպատակ սահմանելով զսպել գնաճը պլանավորված 6-8% միջակայքում, իսկ այնուհետև աստիճանաբար նվազեցնել գնաճային սպասումները: Առանց ակնհայտ անվանական խարխիսի դրամավարկային քաղաքականությունից գնաճի նպատակադրման է անցել նաև Ղրղզստանը, որտեղ 2015թ. համար գնաճային թիրախ է սահմանվել 7% մակարդակը:

Այսպիսով, դրամավարկային քաղաքականության համաձայնեցման նախնական քայլերը ԵՏՄ շրջանակներում, ըստ էության, արդեն իրականացված են: Սկզբունքային առումով Հայաստանում այս ուղղությամբ որևէ փոփոխություն չի ակնկալվում: Նույնը կարելի է ասել նաև *փոխարժեքի քաղաքականության առնչությամբ*: Հիմնավորված է, որ գնաճի նպատակադրման ռազմավարությունը սովորաբար պետք է ուղեկցվի արժույթի լողացող փոխարժեքի ռեժիմով՝ հնարավորություն տալով Կենտրոնական բանկին ինքնուրույն և անկախ դրամավարկային քաղաքականություն իրականացնել (որպես Մանդելի «անհնարին երրորդության» տեսության հետևանք): Հայաստանում ազատ լողացող փոխարժեքի ռեժիմի մասին պաշտոնապես հայտարարվել է դեռևս 1996թ., թեև հետագա գրեթե բոլոր տարիներին ԿԲ-ն իրականում որոշակի ինտերվենցիաներ կատարել է արժույթային շուկայում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ղազախստանում և Ղրղզստանում նույնպես գործում է ազատ լողացող փոխարժեքի ռեժիմ, իսկ Ռուսաստանը (որտեղ դեռ 2014թ. կիրառվում էր կառավարվող լողացող փոխարժեքի ռեժիմ) պլանավորել է 2015թ. աստիճանաբար անցում կատարել այդ ռեժիմին¹, կարելի է համարել, որ ԵՏՄ շրջանակներում կոորդինացված արժույթային քաղաքականության անհրաժեշտությունը Բելառուսին նույնպես կմղի կառավարվող

¹ Основные направления единой государственной денежно-кредитной политики на 2015 год и период 2016 и 2017 годов. Центральный банк Российской Федерации (Банк России).

լողացող փոխարժեքից անցում կատարել ազատ լողացող փոխարժեքի: Ի դեպ, փոխարժեքի քաղաքականության համաձայնեցման պահանջը՝ փոխարժեքների տատանումները մեղմելու, ազգային արժույթի նկատմամբ վստահությունն ամրապնդելու և երկրի ոսկու-արտարժույթային պաշարների ճիշտ կառավարման նկատառումներով, խիստ արդարացված է: Ուսումնասիրելով ԵՏՄ անդամ երկրների ազգային արժույթների փոխարժեքների դինամիկան (*Գծապատկեր 1*)՝ կարող ենք արձանագրել, որ վերջին տարիներին դրանց տատանողականությունն ավելի մեծ է եղել ռուսական ռուբլու նկատմամբ, քան ամերիկյան դոլարի: Իհարկե, դա որոշ չափով նաև փոխարժեքների ներկայացման համար ընտրված սանդղակների տարբերության արդյունք է (որքան փոքր է ընտրված սանդղակի քայլը, այնքան ակնառու են տատանումները), սակայն ընդհանուր առմամբ, դրա հիմնական պատճառն այն է, որ դիտարկվող պետությունները, թեև ոչ պաշտոնապես, ամրակցել են իրենց արժույթը հատկապես ամերիկյան դոլարին, որպես խարիսխ, ինտերվենցիաներ կատարել արտարժույթի շուկայում՝ զգալի տատանումներից խուսափելու համար: Բացի այդ, փոխարժեքների նման դինամիկան վկայում է այն մասին, որ, այնուամենայնիվ, առկա են զգալի տարբերություններ ԵՏՄ անդամ պետությունների տնտեսական զարգացման մակարդակների, ներքին արժույթային և ֆինանսական շուկաների ծավալների և գործիքների, մակրոտնտեսական կարգավորման և կայունության ապահովման մոտեցումների միջև, հետևաբար նաև՝ տարբեր են շուկայական բազմաբնույթ իրավիճակներում այդ երկրների արձագանքները և տնտեսական պահվածքը: Փոխարժեքների նման էական տատանողականությունն, անշուշտ, կարող է խոչընդոտել կայուն և կանխատեսելի առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը ինտեգրացիոն կառույցի ներսում:

Ավելին, վերջին ժամանակահատվածում (սկսած 2014թ. դեկտեմբերից) ռուսական ռուբլու, ապա դրան հաջորդած մյուս ազգային արժույթների էական արժեզրկումները բացահայտեցին ԵՏՄ անդամ պետությունների տնտեսական փոխսերտաճման նոր հարթություն, որտեղ տնտեսական փոփոխությունների հետևանքները դրսևորվում են ոչ թե որոշակի ժամանակային լագով, այլ անմիջապես, գրեթե միաժամանակ Ռուսաստանում տեղի ունեցող փոփոխությունների հետ: Դա պայմանավորված է ինչպես տնտեսական, այնպես էլ ոչ տնտեսական բազմաթիվ պատճառներով, մասնավորա-


պես՝ Ռուսաստանը հանդիսանում է ԵՏՄ անդամ մյուս պետությունների գլխավոր առևտրային և ներդրումային գործընկերը (Ղրղզստանի պարագայում՝ երկրորդը Ղազախստանից հետո), ընդ որում՝ վերջիններիս արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքի թույլ դիվերսիֆիկացիայի և Ռուսաստանից ներկրման մեջ ռազմավարական նշանակության ապրանքների մեծ տեսակարար կշռի պայմաններում: Բացի այդ, Ռուսաստանից դեպի դիտարկվող երկրներ են հոսում հսկայածավալ գործոնային եկամուտներ՝ պայմանավորված աշխատանքային միգրանտների մեծ թվով: Նման իրավիճակում համաձայնեցված արժույթային քաղաքականությունը կարող է կարևոր նախապայման դառնալ բոլոր հնարավոր բացասական դրսևորումների արդյունավետ հաղթահարման համար: Այս համատեքստում հատկապես կարևորվում է անդամ երկրների ռեզիդենտների միջև փոխադարձ հաշվարկների իրականացման ժամանակ ազգային արժույթների լայն կիրառման պայմանագրային պահանջը: Վերջինս, ԵՏՄ անդամ երկրների արտահանման հնարավորությունների աճին զուգահեռ, կարող է ապահովել ազգային արժույթների նկատմամբ պահանջարկի և վստահության աճ, արժույթային գնագոյացման առավել առողջ և արդյունավետ մեխանիզմ և մասնակի փոխարկելիություն ԵՏՄ տարածքում:

Դրամավարկային քաղաքականության կարևորագույն ինդիկատորներից է նաև *վերաֆինանսավորման տոկոսադրույքը*: Որպես կենտրոնական բանկի կողմից օգտագործվող արդյունավետ գործիք՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքի դերը հատկապես մեծ է այն երկրներում, որոնք անցել են գնաճի նպատակադրման ռազմավարությանը, քանի որ տոկոսադրույք-գնաճի կանխատեսված մակարդակ փոխանցման շղթան, առաջին հայացքից, ներկայանում է որպես հնարավոր ամենակարճը: Ինչ խոսք, իսկապես գոյություն ունի որոշակի կապ գնաճի և վերաֆինանսավորման տոկոսադրույքի միջև, համենայնդեպս զարգացած երկրների մեծամասնությունում տոկոսադրույքը չի գերազանցում գնաճի տարեկան ցուցանիշը, ինչը բացատրվում է նրանով, որ տնտեսության համար նպաստավոր բանկային տոկոսադրույքների և միջին շահութաբերության օպտիմալ տարբերությունն ուղղակիորեն պայմանավորված է վերաֆինանսավորման տոկոսադրույքի և գնաճի տարբերությամբ [3]: Մյուս կողմից, իրողություն է նաև այն, որ բարձր վերաֆինանսավորման տոկոսադրույքը գնաճը զսպող հզոր հանգամանք է:

Սակայն ոչ երկարաժամկետ. այս պարագայում արդեն վերաֆինանսավորման բարձր տոկոսադրույքը հանգեցնում է ավելի բարձր բանկային տոկոսադրույքի, որն էլ, իր հերթին, արտադրանքի ինքնարժեքի աճի և հետևաբար՝ նաև ծախքերի գնաճի [4]: Վերլուծենք, թե ինչպես են ԵՏՄ անդամ պետությունները հաղթահարում դրամավարկային ոլորտում դրսևորվող այս հակասությունը: Ուսումնասիրվող երկրներում վերաֆինանսավորման տոկոսադրույքների վերջին 14 ցուցանիշները ներկայացված են *Աղյուսակ 2*-ում, իսկ 2013-ից հետո գրանցված հիմնական փոփոխություններն ընդհանրացված կերպով ներկայացված են *Գծապատկեր 2*-ում:

Գծապատկեր 2

Վերաֆինանսավորման տոկոսադրույք¹ (%)



Վերլուծելով բերված տվյալները և համադրելով դրանք *Աղյուսակ 1*-ում բերված գնաճի ցուցանիշների հետ՝ կարելի է եզրակացնել, որ, ընդհանուր առմամբ, բոլոր պետություններում դրամավարկային քաղաքականությունը կողմնորոշված է եղել գնաճի զսպման կարճաժամկետ խնդիրների լուծմանը, ինչի արդյունքում էլ վերաֆինանսավորման տոկոսադրույքի մասով դրամա-

¹ Աղբյուրը՝ http://cbonds.ru/indexes/indexdetail/?group_id=139.

վարկային քաղաքականությունը կոշտ է եղել: Ասվածն արդարացի է հատկապես Բելառուսի առնչությամբ, որտեղ ուսումնասիրվող ցուցանիշն ամենաբարձրն է եղել: 2012-ից հետո դիտարկվող ժամանակաշրջանում, որոշ բացառություններով (օրինակ, Բելառուսում 2012թ. առաջին քառորդում), գրեթե բոլոր երկրներում վերաֆինանսավորման տոկոսադրույքը գերազանցել է գնաճի ցուցանիշը: Այդ տարբերությունը բավական մեծ է եղել հատկապես Հայաստանի համար, ինչը որոշակի իմաստով կարելի է բացասական համարել՝ հաշվի առնելով այն, որ դա տնտեսական աճին խոչընդոտող հանգամանք է, բացի այդ, նեղանում են, որպես դրամավարկային քաղաքականության գործիք, վերաֆինանսավորման տոկոսադրույքի օգտագործման սահմանները՝ հնարավոր անբարենպաստ տնտեսական իրավիճակներում: Այս տեսանկյունից բավական հաջողված կարելի է համարել Ղազախստանի քաղաքականությունը, որտեղ տոկոսադրույքն աստիճանաբար նվազեցվել է և ի վերջո հաստատվել 5,5%-ի սահմաններում: Հատկանշական է, որ այդ ցուցանիշը չի փոխվել նաև 2014թ. դեկտեմբերին, թեև գնաճային զարգացումները և փոխարժեքի տատանումներն այս երկիրը նույնպես չեն շրջանցել, մինչդեռ բոլոր մյուս երկրները բավական բարձրացրել են գործիքի շեմը:


Հարկ է նշել, որ Ղազախստանը նույնպես 2013 թվականից փորձում է իրականացնել նոր տոկոսադրույքի քաղաքականություն, որտեղ որպես բազային կողմնորոշիչ ծառայելու է *հիմնական դրույքաչափը* (ՌԴ նմանությամբ), որը ձևավորվում է կարճաժամկետ գործիքների շուկայում, և որը հավակնում է դառնալ հակագնաճային քաղաքականության հիմնական գործիք այդ երկրում¹: Ի դեպ, եթե տնտեսական ինտեգրացիայի նախօրյակին դրամավարկային քաղաքականության գործիքակազմում նմանատիպ փոփոխություններ են տեղի ունենում ինտեգրացիոն կառույցի երկու առաջատար երկրներում, ապա ակնկալելի է, որ դրամավարկային քաղաքականության կոորդինացման համատեքստում այդ գործիքը լայն կիրառում գտնի նաև այլ անդամ պետություններում, ինչը վերջիններիս տնտեսության համար ռիսկային պայմաններում դրամավարկային արագ արձագանքման և կարգավորման հնարավորություն կտա՝ միաժամանակ մեծ ճնշում չգործադրելով գնաճային զարգացումների ուղղությամբ: Նշենք, որ դա առաջին հերթին

¹ Основные направления денежно-кредитной политики Республики Казахстан на 2014 год, <http://www.nationalbank.kz/?docid=1459&switch=russian>

պահանջում է ֆինանսական շուկայի զարգացածության որոշակի աստիճան, և իմաստ ունի կիրառել միայն այդ դեպքում, քանի որ այդ գործիքի ազդեցության մեխանիզմը զգալի մասով միջնորդավորված է պետական ու կորպորատիվ պարտատուների շուկայով: Չպետք է անտեսել նաև արտաքին շուկայում գների (հատկապես ռազմավարական հումքի) տատանումներից կախվածության, ինչպես նաև ազգային արժույթի փոխարկելիության գործոնները: Պատահական չէ, որ վերաֆինանսավորման տոկոսադրույքն ավելի ցածր է զարգացած տնտեսությունն ունեցող երկրներում, որոնց արժույթը փոխարկելի է և ունի կայուն պահանջարկ: Հետևաբար, ընդհանուր միտում պիտի լինի այս ցուցանիշի աստիճանական նվազեցումը, հատկապես կայուն անվտանգ գնաճի պայմաններում:

Գծապատկեր 3

Դրամայնացման գործակիցը ԵՏՄ անդամ երկրներում (%-ներով ՀՆԱ-ի նկատմամբ)¹



¹ Դիագրամի ստացման համար տվյալները հաշվարկվել են հեղինակի կողմից՝ Համաշխարհային բանկի կայքում (<http://data.worldbank.org/indicator/>) առկա վիճակագրական տեղեկատվության հիման վրա: Դիագրամում Դրդգստանը ներկայացված չէ, քանի որ վիճակագրական աղբյուրներում բացակայում են այդ երկրի մասին ամբողջական և համադրելի տվյալները:

Դրամավարկային ոլորտում փոխարժեք-տոկոսադրույք-գնաձ փոխկապակցված շղթան փակ շրջան չի կազմում, այլ տարածվում է ամբողջ տնտեսության ոլորտներով՝ իր որոշիչ ազդեցությունը թողնելով տնտեսական աճի վրա: Ուստի, որպես փոխկապակցված համակարգ, կարևոր է նաև հարկաբյուջետային քաղաքականության հետ կոորդինացման հիմնախնդիրը: Այստեղ հիմնական կապող օղակը դրամայնացման (մոնետիզացիայի) մակարդակն է տնտեսությունում, որը ցույց է տալիս դրամական միջոցներով տնտեսության ապահովվածության աստիճանը, պետության ներքին պարտքի հնարավորության սահմանները, պետական բյուջեով հաստատված սոցիալական ծրագրերն իրականացնելու հնարավորությունները և այլն: Միաժամանակ, այն նաև դրամավարկային քաղաքականության արդյունավետության կարևոր ինդիկատոր է, քանի որ, վերջին հաշվով, այս ցուցանիշի միջոցով է փոխանցվում դրամավարկային քաղաքականության ազդեցությունը տնտեսական աճի (ՀՆԱ-ի) վրա: ԵՏՄ պետություններում դրամայնացման մակարդակի դինամիկան ներկայացված է *Գծապատկեր 3*-ում:

Ինչպես և ակնկալելի է, դրամայնացման մակարդակն ամենաբարձրը Ռուսաստանում է, և դա ունի օբյեկտիվ պատճառներ: Նախ, այն տնտեսապես առավել զարգացած ԵՏՄ անդամն է, և միակը, որի ազգային արժույթը փոխարկելի է: Սակայն այլ զարգացած երկրների համեմատ, Ռուսաստանի ցուցանիշը նույնպես չի կարելի բարձր համարել (օրինակ, Ճապոնիայում այն գերազանցում է 200-ը, իսկ Չինաստանում՝ 150): Փողայնացման ցածր մակարդակը դիտարկվող երկրներում հիմնականում պայմանավորված է տնտեսության դոլարայնացման բարձր աստիճանով, տեղական արժույթի նկատմամբ ցածր վստահությամբ, ֆինանսական շուկայի թերզարգացածությամբ: Կարևոր միտում է ցուցանիշի աստիճանական աճը, բացառությամբ 2008թ.՝ պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությամբ: Դրամայնացման մակարդակի աստիճանական բարձրացումը հիմնավորված է գնաձի զսպման տրամաբանությամբ: Փոքրինչ առանձնահատուկ է Ղազախստանի օրինակը, որտեղ 2009 թվականից հետո ցուցանիշի անկում է գրանցվել: Մեր գնահատմամբ, դրա պատճառը վերաֆինանսավորման հարաբերականորեն կայուն դրույքաչափի պայմաններում M2 փողի ազրեզատի մեծացման զգուշավորությունն է (դարձյալ գնաձի զսպման նպատակով), քանի որ իրականում M2-ն ավելի դանդաղ է

աճել, քան ՀՆԱ-ն: Ինչ վերաբերում է Բելառուսում 2012-2013թթ. նկատված անկմանը, ապա այստեղ արդեն կարելի է որոշիչ համարել վերաֆինանսավորման խիստ բարձր տոկոսադրույքը (2011թ. վերջին քառորդին այն 45% էր), որը չէր կարող չանդրադառնալ դրամայնացման մակարդակի վրա: Բացի այդ, նախորդող ժամանակաշրջանում դրսևորված գնաճի բավական բարձր ցուցանիշները (2011թ.՝ 53.3, 2012թ.՝ 59.1) ազգային արժույթից «փախուստի» որոշակի դաշտ են ստեղծել այս երկրում: Հակառակ իրավիճակն է դիտարկվել Հայաստանում, որտեղ գնաճի զսպման քաղաքականությունը հնարավորություն է տվել էապես բարելավել մոնետիզացիայի ցուցանիշը, թեև այն դեռևս շարունակում է բավական ցածր մնալ: Նկատենք, որ ԵՏՄ բոլոր երկրներում 2014թ. արձանագրվել է մոնետիզացիայի մակարդակի անկում՝ պայմանավորված հիմնականում տարեվերջին այդ երկրների ազգային արժույթների կտրուկ արժեզրկմամբ ամերիկյան դոլարի նկատմամբ:

ԵՏՄ-ին անդամակցությունից հետո նախատեսվող փոփոխությունները՝ գնաճի վերահսկում, փոխարժեքի և տոկոսադրույքի քաղաքականության համաձայնեցում, ազգային արժույթների լայն կիրառում փոխադարձ հաշվարկներում, ֆինանսական ընդհանուր շուկայի և դրա զարգացման համար նախապայմանների ստեղծում և այլն, կարող են էապես նպաստել Հայաստանում դրամայնացման մակարդակի բարձրացմանը, դոլարայնացման մակարդակի կրճատմանը, դրամի նկատմամբ վստահության ամրապնդմանը, փոխարժեքի տատանողականության կրճատմանը, տնտեսական ռիսկային իրավիճակներում դրամավարկային կարգավորիչի դերի մեծացմանը, հետևաբար նաև՝ տնտեսական աճին: Դժվար է այս առնչությամբ որոշակի քանակական գնահատական տալ, քանի որ նախանշվող փոփոխություններն առայժմ միայն նախատեսում են «որակական» բարելավումներ անդամ պետությունների դրամավարկային ոլորտներում: Սակայն փոփոխությունների ընտրված վեկտորը հիմնավորված է օրինաչափ տնտեսական կախվածություններով և ենթադրում է դրական արդյունքներ:

Հոկտեմբեր, 2015թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Irineu de Carvalho Filho*, Inflation Targeting and the Crisis: An Empirical Assessment. January 2010.
2. *Шахнович М.Р.*, Денежная политика стран СНГ. Проблемы современной экономики, N 3 (31), 2009.
3. *Ա.Թավադյան*, Գնաճի արդյունավետ կառավարման փուլերը: Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում (Հանրապետական գիտաժողովի նյութեր, Գիրք 2), 2012թ., էջ 50-51:
4. *А. Тавадян*, Интервалы неопределенности экономики. Москва, Наука, 2012, с. 82.

ԵՏՄ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՍՏՎԱՐԿԱՅԻՆ ՈՒՈՐՏԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՈՒՐՎԱԳԻԾ

Գայանե Հարությունյան

Ամփոփագիր

Հոդվածը դիտարկում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների դրամավարկային ոլորտի հնարավոր փոփոխությունները՝ այդ կառույցին անդամակցելուց հետո: ԵՏՄ շրջանակներում նախատեսվող բոլոր միջոցառումների հետևանքները կախված են այդ տիրույթում առկա ելակետային պայմաններից՝ դրամավարկային քաղաքականության ռեժիմից, փոխարժեքի ռեժիմից, վերաֆինանսավորման տոկոսադրույքից, տնտեսության կապիտալացման և դրամայնացման ցուցանիշներից: Հենց այս գործոնների վերլուծությամբ էլ տրվել են հնարավոր փոփոխությունների գնահատականները:

ОБЗОР ВОЗМОЖНЫХ РАЗВИТИЙ В ДЕНЕЖНО-КРЕДИТНОЙ СФЕРЕ В РАМКАХ ЕАЭС

Гаянэ Арутюнян

Резюме

В статье рассматриваются возможные изменения в денежно-кредитной сфере в странах-членах ЕАЭС вследствие присоединения к этой интеграционной структуре. Последствия всех предусмотренных мероприятий для каждого из государств-членов ЕАЭС зависят в большей степени от исходных условий, существующих в этой сфере: действующего режима денежно-кредитной политики, режима обменного курса, ставки рефинансирования, капитализации и монетизации экономики. Именно по этим направлениям проведен анализ и дана оценка возможных изменений.

AN OUTLINE OF POSSIBLE DEVELOPMENTS IN THE MONETARY SYSTEM WITHIN THE FRAMEWORK OF EAEU

Gayane Harutyunyan

Resume

The article discusses possible changes in the monetary system of the EAEU member-states as a result of the accession to this integration structure. The effects of the intended measures for each of EAEU members largely depend on the initial conditions in this area: the current regime of monetary policy, exchange rate regime, the refinancing rate, capitalization and monetization of the economy. The analysis was carried out for these very directions and the potential changes were evaluated in the article.

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՃԱՆԱԶՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ
ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ (1991-2015ԹԹ.)**

*Մտալ Մարդարյան**

*Բանալի բաներ*¹ ցեղասպանություն, սփյուռք, Հայաստան, լոբբի, համայնք, Հայրենիք-Սփյուռք համագործակցություն, ճանաչում, դատապարտում:

Հայրենիքի և Սփյուռքի միջև համագործակցությունը հաստատվել է դեռևս 1918թ. մայիսի 28-ին հայոց պետականության վերականգնումից ի վեր: Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին՝ 1918-1920թթ., Հայրենիք-Սփյուռք համագործակցության օրակարգային հարցերն էին հայոց նորաստեղծ պետականության կայացումը, Հայ դատի խնդրի լուծումն Առաջին աշխարհամարտի ավարտից հետո տեղի ունեցող խաղաղության գործընթացում, արևմտահայ գաղթականության խնդիրների լուծումն ու հայրենադարձությունը:

Հայաստանի խորհրդայնացումից հետո Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների օրակարգը ենթարկվեց որոշակի փոփոխությունների: Ասպարեզից դուրս եկավ Հայ դատի համար միասնական պայքարի հարցը, քանի որ Խորհրդային Հայաստանն ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու հնարավորություն չունեց: Խորհրդային տարիներին Հայաստան-Սփյուռք գործակցությունը ծավալվում էր հայրենադարձության և հայրենի երկրի շենացմանը Սփյուռքի աջակցության հարցերում (Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման սկզբնական փուլում): Այնուամենայնիվ, խորհրդային տարիներին Հայաստան-Սփյուռք կապերը զարգանում էին հիմնականում կրթամշակութային ոլորտում: Այդ մասին է վկայում թեկուզ այն, որ Հայաստանում հատուկ Սփյուռքի հետ կապերի համար 1964թ. հիմնված պատկան մարմինը կոչվում էր Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե [1, էջ 729]:

¹ ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ:

Միայն 1988թ. ազգային վերագարթոնքի և 1991թ. Հայաստանի անկախացման արդյունքում նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների ընդլայնման և խորացման համար: Համակողմանիորեն սկսեց զարգանալ Հայաստան-Սփյուռք գործակցությունը հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային ոլորտներում [2, էջ 13-169]: Բազմաթիվ սփյուռքյան կազմակերպություններ եկան Հայաստան և սկսեցին իրենց գործունեությունը ծավալել այստեղ [2, էջ 13-26; 3, էջ 44-53, 79-107]:

Հայրենիք-Սփյուռք կապերի համակողմանի զարգացումն ու խորացումն առաջացրեց ու հասունացրեց առանձին պետական գերատեսչության մակարդակով Սփյուռքի հետ հարաբերությունների համար նախատեսված պետական կառույցի անհրաժեշտությունը: Արդյունքում՝ 2008թ. հոկտեմբերի 1-ին ստեղծվեց ՀՀ Սփյուռքի նախարարությունը:

Քաղաքական ոլորտում Սփյուռքի հայաստանանպաստ դերակատարությունը կայանում է արտաքին աշխարհում նրա շահերի պաշտպանության, այլ կերպ ասած՝ ՀՀ արտաքին քաղաքականության սպասարկման մեջ: Այս ոլորտում այլ ուղղությունների կողքին (Լեռնային Ղարաբաղի հակամարտություն, Հայաստանի ապաշրջափակում և այլն [4, էջ 55]) Հայրենիք-Սփյուռք համագործակցության առանցքային ուղղություններից մեկն է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման հարցը:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման խնդիրն առնչվում է Հայրենիք-Սփյուռք հարաբերություններին այնքանով, որքանով որ այդ հարաբերությունների միասնական օրակարգի առանցքային կետերից մեկն է: Բանն այն է, որ Հայոց ցեղասպանության միջազգային, այդ թվում նաև Թուրքիայի կողմից ճանաչումը ոչ միայն և ոչ այնքան պատմական արդարությունը վերականգնելու խնդիր է, որքան ազգային անվտանգության հարց Հայաստանի և Սփյուռքի համար: Ցեղասպանություն իրականացրած պետությունը ներկայումս էլ շարունակում է ագրեսիվ հակահայկական քաղաքականություն, և, հետևաբար, Հայոց ցեղասպանության ճանաչումից ու դատապարտումից հրաժարումը հղի է դրա կրկնության փորձերի վտանգով:

Եվ այդ է պատճառը, որ Սփյուռքի առանցքային կազմակերպությունները, հատկապես նրանք, որոնք իրականացնում են քաղաքական գործառույթներ, իրենց կարևոր խնդիրներից մեկն են համարում Հայոց ցեղասպանության

միջազգային ճանաչումն ու դատապարտումը: Օրինակ, դեռևս 2003թ. ստեղծված Համաշխարհային հայկական կոնգրեսի առնչությամբ Ռուսաստանի հայերի միության նախագահ Ա.Աբրահամյանը նշում է, որ դրա «...ստեղծման գլխավոր նպատակներից և, համապատասխանաբար, նրա խնդիրներից մեկը միջազգային հանրության կողմից Հայոց ցեղասպանության փաստի լիարժեք և վերջնական հաստատումն է՝ ներառյալ դրա ճանաչումը հենց Թուրքիայի կողմից...» [5, c. 103]:

Այն, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը Հայաստանի արտաքին քաղաքական նպատակներից մեկն է, ամրագրված է նաև իրավական փաստաթղթերով: 1990թ. օգոստոսի 23-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընդունած ՀՀ Անկախության հռչակագրի 11-րդ կետն այդ առնչությամբ ասում է. «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին»¹: 1995թ. հուլիսի 5-ին հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրության նախաբանում նշվում է, որ հայ ժողովուրդն ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը՝ հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները [6, էջ 3]: Իսկ Հայաստանի անկախության մասին հռչակագրում ամփոփված համազգային նպատակներից մեկն էլ, ինչպես տեսանք, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն է:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ առավել ընդարձակ փաստաթուղթ է 2015թ. հունվարի 29-ին ընդունված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը, որի 6-րդ կետն արտահայտում է Հայաստանի և հայ ժողովրդի միասնական կամքը՝ Հայոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչման հասնելու և ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում [7, էջ 5]:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման հարցում հայությունը հասել է նշանակալի հաջողությունների: Մինչև Հայաստանի անկախացումը (1991թ.) Սփյուռքի ջանքերով Հայոց ցեղասպանությունը ճանաչել էին Ուրուգվայը (1965թ.), Կիպրոսը (1975թ.), Եվրոպայի խորհր-

¹ Հռչակագիր Հայաստանի անկախության մասին, 23.08.1990, <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2602>

դարանը (1987թ.): Անկախությունից հետո այն ճանաչող երկրների քանակն էապես մեծացավ: Հայոց ցեղասպանությունը ճանաչեցին այնպիսի երկրներ, ինչպիսիք են Ռուսաստանը (1995թ.), Կանադան (1996թ.), Լիբանանը (1997թ.), Բելգիան (1998թ.), Հունաստանը (1999թ.), Իտալիան (2000թ.), Վատիկանը (2000թ.), Ֆրանսիան (2001թ.), Շվեյցարիան (2002թ.), Արգենտինան (2004թ.), Նիդերլանդները (2004թ.), Սլովակիան (2004թ.), Լեհաստանը (2005թ.), Լիտվան (2005թ.), Վենեսուելան (2005թ.), Չիլին (2007թ.), Շվեդիան (2010թ.), Բոլիվիան (2014թ.), Ավստրիան (2015թ.), Լյուքսեմբուրգը (2015թ.), Բրազիլիան (2015թ.)¹: Ընդ որում, Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկրներից Ֆրանսիան այն ճանաչել է օրենքի ուժով: Հայոց ցեղասպանությունը ճանաչել են նաև Եվրոպայի խորհուրդը և ՄԱԿ Խտրականության կանխարգելման և փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնաժողովը²:

Իհարկե, միամտություն է կարծել, թե Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում արձանագրված հաջողությունները պայմանավորված են զուտ Հայաստանի վարած արտաքին քաղաքականությամբ կամ Սփյուռքի գործադրած ջանքերով: Դրանք պայմանավորված են նաև այնպիսի գործոններով, ինչպիսիք են տարբեր պետությունների ավանդական հակասությունները Թուրքիայի հետ (օրինակ՝ Հունաստանի և Կիպրոսի պարագայում), գերտերությունների ռազմավարական շահերը (Ռուսաստանի և Ֆրանսիայի պարագայում), բարոյականության և մարդասիրության սկզբունքները քաղաքականության մեջ (Շվեյցարիայի, Բոլիվիայի և այլ երկրների պարագայում) և այլն:

Այնուամենայնիվ, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում ձեռքբերումներ չէին լինի կամ դրանք կլինեին անհամեմատ ավելի համեստ, եթե չլինեին Հայաստանի և Սփյուռքի գործադրած ջանքերն այդ ուղղությամբ:

Սփյուռքում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրով զբաղվում են հիմնականում հայկական լոբբիստական կառույցները՝ Ամերիկայի հայկական ազգային կոմիտեն³, Ամերիկայի հայկական համագումարը,

¹ <http://armeniangenocide100.org/states/>

² *Сатановский Е.*, Память в пустыне: к столетию турецкого геноцида армян, <http://vpk-news.ru/articles/23459>

³ Հայտնի է նաև ԱՄՆ Հայ դատի գրասենյակ անվամբ:

Եվրոպայում՝ Արդարության և ժողովրդավարության եվրո-հայկական միությունը, Եվրոպայի հայկական միությունների ֆորումը, Ֆրանսիայի Հայկական հարցի պաշտպանության կոմիտեն, Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհուրդը և այլն [8, cc. 71-72]: Այս կառույցների գործիքակազմը բավական լայն է՝ սկսած ցույցերից, երթերից, բողոքի այլ ակցիաներից, մամուլում հրապարակվող քարոզչական նյութերից ընդհուպ մինչև պետական իշխանության հաստատություններում (խորհրդարաններ) տարվող աշխատանքը:

Հոդվածի ծավալները թույլ չեն տալիս անդրադառնալ Հայոց ցեղասպանության ճանաչման յուրաքանչյուր դեպքի հանգամանքներին: Հետևաբար, Սփյուռքի դերն այդ հարցում ընդգծելու համար բերենք հետևյալ օրինակները: Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացում մեծ դեր խաղաց և ներկայումս էլ շարունակում է խաղալ Ֆրանսիայի Հայկական հարցի պաշտպանության կոմիտեի և Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի աշխատանքն այդ երկրի խորհրդարանի պատգամավորների, նախագահի թեկնածուների, նախագահների (Նիկոլա Սարկոզի, Ֆրանսուա Օլանդ) հետ օրենսդրական նախաձեռնությունների, դրանց աջակցման և այլ հարցերում: Կամ Եվրոպայի հայկական լոբբիստական կառույցների ջանքերով էր, որ Եվրախորհրդարանը 2005թ. սեպտեմբերի 28-ին ընդունած բանաձևով Հայոց ցեղասպանության ճանաչումը դարձրեց նախապայման Եվրոպական միությանը Թուրքիայի անդամակցության հարցում [8, cc. 70-74]:

Եվ վերջապես, կա՞րոյոք ավելի գորեղ փաստ՝ ցույց տալու Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում Սփյուռքի դերը, քան այն, որ հատկապես խոշոր հայկական համայնքներ ունեցող երկրներում (ԱՄՆ, Ֆրանսիա) նախագահի թեկնածուներն իրենց նախընտրական խոստումների մեջ ներառում են Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը կամ դրա ժխտման քրեականացումը:

Հայաստանի անկախության նվաճումից հետո Սփյուռքի՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված ջանքերին ավելացավ նաև Հայաստանի արտաքին քաղաքականությունն այդ ուղղությամբ: Իսկ եթե կա ընդհանուր նպատակ, ապա չի կարող չլինել նաև գործողությունների համատեղում և համակարգում: Մասնավորապես, արտերկրում ՀՀ դեսպանու-

թյունները ոչ միայն կոչված են ապահովելու դիվանագիտական հարաբերությունները Հայաստանի և այլ երկրների միջև, այլև անմիջական կապերի մեջ են տեղի հայ համայնքների ու նրանց կառույցների հետ: Արտերկրի ՀՀ դեսպանությունները գոնե խորհրդակցությունների մակարդակով համագործակցում են Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ ջանքեր գործադրող հայ համայնքների և նրանց կառույցների հետ՝ ապահովելով Հայրենիք-Սփյուռք փոխգործակցությունն ու համակարգված աշխատանքն այդ հարցում: Թերևս, հենց այս գործոնով է պայմանավորված Հայաստանի անկախացումից հետո Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում նկատված էական դրական տեղաշարժը:

Սփյուռքի և Հայաստանի ջանքերը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործում նպատակաուղղված են աշխարհի տարբեր երկրների կողմից Հայոց ցեղասպանությունն օրենքի կամ բանաձևի մակարդակով ճանաչելուն, իսկ այն երկրներում, որտեղ այն արդեն ճանաչվել է, դրա ժխտումը քրեականացնելուն, այսինքն՝ Հայոց ցեղասպանության ժխտման համար քրեական պատիժ սահմանելուն:

Այս հարցը հաջողությամբ լուծվել է Շվեյցարիայում, Սլովակիայում, Հունաստանում և Կիպրոսում: 2014թ. սեպտեմբերի 9-ին Հունաստանի խորհրդարանը փոփոխություն կատարեց «Այլատյացության դեմ պայքարի մասին» օրենքում, որով Հունաստանի տարածքում հայերի, հրեաների և Պոնտոսի հույների ցեղասպանությունների ժխտումը համարվում է քրեորեն պատժելի արարք¹: 2015թ. ապրիլի 2-ին Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենք ընդունեց Կիպրոսի խորհրդարանը²: Կիպրոսը դարձավ աշխարհի չորրորդ երկիրը՝ Շվեյցարիայից, Սլովակիայից և Հունաստանից հետո, որը քրեականացրեց Հայոց ցեղասպանության նկատմամբ մերժողականությունը:

Գործնականում Հայոց ցեղասպանության ժխտման քրեականացումն իր արտահայտությունը գտավ թուրք մերժողական գործիչ Դողու Փերինչեքին 2007թ. դատական կարգով հետապնդման ենթարկելու մեջ՝ Շվեյցարիայի

¹ Հունաստանում Ցեղասպանությունը ժխտողներն այսուհետ քրեական պատասխանատվության կենթարկվեն. օրենքն ընդունվեց, <http://www.panarmenian.net/arm/news/182321/>

² Կիպրոսի խորհրդարանը միաձայն ընդունել է Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծ, <http://www.aysor.am/am/news/2015/04/02/կիպրոս-ցեղասպանություն/929144>

տարածքում Հայոց ցեղասպանությունը ժխտելու համար: Ճիշտ է, հետագայում շվեյցարական դատարանի վճիռը բողոքարկվեց Մարդու իրավունքների եվրոպական դատարանում և բեկանվեց 2013թ. դեկտեմբերին¹, սակայն դրանով դատական գործընթացը չավարտվեց, քանի որ շվեյցարական կողմն էլ իր հերթին է բողոքարկել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը: Իսկ Հայաստանի Հանրապետությունն իր դիմումի համաձայն՝ որպես երրորդ կողմ, ներգրավվել է դատական գործընթացում: 2015թ. հունվարի 28-ին Ստրասբուրգի Մարդու իրավունքների եվրոպական դատարանում «Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի» գործով դատական նիստում Հայաստանի դիրքորոշումը ներկայացրեց գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը²: Նույն օրը դատարանի շենքի մոտ Եվրոպայի հայ երիտասարդությունը ցույց էր իրականացնում՝ արտահայտելով իր բողոքը Հայոց ցեղասպանության ժխտողականության դեմ: Այսպիսով, մի կողմից ՀՀ-ն՝ ի դեմս գլխավոր դատախազի, իսկ մյուս կողմից Սփյուռքը՝ ի դեմս Եվրոպայի հայ երիտասարդության, «Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի» դատական գործընթացի ժամանակ միասնաբար պայքարում էին Հայոց ցեղասպանության ժխտողականության դեմ: Սույն գործով Սփյուռքի ավանդը նաև այն է, որ վերջինիս ջանքերով դատական լուսմներին ներգրավվեցին միջազգային բարձրակարգ փաստաբաններ Ամալ Քլունին և Ջեֆրի Ռոբերտսոնը՝ հայկական կողմի շահերը պաշտպանելու համար³:

Ինչ վերաբերում է Ֆրանսիային, ապա այստեղ 2001թ. Հայոց ցեղասպանությունն օրենքի ուժով ճանաչվելուց հետո հայ համայնքը սկսեց ջանքեր գործադրել նաև դրա ժխտումը քրեականացնելու համար: Մի քանի տարի առաջ հայկական լոբբին գրեթե հասել էր ցանկալի արդյունքի: Ֆրանսիայի խորհրդարանի երկու պալատներն էլ՝ Ազգային ժողովը 2011թ., իսկ Սենատը՝ 2012թ., ընդունել էին Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքը: ՀՀ-ն նույնպես որոշակի դիվանագիտական ջանքեր էր գործադրել այդ օրենքի ընդունման համար: Սակայն Ֆրանսիայի Սահմանադրական դա-

¹ ՄԻԵԴ-ը բավարարել է Շվեյցարիայի դեմ Դոդու Փերինչեքի ներկայացրած հայցը՝ կապված Հայոց ցեղասպանության հետ, <http://168.am/2013/12/17/310603.html>

² ՄԻԵԴ-ում Դոդու Փերինչեքի գործով լուսմներն ավարտվեցին. «Արմենայրես», <http://168.am/2015/01/28/449939.html>

³ Գևորգ Կոստանյան. ՄԻԵԴ-ում ներկայացվեց ՀՀ կառավարության դիրքորոշումն ամբողջ ծավալով, <http://pastinfo.am/hy/node/61110>

տարանը հակասահմանադրական ճանաչեց այդ օրենքն այն հիմնավորմամբ, թե իբր դա հակասում է խոսքի ազատության իրավունքին: Այդ կերպ Հայոց ցեղասպանության ժխտումը քրեորեն դատապարտող օրենքի ընդունումը տապալվեց: Սակայն հայ համայնքը և հայկական լոբբին չհաշտվեցին այդ մտքի հետ և ջանում են Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող նոր օրենքի ընդունման համար: Խնդիրը պարբերաբար բարձրացվում է Ֆրանսիայի խորհրդարանում: Հուսադրող է նաև այն հանգամանքը, որ Հայոց ցեղասպանության ժխտման քրեականացումը եղել է Ֆրանսիայի ինչպես նախկին նախագահ Ն.Սարկոզիի, այնպես էլ ներկա նախագահ Ֆ.Օլանդի նախընտրական խոստումներից մեկը:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա, թեև վերջինիս նախագահներից Ռոնալդ Ռեյգանը 1981թ. ճանաչել է Հայոց ցեղասպանությունը, իսկ Կոնգրեսը երկու անգամ՝ 1975թ. և 1984թ., ընդունել է Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևեր [9, էջ 35], սակայն դա բավարար չէ այդ երկրի կողմից այն լիարժեք ճանաչված համարելու համար:

Հայ համայնքն ԱՄՆ-ում լոբբիստական գործունեության շնորհիվ զգալի ջանքեր է գործադրել այդ երկրի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ, և կան մասնակի կամ մարտավարական արդյունքների նաև այլ դրսևորումներ: Որպես այդպիսի արդյունք կարելի է մատնանշել այն, որ հայ համայնքի լոբբիստական ջանքերի շնորհիվ ԱՄՆ նախագահներն ամեն տարի ապրիլի 24-ին հանդես են գալիս հատուկ ուղերձով: Ճիշտ է, առ այսօր այդ ուղերձներում ԱՄՆ ոչ մի նախագահ չի օգտագործել «ցեղասպանություն» բառը, որն իրավաբանական եզրույթ է, և դրա օգտագործումը կնշանակի, որ ԱՄՆ-ը իրավաբանորեն ճանաչում է Հայոց ցեղասպանությունը, սակայն այդ ելույթներում հնչած մտքերն ու դատողությունները բնութագրում են հենց ցեղասպանություն երևույթը: Տալով ցեղասպանություն երևույթի բնութագրությունն իրենց ապրիլքսանչորսյան ելույթներում՝ ԱՄՆ նախագահները, այնուամենայնիվ, խուսափել են այն իրավաբանորեն արտահայտող եզրույթը կիրառելուց: Այլ կերպ ասած՝ ԱՄՆ նախագահները եզրույթի փոխարեն կիրառում են դրա սահմանումը: Այնուամենայնիվ, ցեղասպանության երևույթի բնութագրությունը Հայոց ցեղասպանության առնչությամբ ԱՄՆ նախագահների ամենամյա ապրիլքսանչորսյան ելույթներում նշանակում է, որ եթե ոչ

իրավաբանորեն, ապա գոնե բարոյական և մարդկային տեսակետից ԱՄՆ-ը՝ ի դեմս իր նախագահի, ճանաչում է Հայոց ցեղասպանությունը:

Դրա մասին է խոսում նաև այն, որ ԱՄՆ նախագահներն իրենց ելույթներում երբեմն փորձում են կիրառել «ցեղասպանություն» բառին համարժեք, թեկուզ ոչ իրավաբանական եզրույթներ: Հատկանշական է, մասնավորապես, ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի ապրիլյան շրջանի ելույթներում «Մեծ եղեռն» հասկացության կիրառումը «ցեղասպանություն» բառի փոխարեն: Ըստ հայր Լևոն Զեքյանի՝ «ցեղասպանություն» բառը հասարակ անուն է, որը բնութագրում է ընդհանուր երևույթը, իսկ «Մեծ եղեռն» հասկացությունը՝ հատուկ, որը բնութագրում է կոնկրետ Հայոց ցեղասպանությունը [տե՛ս 10, էջ 54-55]:

Ինչ վերաբերում է ԱՄՆ օրենսդիր մարմնում՝ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության ճանաչմանը, ապա հայկական լոբբիստական կառույցների ջանքերով այնտեղ մի քանի անգամ քննարկվել է այդ հարցը: Մասնավորապես, 2000թ., 2007թ. և 2010թ. Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձևերի նախագծեր են եղել Ներկայացուցիչների պալատում¹: Այդ բանաձևերն ընդունվել են վերջինիս Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից: Սակայն հետագայում դրանց վերջնական ընդունումը ձախողվել է Ներկայացուցիչների պալատի լիազուգու մար նիստի օրակարգում չընդգրկվելու պատճառով:

Հատկանշականն այն է, որ Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևերը ոչ թե մերժվել են ԱՄՆ օրենսդիր մարմնի կողմից, այլ պարզապես չեն քննարկվել, քանի որ չեն դրվել վերջինիս լիազուգու մար նիստերի օրակարգում: Իսկ դա բացատրվել է ժամանակի անհարմարությամբ՝ աշխարհաքաղաքական տվյալ իրադրության պայմաններում ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունները չարելու նկատառումներով:

Հարկ է նշել նաև, որ ԱՄՆ-ում, ինչպես նաև այլ երկրներում, հայ համայնքը ձգտում է հասնել Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանը ոչ միայն համապետական, տվյալ դեպքում՝ դաշնային իշխանությունների մակարդակով, այլև ավելի ցածր՝ առանձին նահանգների, քաղաքների մակարդակով: Ավելի ցածր մակարդակներով Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը դրվում է հայկական լոբբիի օրակարգում հատկա-

¹ ԱՄՆ խորհրդարանի՝ Կոնգրեսի ստորին պալատը:

պես այն դեպքերում, երբ համապետական մակարդակով այդ խնդրի լուծումը տևական ժամանակով հետաձգվում է:

Համապետականից ցածր մակարդակներով Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործում նշանակալի հաջողությունների է հասել հատկապես ամերիկահայ համայնքը: Ներկայումս ԱՄՆ 45 նահանգ արդեն ճանաչել է Հայոց ցեղասպանությունը: Իրավական առումով համապետականից ցածր մակարդակով Հայոց ցեղասպանության ճանաչումն, իհարկե, մեծ բան չի նշանակում: Եթե ԱՄՆ բոլոր նահանգներն էլ ճանաչեն Հայոց ցեղասպանությունը, դա չի նշանակի, որ ԱՄՆ-ը ճանաչում է այն: Այնուամենայնիվ, համապետականից ցածր մակարդակով Հայոց ցեղասպանության ճանաչումն ունի քարոզչական (հասարակական կարծիքի ձևավորման առումով), բարոյական և այլ նշանակություններ և, թերևս, քայլ առաջ է դեպի վերջնական՝ համապետական ճանաչման ճանապարհին:

Համապետականից ավելի ցածր մակարդակներում հայկական լոբբին ձգտում է հասնել ոչ միայն Հայոց ցեղասպանության ուղղակի ճանաչմանը, այսինքն՝ այն ճանաչող և դատապարտող օրենքի, բանաձևի կամ այլ փաստաթղթի ընդունմանը, այլ նաև անուղղակիորեն Հայոց ցեղասպանության ընդունմանը: Խոսքն այնպիսի փաստաթղթերի ընդունման մասին է, որոնք թեև չեն վերաբերում Հայոց ցեղասպանության ճանաչմանը և դատապարտմանը, սակայն ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվում են դրան: Օրինակ՝ 2014թ. օգոստոսին ԱՄՆ Կալիֆորնիայի նահանգի Սենատի ընդունած օրենքը, որով պահանջվում է նահանգի դպրոցներում պարտադիր ուսուցման թեմա դարձնել Հայոց ցեղասպանությունը¹: Այս և այլ փաստաթղթերի ընդունումն ուղղակիորեն կապված է ԱՄՆ Հայ դատի գրասենյակի՝ ամերիկյան տարբեր նահանգների խորհրդարաններում ծավալած ակտիվ գործունեության, մասնավորապես՝ պատգամավորների հետ տարվող աշխատանքի հետ (օրենսդրական նախաձեռնություններ, աջակցություն այդ նախաձեռնություններին և այլն):

Հայ համայնքները Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ուղղությամբ ակտիվ ջանքեր են գործադրում նաև Արևելքում, մասնավորապես Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում: Ճիշտ է, արևելյան

¹ Կալիֆորնիայի դպրոցներում կուսումնասիրեն Հայոց ցեղասպանությունը. օրենքը ստորագրվել է, <http://www.panarmenian.net/arm/news/182611/>

երկրներում լոբբինգի ինստիտուտն այնքան էլ կայացած և զարգացած չէ, որքան Արևմուտքում, ուստի, Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքները չեն կարող այնքան արդյունավետ լոբբիստական գործունեության միջոցով հասնել իրենց պետությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը և դատապարտմանը, որքան Արևմուտքի երկրներում: Սակայն դրա փոխարեն նրանք ունեն այլ առավելություն: Մերձավոր և Միջին Արևելքի որոշ երկրներում պետական-քաղաքական համակարգերը հիմնված են կրոնադավանական հիմքով բնակչության շերտավորման վրա, որտեղ բնակչության կրոնական և դավանական շերտերը հանդիսանում են պետականակիր հանրույթներ: Ըստ այդմ էլ՝ կրոնական և դավանական համայնքները բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ իրենց ունեցած տեսակարար կշռին համապատասխան քանակությամբ պատգամավորական տեղեր են ստանում խորհրդարաններում: Օրինակ՝ Լիբանանի խորհրդարանում հայերն ունեն վեց պատգամավորական տեղ, որոնցից հինգը պատկանում է հայ առաքելականներին, իսկ մեկը՝ հայ կաթողիկե համայնքին: Քանի որ հայավետարանականները զգալի թիվ են կազմում Լիբանանի ընդհանուր բողոքականների մեջ, ապա բողոքական համայնքին հատկացվող միակ պատգամավորական մանդատը ժամանակ առ ժամանակ ստանձնում է ազգությամբ հայ պատգամավոր (ավետարանական): Այդ կերպ Լիբանանի խորհրդարանում հայ պատգամավորների թիվը ժամանակ առ ժամանակ հասնում է յոթի [11, էջ 49-50]:

Այսպիսով, չնայած լոբբիստական գործունեության հնարավորությունների սահմանափակությանը, Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքները, շնորհիվ պետականակիր համայնքների իրենց կարգավիճակի և իշխանական մարմիններում ներկայացվածության, նույնպես ակտիվ են իրենց երկրների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցում և հասել են որոշակի արդյունքների: Լիբանանն արդեն ճանաչել է Հայոց ցեղասպանությունը 1997թ.: Իսկ Իրանի Իսլամական Հանրապետությունում հայ համայնքը տարբեր միջոցներով՝ ընդհուպ մինչև խորհրդարանում Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող օրինագծերի առաջաջումը, պայքարել և պայքարում է Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման համար: Հայ համայնքի ջանքերով խնդրին այնպիսի կարևորություն է հաղորդվել, որ այն անգամ գործոն է դարձել Իրանի

ներքաղաքական գործընթացներում: Այդ մասին է վկայում այն, որ 2005թ. Իրանի նախագահական ընտրություններում ապագա նախագահ Մ.Ահմադինեջադի (2005-2013թթ.) նախընտրական խոստումներից է եղել ընտրվելու դեպքում ճանաչել Հայոց ցեղասպանությունը [12, էջ 108]:

2015թ. լրացավ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը: Խորհրդանշական այդ տարեթիվը ենթադրում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման և հատուցման գործում մինչ այժմ անցած ճանապարհի գնահատում, իմաստավորում և հետագա անելիքների ուղենշում:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը և դրա պատշաճ նշման անհրաժեշտությունը նոր հորիզոններ են բացում այս ոլորտում Հայրենիք-Սփյուռք համագործակցության համար: Այդ նպատակով դեռևս 2011թ. ապրիլի 23-ին ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծվել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողով, որի աշխատանքներում ներգրավված են պետական և հասարակական-քաղաքական գործիչներ, մտավորականներ, հոգևորականներ ինչպես Հայաստանից, այնպես էլ Սփյուռքից¹: Սույն հանձնաժողովի ստեղծմամբ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործում Հայաստան-Սփյուռք համագործակցությունն ըստ էության բարձրացվեց ինստիտուցիոնալ մակարդակի, քանի որ Հայաստանը և Սփյուռքը գործում են մեկ կառույցի շրջանակներում: Այս հանգամանքը միանշանակ ենթադրում է գործողությունների ավելի մեծ համակարգվածություն, փոխադարձ տեղեկացվածության ավելի բարձր մակարդակ, ինչն էլ արդյունքում չի կարող իր դրական ազդեցությունը չունենալ Հայրենիք-Սփյուռք գործակցության արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

Հանձնաժողովը ծրագրել և իրականացնում է տարատեսակ միջոցառումներ Հայոց ցեղասպանության հարյուրամյա միջոցառումների կապակցությամբ, ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում, ինչպես համագային կամ խոշոր, այնպես էլ տեղական մասշտաբներով: Դրանցից մեկն էլ 2015թ. հունվարի 29-ին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրի [7, էջ 3-6] ընդունումն էր:

¹ Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողով ստեղծելու մասին, <http://www.genocide-museum.am/arm/24.04.2011-hramanagir.php>

2015թ. Հայոց ցեղասպանությունը ճանաչեց ևս երեք երկիր՝ Լյուքսեմբուրգը, Ավստրիան և Բրազիլիան: Մեկ այլ երկիր՝ Կիպրոսը, ընդունեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենք: Միջազգային կառույցներից Եվրախորհրդարանը կրկին ճանաչեց Հայոց ցեղասպանությունը՝ վերահաստատելով դեռևս 1987թ. հաստատած իր դիրքորոշումն այդ հարցի նկատմամբ:

Եվ թերևս, ամենակարևորը. ապրիլի 12-ին Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում Հայոց ցեղասպանությանը նվիրված պատարագի ժամանակ, որը հեռարձակվում էր ուղիղ եթերով, Հռոմի պապ Ֆրանցիսկոս Առաջինն իր ելույթում համայն աշխարհի առջև երկու անգամ կրկնեց «ցեղասպանություն» բառը՝ այդ կերպ ի լուր աշխարհի և մասնավորապես՝ 1.2 միլիոն կաթողիկեների վերահաստատելով Վատիկանի (Հռոմեական Կաթողիկե եկեղեցու) դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում: Այդ պատարագին մասնակցում էին նաև հայության ղեկավար ներկայացուցիչները թե՛ Հայաստանից և թե՛ Սփյուռքից: Այսպես, պատարագին մասնակցում էր ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Դրան մասնակցում էին և քարոզներով հանդես եկան նաև Հայաստանի և Սփյուռքի հոգևոր առաջնորդները՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն (նստավայրը՝ Անթիլիաս, Լիբանան) և Հայ Կաթողիկե կաթողիկոս պատրիարք Ներսես Պետրոս ԺԹ-ն (նստավայրը՝ Չմմառ, Լիբանան):

Ապրիլի 23-ին հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ ունեցած ելույթում Գերմանիայի նախագահ Յոահիմ Գաուկն ընդունեց Հայոց ցեղասպանությունը՝ կիրառելով այդ եզրույթն իր խոսքում: Այդ օրերին Հայոց ցեղասպանությունը ճանաչող օրինագիծը մտավ Գերմանիայի խորհրդարան՝ Բունդեսթագ: Առաջիկայում սպասվում է վերջինիս քվեարկությունը:

Իսկ ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդի բարձունքում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հարգելու էին եկել աշխարհի ավելի քան 60 երկրների բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնց թվում 4 երկրների նախագահներ՝ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը, Սերբիայի նախագահ Տոմիսլավ Նիկոլիչը և Կիպրոսի նախագահ Նիկոս Անաստասիադիսը:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ընթացքում գրանցված հաջողությունները կարելի է բացատրել նաև վերը թվարկված գործոններով:

Սակայն դրանք չէին լինի կամ կլինեին անհամեմատ նվազ չափով, եթե այդ հարցում չլինեին Հայաստանի և Մփյուռքի համատեղ գործադրած ջանքերը: Հոդվածի ծավալները թույլ չեն տալիս առանձին անդրադառնալ յուրաքանչյուր դեպքի հանգամանքներին: Հետևաբար, Հայաստանի և Մփյուռքի գործադրած ջանքերը ցույց տալու համար անդրադառնանք մի քանի փաստերի: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված պատարագին Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում Հռոմի պապի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը նախորդել է հսկայական աշխատանք Վատիկանում ՀՀ դեսպանության և Հայ Կաթողիկե եկեղեցու կողմից: Եվ այդ գործում մեծ է ինչպես ՀՀ դեսպան Միքայել Մինասյանի, այնպես էլ Հայ Կաթողիկե կաթողիկոս պատրիարք Ներսես Պետրոս ԺԹ-ի դերը: Հատկապես կարևոր են եղել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նախօրեին վերջինիս այցելությունները Վատիկան և բանակցությունները Հռոմի պապի հետ:

Ինչ վերաբերում է ապրիլի 24-ին Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի այցելությանը Ծիծեռնակաբերդ և Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին մատուցած հարգանքի տուրքին, ապա դրան նախորդել են Ֆրանսիայի հայ համայնքի հանդիպումները վերջինիս հետ, որոնց ընթացքում է Ֆրանսիայի նախագահը խոստացել 2015թ. ապրիլի 24-ին ժամանել Երևան:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովը, որպես Հայրենիք-Մփյուռք համագործակցության ձևաչափ, արդեն ապացուցել է իր արդյունավետությունը: Հետևաբար, նպատակահարմար է, որ Հայրենիք-Մփյուռք համագործակցության այս ինստիտուցիոնալ մեխանիզմը 2015 թվականից հետո էլ, թեկուզ այլ անվանմամբ, շարունակի գործել: Հանձնաժողովի հետագա գործունեության վերաբերյալ գաղափար արդեն հնչել է ՀՀ նախագահ Ս.Սարգսյանի կողմից 2014թ. սեպտեմբերի 19-20-ը Երևանում անցկացված Հայրենիք-Մփյուռք 5-րդ համաժողովի ժամանակ: Նախագահն առաջարկեց «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովը 2015թ. վերանվանել «Համահայկական խորհուրդ», որը կդառնա համահայկական հրատապ խնդիրների քննարկման ազգային մշտական հարթակներից մեկը»¹: Փաստորեն, 2015 թվականից հետո, այս մոտեցման

¹ Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Հայաստան-Մփյուռք 5-րդ համաժողովում, <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2014/09/20/President-Serzh-Sargsyan-Armenia-Diaspora-conference/>

համաձայն, ոչ միայն փոփոխության է ենթարկվում հանձնաժողովի անվանումը, այլև ընդլայնվում են նրա գործունեության շրջանակները: Բացի Հայոց ցեղասպանության հետ առնչվող հարցերից, հանձնաժողովն իրավասու է լինելու քննարկել նաև համազգային այլ հրատապ խնդիրներ:

2015 թվականից հետո Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի գործունեության շարունակությունը, նրա կառուցվածքային և գործառնության վերափոխումները նոր որակ կհաղորդեն ինստիտուցիոնալ մակարդակով Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների զարգացմանը ինչպես Ցեղասպանության միջազգային ճանաչման, այնպես էլ այլ համազգային հարցերում:

Հուլիս, 2015թ.

Աղբյուրներ և գրականություն

1. «Հայ սփյուռք» հանրագիտարան, Եր., «Տիգրան Մեծ հրատարակչություն», 2003:
2. *Պետրոսյան Բ.*, Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1988-2001թթ., Եր., «Գիտություն», 2011:
3. *Մինասյան Է., Վարդանյան Ա.*, Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009թթ.), Ստեփանակերտ, «Պոլիգրաֆ», 2010:
4. *Հովյան Վ.*, Սփյուռքի դերակատարումը Հայաստանի համար, «Գլոբուս», թիվ 6, 2014, 55-63:
5. *Абрамян А.*, XXI век будет веком диалога цивилизаций, М., Теревинф, 2003.
6. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 05.07.1995, Եր., «Ամարաս», 2000:
7. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիր, 29.01.2015, «Պատմա-բանասիրական հանդես», 2015, թիվ 1, էջ 3-6:
8. *К.Ходжаян*, Роль и значение Европейского Парламента в деятельности армянских организаций Диаспоры, «21-й ВЕК», № 1, 2014, сс. 69-85.
9. *Նահապետյան Հ.*, Ո՞ր խորհրդարանն է առաջինը ճանաչել Հայոց ցեղասպանությունը, «Գլոբուս», թիվ 1, 2013, էջ 31-36:
10. *Արթուր Զ.*, Կոչ ներումի. թուրքերը դիմում են հայերին, Եր., «Ակտուալ արվեստ», 2011:
11. *Հովյան Վ.*, Լիբանանի հայ բողոքական համայնքը, «21-րդ դար», թիվ 4, 2010, էջ 49-65:
12. *Իսկանդարյան Գ.*, Իրանի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության նկատմամբ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXIV, 2005, էջ 101-110:

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՄԱՆ ՀԱՐՑԸ
ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՆՎՈՒՑԹՈՒՄ (1991-2015ԹԹ.)**

Ստալ Սարգսյան

Ամփոփագիր

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման խնդիրը Հայաստան-Սփյուռք գործակցության հիմնական ուղղություններից է: Այն, պատմական արդարության վերականգնումից բացի, հայության համար ունի նաև ազգային անվտանգության ապահովման նշանակություն:

Հայաստանի անկախացումից հետո Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը նոր թափ ստացավ՝ կապված այդ հարցում Հայրենիք-Սփյուռք համագործակցության հետ: Ներկայումս այն ճանաչվել է ավելի քան երկու տասնյակ պետությունների կողմից: Իսկ չորս երկրում (Շվեյցարիա, Սլովակիա, Հունաստան և Կիպրոս) Հայոց ցեղասպանության ժխտումը համարվում է քրեական հանցագործություն:

Հայոց ցեղասպանության հարյուրամյակին ընդառաջ դրա միջազգային ճանաչման և դատապարտման համար Հայաստան-Սփյուռք գործակցությունը բարձրացվեց ինստիտուցիոնալ մակարդակի: Այդ նպատակով ստեղծվեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողով՝ Հայաստանի պատկան մարմինների և Սփյուռքի կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ, որի գործունեությունը բարձրացրեց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար համազգային պայքարի արդյունավետությունը:

**ВОПРОС МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН
В КОНТЕКСТЕ СОТРУДНИЧЕСТВА АРМЕНИЯ-ДИАСПОРА (1991-2015ГГ.)**

Տալ Տարգարյան

Резюме

Задача достижения международного признания и осуждения Геноцида армян – одно из основных направлений сотрудничества Армения-Диаспора. Помимо восстановления исторической справедливости, она значима для армян и в плане обеспечения национальной безопасности.

После суверенизации Армении процесс международного признания Геноцида армян обрел новый размах, обусловленный сотрудничеством Армении и Диаспоры в данном вопросе. Сегодня Геноцид признан более чем двадцатью государствами, а в четырех странах (Швейцария, Словакия, Греция и Кипр) его отрицание считается уголовным преступлением.

В преддверии столетия Геноцида армян сотрудничество Армения-Дiaspora по вопросам международного признания и осуждения этого преступления против человечества было поднято на институциональный уровень. С этой целью была создана государственная комиссия, координирующая приуроченные к годовщине мероприятия и состоящая из представителей соответствующих структур РА и Диаспоры. Деятельность госкомиссии повысила эффективность общенациональной борьбы за международное признание Геноцида армян.

THE ISSUE OF THE INTERNATIONAL RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE IN THE EVOLUTION OF ARMENIA-DIASPORA COOPERATION (1991-1995)

Stal Sardaryan

Resume

International recognition and denunciation of the Armenian Genocide is one of the main directions of Armenia-Diaspora cooperation. In addition to restoring the historical justice, it also has a significant role in ensuring the national security.

After Armenia gained independence, the process of international recognition of the Armenian Genocide received a new momentum in relation to Armenia-Diaspora cooperation in this area. Currently about two dozen countries had recognized it, while in four countries (Switzerland, Slovakia, Greece and Cyprus) denial of Armenian Genocide has been outlawed.

Armenia-Diaspora cooperation in recognition and condemnation of the Armenian Genocide was institutionalized ahead of its 100th anniversary. For this purpose a government commission was established with participation of government bodies and representatives of Diaspora organizations in order to coordinate the events dedicated to the 100th anniversary of the Armenian Genocide. The activities of the commission increased the effectiveness of the pan-national efforts towards recognition of the Armenian Genocide.

ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

«21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱՐ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱՐ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen*» տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 15 էջը:
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը (*CV*), ինչպես նաև բանալի-բառեր:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա ամփոփագիր (հայերեն, ռուսերեն, անգլերեն):
4. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), շ. (ռուսերեն), ք. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, շ. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝
 - *Մարգարյան Ա.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
 - *Шарипова Р.*, Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, с. 15, М., 1986.
 - *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from <http://www.internews.ras.ru/books/media>, Sept. 28, 1998.
5. Ինտերնետային աղբյուրների հղումները ցանկալի է նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրություն

«21-ԲԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 28.10.2015թ.
Թիվ 6 (64), 2015թ.
Տպաքանակը՝ 200:

Թուղթը՝ կավճապատ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 8 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում